

Spezialausgabe Lectiones

quodlibet & disputaciones

quodlibet & disputaciones

9147.925

5-80



31 AUG 2007

05 SEP 2011


ՏԻԳՐԱՆԱԿԵՐՏԻ ՆԱՀԱՆԳԻ ԶԱՐԳԵՐԸ

ԵՒ

ՔԻՒՔՏԵՐՈՒ ԳԱԶԱՆՈՒԹԻՒՆՆԵՐԸ







ԹՈՎԱՍՍ Գ. ՄԿՐՏԻՉԵԱՆ

# ՏԻԳՐԱՆԱԿԵՐՏԻ ՆԱՅԱՆԳԻ ԶԱՐԴԵՐԸ

ԵՒ

## ՔԻԻՐՏԵՐՈՒ ԳԱԶԱՆՈՒԹԻՒՆՆԵՐԸ

(ԱՎԱՆԱՏԵՍԻ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ)



Գ Ր Ե Ց

ՔՈՎՄԱՍ Գ. ՄԿՐՏԻԶԵԱՆ

(ԱՆԳԼԻԱԿԱՆ ՆԱԽԿԻՆ ԴԵՐ-ՉԻՒՊԱՏՈՍ ՏԻԳՐԱՆԱԿԵՐՏԻ)



Տ Պ Ա Ր Ա Ն

ԳՐԻԳՈՐ ՀԻՉՍՆԵԱՆ

Գ Ա Հ Ի Ր Է

1919



63167-66



## ՆԱՄԱԿ ԿՆՈՋՍ

Սիրելի նաթեր,

Պաքուէն լոնտոն փախելէդ և հասնելէդ վերջ ըրած ինդրանքիդ տուած խոստմանս համեմատ կը զրկեմ քեզի տեղեկութիւններն ու լուրերը Տիգրանակերտի սարսափներու մասին, քաղուած՝ ականատեսներու պատմութիւնէն, զոր ատացած եմ երկու բնիկ Տիգրանակերտցիներէ և երկու Մարտինցիներէ: — Լեւոն Գասապեանէն՝ կրտսեր որդի Տիգրանակերտի ֆրանսական հիւպատոսարանի թարգման և զեր-հիւպատոս Հաճի Յարութիւն Գասապեանի, և նաև «Գաղազ» Յովհաննէս Տօնճեանի որդի՝ թովմասի օրագրութիւններէն: Վերջինը՝ թովմաս Տօնճեան, Տիգրանակերտ էր մինչև 1915 Յուլիս 18, և այն օրն իսկ կը տարազրուի և հրաշքով կը հասնի Հալէպ, ուր է հիմա: Գալով Լեւոն Գասապեանին՝ կը յաջողի մեծ ճարպիկութեամբ ծակէ ծակ պահուիլ և մնալ Տիգրանակերտ մինչև 1917 Դեկտեմբեր 7: Այդ օրը ծպտեալ քիւրտի հազուատով կը ձգէ Տիգրանակերտ, կը քալէ Մարտին, կ'երթայ Ռաս էլ-Այն և անկէ կ'անցնի Հալէպ: Հոս ամերիկեան հիւպատոսը Mr. Jackson, բարեկամ առապեալ Հայերու, շատ ազնուութեամբ կ'օգնէ Լեւոնին,

ամերիկեան փաստօրրով կը հովանաւորէ զինքը և կ'օգնէ իրեն Պէյրութ երթալու և մտնելու American Syrian Protestant College, իրը ուսանող: Շատ մը թափառումներէ վերջ Գահիրէ կը հասնի 16 Մարտ 1919ին: Մարտինցիներն են ճուլիա և Սէլմա՝ երկու քոյրեր, դուստր հանդուցեալ «Մուալիմ» Ապտիւլ Ահատ Իսրիրին, (յոյն բողոքական), վարժապետ ամերիկեան միսիօնարաց Մարտինի բարձրագոյն վարժարանին: Ասոնք կը ձգեն Մարտին 1918 Մայիսին և կ'երթան Հալէպ իրենց երեք զաւակներով ուր կը յուսան թէ ուսելու հաց մը պիտի կարենան ճարել: Վերջի տեղէն ալ եկան Գահիրէ 1919 Յունիս 2ին: Ասոնք չորան ալ զրքոյկիկ սարսափելի պարունակութիւնը ամբողջութեամբ հաստատելէն զատ կուտան այնպիսի սարսազդեցիկ լուրեր՝ որ մարդու վրայ խենդութիւն կը բերեն:

Չարմանալի է որ իրենք Տիպրանակերտի մէջ լսած են դէպի Գահիրէ փախիլ և ապահով հաննիլու: Ինչպէս նաև լսած են քու ալ վեց զաւակներով Ռուսիա փախչիլ ու ազատիլը: Խեղճերը շատ յոյս գրած են եղեր քու «Բաջն» Անդրանիկի միջոցաւ: Ընկիք ապագայ գործողութիւններու և օգնութիւններու վրայ: Կատավարութիւնը և բուլոր թիւրքերն ու Քիւրտերը կատարած են մեր փախուստը լսելով, և ահապ կրճտեր են: Բայց Հայերը «զարմացի», յուէս «սպչի» են և «հրաչք» կոչած են մեր ընտանեօք հրաչալի փախուստն ու ազատումը:

Շատ կը ցաւիմ որ չունիմ բարի և քաջալիրիչ լուրեր քեզի հաղորդելիք, այլ յուէս սրտաճմլիկ և սարսուղդեցիկ տեղեկութիւններ, որոնցմէ անտեղծակ չես արդէն, այլ հապա ահանատես ըլլալով անցած էք սարսափի և արիւնի այդ ճամբէն վեց զաւակներով միասին, բան մը որ խկապէս հրաչք է և արժանի է անոր համար փառք տալ Աստուծոյ հիմա և յախտեանս:

Ասկայն սիրտս ու հոգիս կը մաշի ազգիս պատահած

այս մեծ և աննախընթաց չարիքին ու անլուր պատու-  
հասին համար, որուն առջեւ պատմութիւնը կը սարսա-  
փի և մարդկութիւնը յաւիտեանս զզուանօք պիտի նայի  
այդ ջարդարար և ամբարիշտ Գերմանին, չնաբարոյ և  
զազանարարոյ թուրքերու վրայ՝ որոնք բովանդակ աշ-  
խարհը հուրի և սուրի մատնեցին:

Կարծեմ աւելորդ պիտի չըլլայ՝ որ ես ալ աւելցնեմ  
այս արժանահաւատ չորս վկաներու պատմութեանը վրայ  
ինչ որ տեսայ մինչև 1 Նոյեմբեր 1914, երբ ձգեցի  
Տիգրանակերտը և փախայ արտասահման:

Սիրալիբ յարգանքներով  
Թովմաս Գ. ՄԿՐՏԻՉԵԱՆ

Յուլիս 1919  
Գանձրէ,







Հայ կինը ազգային սարագով

## Պ Ա Տ Մ Ա Կ Ա Ն

ՀԱՅՆԵՐԸ ԱՆՅԵԼՈՅՆ ՄԷՋ ԽՆԴՐԱԾ ԵՆ ՄԻԱՅՆ.

ԱՊԱՀՈՎՈՒԹԻՒՆ ԱՆՁԻ ԵՒ ԻՆՁՔԻ

Վերջի երեք քառորդ դարու մէջ Հայերը տեսած են շատ մը հալածանքներ, կոտորածներ ու ջարդեր: Զէյթունի խռովութիւնները, 1862 թուականին, երբ բուռ մը Զէյթունցիք կը պաշարուին իրենց սեպ լեռներու արծիւի բոյներուն մէջ, և սակայն, երկար ժամանակ քաջաբար կը պաշտպանեն իրենք զիրենք մօտ յիսուն հազար թիւրք զինուորներէ բազկացեալ մեծ բանակի մը անդ յարձակման դէմ: Եւրոպական մեծ պետութիւնք կ'ստիպուին միջամտել, որուն իբր արգիւնք կարգ մը առանձնահարհեալ զիւրութիւններ կը արուին գիւցազն Զէյթունցիին:

Սասունի շարժումը 1893-1894: Յորում Սերոբ բաշան, «Բաջն» Անդրանիկ և Տամատեան բուռ մը սլեքֆնեռով Տալուորիկի, Շէնըք ու Սէմալի, Կէլիէ կուզայի, Անասօքի և Վըր-Վըր քարին մէջ արծիւներու պէս թառած հարստահարեալ և հալածական հայ գիւղացիները կը սրտապնդէին քիւրտ հրոսակներու — այս կիսավայրենի ցեղին — շարունակական ոտնձգութիւններուն դէմ: Կը լսէ Սուլթան Համիտ, զորք կը զրկէ, թնդանօթ ու շատ ազգամթերք, և ըստ քիւրտ աշիրէթիները՝ մարախնարու պէս կը յարձակին ու կը ծածկեն Սասունը: Ջարգ

ու կոտորած, կողպուտ ու աւերածէն կողմ... Սերոբ քաջային զուխը և քանի մը հազար անձի կորուստ ուշադրութիւնը կը գրառեն ժլատ Մեծ Պետութիւններուն, որոնց ներկայացուցիչները կը փութան Մուշ և Սուրբ Կարապետ Հեռութիւն՝ վեց վիլայեթներու բարեկարգում խրատելակը մէջտեղ կը գրուի .

Այս կարծեցեալ բարենորոգումներու խնդիրը կը յանդի վեց վիլայեթներու Հայերուն ընդհանուր կոտորածին, 1895ին, և Պոլսոյ ստանին մէջ պատահած Չարդերուն 1896ին, Բարենորոգումներու խրատելակը ստեղծող եւրոպական մեծ ու փոքր պետութիւններու յարգելի գեաղաններուն աչքին սաջև և անոնց պալատներուն քովիկը... Արդիւնք՝ երեք հարիւր հազար անձի կորուստ և նիւթական մեծ փճացում կ'արձանագրուի գիւնացիտական տամարներու և քաղաքակրթութեան մէջ:

Օսմանեան Սահմանադրութիւնը «Մեքուրիթ» հրատարակուեցաւ 1908 Յուլիս 23ին՝ Իսլամն ու Բայան, Հայն ու Թիւրքը, Աննառտն ու Քիւրթը, Արարն ու Հրէան, Բօշան ու Չինկեանէն ցնծացին ու պարեցին միասին և համբուրուեցան... Եկա Պոլսոյ երխտարդ Թիւրքերու — Իքիմասականներու — յեղափոխութիւնը 1909 Մարտ 31. «Կարմիր» Սուլթանը կործանեցաւ, զահազուրկ եկաւ: Յանկարծ կարմիր վարագոյր մը քաշուեցաւ Ասանայի մէջ: Նորէն Հայոց Չարդ, կոտորած, կողպուտ, ալան ու թալան... Անձի կորուստ երեսուն հազար հաշուեցին Մեծ Պետութիւններու բարեմոյն պաշտօնականներն ու ներկայացուցիչները: Իսկ ծովային ժարտանաւերու հրամանատարներն ալ չմոռցան լուսանկարելու գոհերու գիակները...:

Յիշե՛նք վերջին երկուք ու կէս գարու մէջ Օսմանեան կայսրութեան մէջ պատահած անց ու դարձերը, Թիւրքիտ ըսուած արիւնի ու աւերի երկրին մէջ սանձարձակ, կա-



մայական քաղաքական գործողութիւնները, ճնշումները, հարստահարութիւնները, Զարդերն ու կոտորածները... որոնց հետեւանքով հայ Ռշտունիք զաւանանքնին փոխելով Քիւրս Ռեճօրս աւիրէր անունը առին և չուզեցին ձգել իրենց օճախը: Բազրատունիք եղան ֆիւրս Պախրս աւիրէր, Մամիկոնեանք եղան Մամիկա, Ալեանները եղան Ալբա, Մոկացիք եղան Մոզկա և Մասխոս (Թօս-Ապահն) հայ ու սուրիանի բնակչութիւնը՝ ստաջնորդութեամբ «Նազուպի» Փաքրիք Իսմայէլի՝ հարկադրուեցան իրենց լոյս հաւատն ու կրօնը փոխել, և կազմեցին ֆիւրս Մանալլեմի պէկուքիւնը: Փաքրիք Իսմայիլ՝ կը կոչուի «Շէյխ» Իսմայիլ, և ինք պեանն ու զեկալարը կը մնայ իր իսլամացած, քրդացած ժողովուրդին: Այսպէսով մինչև հիմա կառչած մնացին իրենց լեռներուն ու սարերուն, սարի այս գծապղզ զաւակները, Հայկայ ցեղին այդ տըխուր բեկորները\*:

Սակայն Հայերը դժոխային այս բոլոր հոլովումներուն մէջ քրիստոնէական անյիշաչարութեամբ (ոմանք գուցէ ըսեն՝ ոչխարամօրէն) շարունակեցին մնալ և ապրիլ և ամենայն հաւատարմութեամբ Թիւրքին ըրած և շինած փլատակները շարունակ վերաշինեցին ու շէնցուցին: Ծաղկեցուցին սրուհաանն ու առեւտուրը և քաղաքական ալ մեծ ու կարեւոր ծառայութիւններ մատուցին Թիւրք ոճրագար իշխանութեան, յանձին Գազալ Յարութիւն և Տուզեան աւիրաներու, Գրիգոր Ազաթօն, Սէրվիչէն, Պալեան, Վարժապետեան Ներսէս և Յարութիւն պատրիարքներու, Յակոբ և Տատեան Արթին բաշաներու, Օտապաշեաններու, Օսեաններու, Փորթուզալեան բաշայի, պարուքնի պաւիլէր, Տօքթ. Նաֆիլեան բաշայի,

---

\* Սոյն ծանօթութեանց մասին աւելի ընդարձակ տեղեկութիւններ պիտի տանք յաւելուածով մը՝ զրքիս վերջը:

և ըն որոնք թիւրքիոյ վերածնումին մեծ գործաւորները եղան:

Հայերը երբեք չունեցան անջատողական ձգտում: Բայց, սակայն, բոլոր Հայութիւնը փափաքեցաւ, խորհեցաւ և խնդրեց ամենայն իրաւացիօրէն, միայն ու միայն սպանովութիւն անձի եւ ինչիւ, ու ոչ ուրիշ բան: Հայերու այս անմեղ ու բնական փափաքը և իրօքը, սակայն, նկատուեցաւ թիւրք իշխանութեան կողմէն ըմբոստութիւն, և առ այդ աններելի քայլեր առաւ, որուն իբր հետեւութիւն գուրս եկաւ հայ յեղափոխական մարմիններու գոյութիւնը: Ասոնք ջատագովները եղան ազգին պահանջներուն, պէտքերուն և իրաւունքներուն, և պաշտպանները հայ զիւղացիին, զլիսաորբար ընդդէմ քիւրս աւագակներու հարստահարութիւններուն և ճընշումներուն, ինչպէս նաև թիւրք կառավարութեան այս ոճիրները թոյլատարող կեղեքող անխիղճ պաշտօնեաներու:

Բայց Հայը ազգովին տկար էր և անկարող պաշտպանելու իր կենսական իրաւունքները: Եւ երիտասարդ յեղափոխականները անկազմակերպ և անբաւական ըլլալէ զատ, դեռ խակ ու անփորձ ալ փաստաբաններ էին, ազգին բազմադարեան դատը պաշտպանելու և Բեիլու լուծելու կարողութիւն ունեցող բարձրագոյն տտեանները մեծ Պետութիւններուն: Սակայն հայկական դատը, վեց վիլայեթներու բարեկուրդումի խնդիր ձեւին սակ միշտ մնաց եւրոպական դահլիճներու կանանչ սեղաններու վրայ անլոյծ ու քար-հանգոյց:

Հասաւ գահալիժօրէն համալսարնային աշխարհաստան պատերազմը 1914 Յուլիս 28ին: Աշխարհը դժոխքի կերպարանք հազաւ և մարդիկ զազանացան... , զիրար զերազանցեցին փարատելու և յօշոտելու մէջ... , ծովեր ու սիկէաններ, լիճեր ու գետեր կարմիր ներկուեցան, մարդկային արիւնը հոսեցաւ տարիներ... : Սակայն ո՛չ մի տեղ ու ո՛չ մի բան կրնայ զերազանցել բորենի թիւր-

քերու՝ Հայոց վրայ ի գործ դրած ճիւղալային հրէշու-  
թիւնը, փափուկ սեւին և անմեղ երախաներու հանդէպ  
ունեցած ճիւղալային ընթացքը՝ նմանը արձանագրուած  
չունի տակաւին պատմութեան էջերուն մէջ...

Գերմանն ու թիւրքը, մին եւրոպայի Հոնը, միւսը  
Ասիոյ Մոնկոլը, ամենաարժանի զինակիցներ, առաջինը  
Պելճիպայի մէջ, իսկ երկրորդը՝ Հայաստանի մէջ զիրար  
գերազանցեցին և զլեցին անցան վայրագութեան կողմէ:  
Գերմանները յանձին Հանի վիճէլմին, և զազան թիւր-  
քը առաջնորդութեամբ Իսթինաս վի: Թերագըր ձեմիլեքիին՝  
յախտեանս տառապեալ ազգերու նշովքին և անէծ-  
քին ենթակայ պիտի մընան, «մինչև ալ արև ջըլայ»:

63/67-67



## ՏԻԳՐԱՆԱԿԵՐՏԻ ՍԱՐՍԱՓՆԵՐԷՆ

«Սէֆէր Պէրլիֆ, ԱնՁ Վէ Սէվրի ԱՍՔէր»

ԶՕՐԱՇԱՐԺ, ԶՕՐԱՀԱԽԱՔ ԵՒ ԱՌԱՔՈՒՄ

1914 Օգոստոս 3 Երկուշաբթի օրը «Սէֆէր Պէրլիք»-ի (Զօրաշարժ) և հին «Ախլ վէ սէվրի սաքէր»-ի (զօրահաւաք և առաքում), Սուլթանական հրամանը հասաւ Տիգրանակերտ Առաջուց եղած գաղտնի և որոշ հրահանգներու և կարգադրութիւններու համաձայն՝ ինչպէս թիւրքիոյ ամէն անկիւնը, նոյնպէս և Տիգրանակերտ մէջ զսպանակէ լարուածի պէս անմիջապէս սկսաւ Զօրաշարժը, զինուորական եւ ու զեռը և զօրահաւաքը ամենուրեք։ Նոյն օրն իսկ, Օգոստոս 4, Երկուշաբթի օրը, հասաւ ուրիշ հեռագիր մը, որով ամբողջ թիւրքիան «Իտարէի էօրֆիյէ»-ի (պատերազմական վիճակ) մէջ ըլլալը կը յայտարարէր Այս թուականին կ'սկսի զուլումներու վրան բաց չըջանը։

«Թէֆէսլիֆի ՀԱՐՊԻՅԷ» — ՊԱՏԵՐԱԶՄԱԿԱՆ ՆՊԱՍՏ

«Թէքէալիֆի Հարպիյէ» (Պատերազմական Նպատ) հաւաքելու սրաշատով յանձնատողով մը անմիջապէս կազմուեցաւ «Ախլ վէ Սէվրի Ասքէր»-ի զինուորական յանձնախումբին կողքին, որուն ղեկավարները նշանակ-

ուեցան իթթիհատի գօմիթէին Տիգրանակերտի մասնա-  
ծիւղին պատասխանատու անօրէն «Աթթար» Հազար էֆ-  
և իթթիհատի «միւրազաս» ճրճիս ալա Զատէ Քօռ Եու-  
սուֆ պէյ, երկուքն ալ Տիգրանակերտցի «Թէքէալիֆի  
Հարպլիյէ»ի յանձնածողովը շուտով հեապրական հրամա-  
նաւ բացաւ իր մասնածիւղերը վիլայէթին ամէն մէկ  
անկիւնը: Այս յանձնածողովին գործն էր զինուորական  
պէսքերու անուսով գրաւել բոլոր հայ մեծաքանակ և  
փոքրաքանակ վաճառականներու ապրանքները, ամէն  
բան առանց բացատրիման. բրդեղէն և կտակեղէն պատ-  
րատի և հում ապրանքները, երկաթեղէն ու պղնձեղէն  
անօթներ և գործիքներ, շաքար, թէյ ու խահուէ, լուցկի  
և արէթ, ամէն տեսակ խղեր և քարիւղ, ցորեն, գարի,  
հաճար, բրինձ և բամպակ, ձի, ուղտ, նոսրց, ջարի և  
էշ, կով ու գամէշ, այծ, հզ ու ոչխար. կարպեաներ,  
գորգեր, վերմակ և անկողին անգամ հաւաքուեցան ու  
գրաւուեցան պատերազմովան պէսքի անուսով: Մէկ  
խօսքով, քանի մը ամուսն մէջ բոլոր հայ խանութ-  
ներն ու վաճառատուները՝ ցորենի և գարիի շտեմարան-  
ներն ու հորերը, գոմերն ու ակտոները վիլայէթի կեդ-  
րոնին և գաւառներու մէջ դատարկուեցան և հաւաք-  
ուեցան «Իթթիհատ վէթէրազար Գօմիթէ»ին և կտակա-  
բութեան շտեմարաններուն մէջ ու գրուեցան իթթիհատի  
նշանակած պաշտօնեաներու հսկողութեանը տակ: Ապ-  
րանքներու փոխարէն ընկալազիր մը կը տրուէր իթ-  
թիհատի անձանօթ գրաղիւրներէն մէկուն ստորադրու-  
թիւնը կրող, պատերազմէն վերջ փոխարժէքը ստանալու  
խոստումովը:

Այս միջոցին հայ արհեստագրներն ալ իրր տարա-  
պարհակ ձրխարար կը գործածուէին և կ'աշխատեցին  
զօրանոցներու շտեմարաններուն և գործարաններուն  
մէջ, նորոգութիւններու և շինութիւններու համար ի հա-  
շիւ քաղաքական և զինուորական իշխանութիւններուն:

### ՎԱԼԻ ԸՆԼԱՎ ՊԵՅ ԿՍՐԿԻԼԷ ՅՈՅՑ ՄԸ

Օգոստոս Յին Վալի ընլալ պէյին դացի և խնայուցի իրեն բարեկամօրէն թէ՛ ստոյգ ազրիւրէ ինծի լուր տըրուած էր որ իթթիհատի գօմիթէն պատրաստութիւն կը տեսնէր հետեւեալ օրը ցոյց մը ընել քաղաքին փողոցներուն և շուկային մէջ, ու յետոյ՝ անգլիական հիւպատոսարան գալ բողոքելու այն սրոշման պէմ՝ որով անգլիական կառավարութիւնը Բօրթ-Սմութի մէջ ի հաշիւ թիւրքիոյ շինուած «Սուլթան Օսման — Հիչ Եէնիլմէզ» և «Րէշապոլիչ» երկու արէթնօթները գրաւած ըլլալուն համար: Վալիին ուշադրութիւնը հրաւիրեցի Քիւրանբու պէս կիսավայրենի ժողովուրդի մը լիջոցով ասանկ ցոյցի մը ծանր հետեւութիւններուն հարստօրութեանը վրայ, որուն պատասխանատուն ինքը՝ բարեկամ վալի մը պիտի բռնուէր ընտանաբար և ո՛չ իթթիհատի գօմիթէն և կամ ժողովուրդը: Վալի ընլալ պէյ ստուգելով խնդիրը, արգիլել տուաւ ցոյցը:

### «Ինթիպալ Շիրքէթի»

### ՎԵՐԱՃՆՈՒԹԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ ՄԸ

Տիգրանակերտի վիլայէթին Հայութեան գերակշիռ զիրքը երկրին վաճառականութեան և ճարտարագործութեան մէջ, սկիզբէն ի վեր «Իթթիհատ վէ թէրագզը ձէմիլէթի»-ին ուշադրութեան առարկան եղած էր: Ուստի, 1910ի սկիզբները «Ինթիպալ Շիրքէթի» (վերածնութեան ընկերութիւն) անունով գրաւ իսլամ անգամներէ բազկացեալ ընկերութիւն մը հաստատուեցաւ իթթիհատի նախաձեռնութեամբ: Ասոնց նպատակն էր աշխատիլ և ամէն կերպով ու դնով Հայերու ձեռքէն հանել երկրին վաճառականութիւնն ու ճարտարարուեստը (Industry) և բոլոր գործարանները ու իրենք իրենց ձեռքն առնեն

վիւայէթին արտածումն (Export) ու ներածումը (Import), վիւայէթին նարատութեան բոլոր ազբւրները: Սակայն, իրենք անփորձ և անգիտակ, մա՛նաւանդ բնութեամբ անընդունակ և անյարմար ըլլալով այս կարգի գործառնութիւններու, այլ յաւէտ քիչ ու ջնջին աշխատութեամբ ապրիլ և զեղիս ու փարթամ կեանք անցնելու փարժուած ըլլալով չի կարողացան մրցիլ և կամ յազթել հայ վաճառականին, արհեստաւորին, ճարտարագէտի և զինանականի փորձ յամառ և զօրաւոր կամքին: Եւ ուստի ձախողեցան իրենց բուն նպատակին մէջ, սակայն, ընկերութիւնը շարունակեց և նպատակն ու ծրագիրը կը մնային սեղանի վրայ:

### ՇՈՒԿԱՅԻՆ ԼՐԿԻԶՈՒՄԸ

Թիւրքիան և հետեւաբար Տիւրանակերտի վիւայէթին ալ Պատերազմական վիճակի (Իտալիի էօրֆիլէ) ենթարկուած ըլլալով՝ յարմարագոյն առիթը առաւ «Ինթիպան շիրքէթի»-ին զեկալարներուն և անդամներուն՝ ինչ որ խելքով, անխնջ աշխատութեամբ և օրինաւոր ճամբով չի կրցան շահիլ, իրենց ազգային — բնածին, բիրտ ուժի — քանդումը — հանդամներով ձեռք բերել: Այս ընկերութեան նախագահը, փրբինճճի գառէ «Մէպուս» Ֆէյզի պէյի հրամանգով և Իթթինճատի որոշումով ծրագրուեցաւ հրդեհի տալ և մէկ անգամէն փճացնել Հայոց վաճառականութիւնը, ու չորցնել անոնց եկամուտի և ապրուստի ազբւրները: Այս ծրագիրը գործադրուեցաւ 1914 (Օգոստոս 15) թի զիշերը՝ Կէվրանլի գառէ «գոմիսէր» Մէմպուճ պէյի հրամանաւ և օժանդակութեամբ: Հինգ ժամու մէջ մոխիր գարձան 1080 խմնութ, 13 փուս, 3 խան և 14 «տիրէքխանէ» (ատաղձարան): Կատարութիւնն և Պէլէտիէն կը հաշուէին ընդհանուր փեսար 350,000 լիբրայի անոնի զուժարի մը համարմէք, և (Օգոստոս 31

Թիւ հեռազրով մը Պոլիս կ'իմացնէին Բայց անզլիական և ֆրանսական հիւպատոսները, ինչպէս նաև վաճառականները, այդ գումարը կէս միլիոն լիրա կը գնահատէին:

Կ'արժէ ուշադրութեան առնել սա բացատրիկ պարագան, որ իսլամ խանութպաններ, հազիւ թուով 60, կանխապէս ազգարարութեամբ ըլլալով իրենց ապրանքը սուս կրած և յապահովի գրած էին զիշերով:

### ԵՐԵՄՓՈՒՍԷՆ ՖԷՅՉԻ ՊԷՅ ԿԸ ԽՕՍԻ

1914 Օգոստոս 27ի Հինգշաբթի օրը, «Մէպուս» Ֆէյզի պէյի այցելութիւն մը տուի իր տանը մէջ, ուր ներկայ էր իր քեռին «Միւֆթի» Իսլամհիմ էֆնայ ալ Այդ օրը շատ աւելի երկար խօսեցանք շարունակելով այն վրճարանութիւնը, որ քանի մը օր առաջ անզլիական հիւպատոսարանին մէջ ունեցիր էինք իրեն ընկիր «Մէպուս» Բէմալ էֆնային (նախորդ «պէլէտիլէ բէխի») ներկայութեանը, ուր հրաւիրուած էին թէյ խմելու: Ֆէյզի պէյ, որ երեսութապէս կ'ուզէր միշտ բարեկամութիւն պահել անզլիական հիւպատոսարանի հետ, բայց իր ներքին խորհուրդներն ու զգացումները յայտնելու մէջ ոչ շատ խոհեմ, երբ հարցուցի իրեն թէ ի՞նչ կարծիք ունի ներկայ համեարակական պատերազմի մասին, թիւրքերն ալ պիտի խստնուին, ո՞ր կողմ յարիլ իրենց համար օգտակար է, ստանց այլեւայլի այսպէս խօսեցաւ Ֆէյզի պէյ: «Այս պատերազմը համաշխարհային պիտի ըլլայ: Գերմանները այնքան մեծ և ահեղ պատրաստութիւններ տեսած են այս պատերազմին համար, և այնքան գաղտնի զիւտեր ըրած ու հնարած են մահացուցիչ զործիքներ, թնդանօթ, սուսը, ընդծովեայ, օդանաւ, գրամ, զինուոր ևլն, այնքան պատրաստ կան որ, կասկած չի կ'այ թէ իրենք զերմանները պիտի շահին այս պատերազմը: Նախ Ֆրանսան՝ յետոյ Ռուսիան պիտի ճնշեն և ջախ-



Ջախեն, ու յետոյ Անգլիոյ, — քու մարդոցդ — պիտի դառնան զեռ իրենք չի պատրաստուած...: Մեր՝ Թուրքիոյ շահը կը պահանջէ որ Գերմանիոյ կողմը անցնինք: Ինքը խոստացած է որ երբ օգնենք իրեն, մեզի սայ մեր կորուսած բոլոր տեղերը, այսինքն, — Եզրպոտոս, Պէնկագի, Թրիփոլի, Թոււուզ, Ալճէրիա, Բուժէլի, Արչիպի-



Անգուր քիւրֆ պաշտօնեայ մը մահամերձ սարագիրներու հացի պատառ կը ցուցնէ


զազոս, կրէտէ, կինգրոս և կովկաս, ինչպէս նաեւ Հընդկաստանն ալ: Այն ատեն Հոկայ Օսմանեան կայսրութիւն մը պիտի կազմենք 300 միլիոն իսլամներով: Մինչդեռ քու ազան Անգլիացիդ (Ինկիլիզներդ) մեր երկու արէտնօթններն անպամ չի սուլին մեզի»:

Դիտել առի իրեն թէ Թիւրքերը աւելի լաւ կ'ընեն

որ միշտ ի նպաստ իրենց չի խորհին, այլ նաև պէտք է խորհին թէ եթէ Գերմանիան յաղթուի՝ այն ասան թիւրքիան պիտի կորսնցնէ իր բոլոր ունեցածը: Այս ընկով թիւրքիան ապերախտ պիտի ըլլայ Անգլիոյ գէմ, որ երեք անգամ զինք ստոյգ կործանումէ ազատած է: Մինչդեռ եթէ չէզոք մնայ իր ամբողջութիւնը պիտի պահէ և նիւթապէս ալ շատ պիտի շահի ու նարստանայ իր ժողովուրդն ու և երկիրը:

Ֆէյզլի պէյ խօսքը փոխեց ու անմիջապէս անցաւ Հայոց խնդրոյն, ըսաւ թէ «Հայերը բոլոր ազգով և բոլոր կուսակցութիւններով համակիր են Անգլիոյ և իր գաշնակիցներուն. յիմարութիւն ու մեծ սխալ մըն է այս իրենց համար: Պէտք չէ մոռնան թէ իրենք հալածակ են թիւրքին, և ուստի, ազէկ պիտի ընեն խռովութիւններ հաննն կովկասի Հայոց ձեռքով Ռուսիոյ մէջ՝ և այսպէս օգնեն թիւրքիոյ վերստանալու իր կորսնցուցած այդ մասը»: Երբ ըսի իրեն թէ կարս ու Արտահան թիւրքին լուծին սակ եղած ասան աւերակ գարձած էին, բայց նման չէն են և նարստ, մինչդեռ վեց վիլայէթի Հայերուն կարեւոր մէկ մասը կիտավայրենի Բիւրտերու հարստահարութեանը սակ շարունակ կը ճնշուի, անձի և ինչքի ապահովութիւն գրեթէ չի կայ: Կառավարութիւնը աւելի ընդարձակ իրաւունքներ և ապահովութիւն եթէ տայ Հայոց, շատ աւելի լաւ պիտի ընէ և ուղղակի իր օգտին ծառայած կ'ըլլայ»: Ֆէյզլին ասանց լսել ձեւանալու այս խօսքերը՝ շարունակեց իր խօսակցութիւնը, «Բայց եթէ Հայերը շարունակեն այս յիմար ընթացքը, շատ սուղի պիտի նստի իրենց: Անգլիա, Ֆրանսա և Ռուսիա չեն կրնար օգնել և ազատել զանոնք: մինչդեռ մենք կարող ենք ընկլու իրենց ինչ որ ուզենք, և մեր գաշնակիցները Գերմանիան և Աւստրիան, ձայն պիտի չի հանեն»: Ըսի Ֆէյզլին թէ այս անգամ շատ որոշ կը խօսի, ինչ է պատճառը: Պատմեց թէ ինքը ուրիշ ամէպուսններու

Հայերը սարագործքով հավերժ միջ



յանձնախումբի մը հետ դարունը Պերլին գացեր է. «Ինչ որ տեսած եմ հոն, ի՛նչ որ լսած եմ և ի՛նչ որ գիտեմ՝ զիս այս բացարձակ եզրակացութեան բերած են»։ Ի՛նչ որ է, խնդիրը անուշ տեղ կապելու համար ըսի՝ «Բայց Ֆէյզի պէյ, դուն խելացի ես ու գիտես որ միշտ ուսելու հաւկիթ ունենալու համար՝ հաւը կերակրել, պահելու է, և կաթ ունենալու համար՝ ունեցած կովը խնամելու ու հոգ տանելու է։ այնպէս չէ՞, չէ՞ որ Հայերը շատ մեծ ծառայութիւններ մատուցած են երկրին և կ'ընեն ալ»...

Ուրիշ օր մը Ֆէյզի պէյ հիւպատոսարան եկաւ իր «մէպուս» ընկերներէն ինծի բարեկամ, նախորդ «Պէլէտիյէ Բէյխի» Բէլամիլ պէյի հետ թէյ խմելու։ Խօսակցութեան միջոցին երկուքին ալ ուշադրութիւնը հրաւիրեցի սա իրողութեան վրայ թէ՛ Հայերու բոլոր հարստութիւնը, ինչքը և ունեցածքը քիչ ատենի մէջ պիտի փճանայ «Թէքէալիֆի Հարպիյէ Գոմիսիօն»ի ձեռքովը, թէ՛ շատ վրան բաց զեզմունիք կ'ըլլան ու իրենք իրեն «մէպուս»ներ Տիգրանակերտի իւրամ և քրիստոնեայ բնակչութեան ներկայացուցիչներ՝ լաւ պիտի ընեն որ խօսին և խորատեն յիշեալ «Գոմիսիօն»ին զխտոր պետերը Էսսաֆ պէյն ու Հազրի Էֆեն, զի իրենք փճայնելով Հայերը կը փճացնեն երկրին վաճառականութիւնն ու երկրագործութիւնը, և հետեւաբար հարստութիւնը, ըսել է թէ կ'ըսպաննեն, կը կտրեն պատերազմին ջիւղերը՝ այսպէսով իրենք զիրենք և թուրքիան կը կործանեն «է՛յ», ըսաւ Ֆէյզին, «Հայերը աւելի պէտք է խորհին, իրենք քիչ են, երբ փճանան՝ կը ըմբան. մենք շատ օր ենք, կէսէնիս ալ երթայ՝ դեռ կէսը տեղն է։ Խօսուանդ որ պիտի շահինք՝ ի՛նչ որ կորնցուցած ենք 200 տարիի մէջ, և աւելին ալ»։

Խօսքը փոխելու համար ըսի «Ի՞նչ որոշած ես այսօր միայն զիս նեղել, բայց չէ՞ որ Գերմանիան պիտի ուտէ

ձեզ, և դուք անոր ճօրտեղը պիտի ըլլաք. անոնք աղքատ ըլլալով աչքերնին ծակ է. ձեզ պիտի ուտեն, կըլլեն: Հայրենական ՚ին բարեկամի վտառիլ աւելի լաւ և իմաստութիւն է, քան նորելուկ և ազքատ բարեկամի մը՝ որ դեռ փորձուած չէ»:

Այսպէս շատ անգամներ կը խօսէինք և կը վիճէինք իրարու հետ:

### ՏԵՍԱԿՅՈՒԹԻՒՆ ՄԸ

«ԹԵՔԷԱԼԻՅԻ ՀԱՐՊԻՅԻ ԳՕՄՕՍԻՕՆԸ «ՐԷԻՍԻ»ԻՆ ՀԵՏ (ՊԱՏԵՐԱԶՄԱՅԱՆ ԵՊԱՍՏԻ ՅԱՆՁՆԱԽՈՒՄԲԻ ՆԱԽԱԳԱՀ)

Սեպտեմբեր 10ին գացի «Թէքէալիֆի Հարպլէ»ի կեդրոնը այցելութիւն մը տալու «Գօմօսիօն Րէիսի» Ճրճիս ազա գատէ («Բօն» կուսուֆ պէյին: Խօսակցութեան միջոցին գիտադութիւն ըրի իրեն ըսելով թէ «Տիգրանահերտի վիլայէթին բնակչութեան 2/3ը իսլամ և 1/3ը միայն քրիստոնեայք ըլլալով, «Թէքէալիֆի Հարպլէ»ի ալ ծանրութիւնը նոյն համեմատութիւնով պէտք է բաժնուի և զանձուի Մինչդեռ իրենց «Գօմօսիօն»ին իսկ հաշիւներուն նայելով 5/6ը քրիստոնեաներէն և հազիւ 1/6ը իսլամներէն կը հաւաքեն»: Եռսուֆ պէյ պատասխանեց. «Բայց Հայերը աւելի հարուստ են, քաղաքին և վիլայէթին ամբողջ շուկան, վաճառականութիւնը, արհեստները, առեւտուրը և երկրագործութիւնը ամբողջ անոնց ձեռքն է, զբամ շատ ունին, ուստի պէ՛տք է տա՛ն»: Քաղաքի բնակչութեան և վիլայէթի քիւրտ էշրաֆներուն, փաշաներուն և պէյիբուն մէջէն անուններով օրինակներ տուի իրեն ըսելով թէ անոնք շա՛տ աւելի հարուստ են և պատրաստի ա՛լ աւելի զբամ ունին, թէ՛ արդարութիւն և հաւասարութիւն պէտք է ամէն գործի մէջ, թէ՛ հնար եղածին չափ իրենք պէտք է համեմատութիւնը պահեն, և եթէ իրենք կողոպտեն Հայերը՝ սպաննած պիտի ըլլան իրենց ոսկի ամող սաղը»:

ՀԱԶԱՐԱՊԵՏ ՄՈՒՇԹԱՔ ՊԷՅԻ

ԱՆՁՆԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ ԳՈՂՏՆԻՔԸ

Սեպտեմբեր 15, Երկուշաբթի առաօտուն լուր սարձուեցաւ թէ «Էրբէանը Հարպ» պին-պաշարը Մուշթաք պէյ, 23րդ «Ալայ»էն, գանկը գնդակէ մը ծակուած՝ մեռած գտնուած է իր ննջասենեակին մէջ: Անոր գրասեղանին վրայ գտնուած են երեք նամակներ, Սեպտեմբեր 14 թուակիր: Գաղսնիքը կը պարզուի: Մէկը իր մօր և կնոջը գրուած և իրենց Պոլսոյ բնակարանին հասցէին ուղղուած էր: Երկրորդ մը իր եղբօրը գրուած էր՝ վան՝ գինուորական հարխ-րապետ մը: Երրորդը Տիգրանակերտի գինուորական հրամանատարին ուղղուած: Երեք նամակներուն ալ խմատը մէկ էր: Մուշթաք պէյ նախ կը բողոքէր «Թէքէալիֆի Հարպիյէ»ի զուլումներուն գէմ, ըսելով թէ «Անոնք պարզապէս կը կոտորեն բոլոր ժողովուրդը ըստ կամս, մահուանիկ Հայեր: Յետոյ շատ խիստ կերպով կը բողոքէր և կը պարտաւէր Սեպտեմբեր 10 թուակիր Երզնկայէն, «Գօլ-Օրտու»ի կեդրոնէն եկած գաղտնի հրամանը՝ որով կը հրահանուէր գինուորական իշխանութիւնները «ննչել եւ ճնշասպառ ընել Հայեր: Կառավարութեան հաւանութեամբ ու բոլոր իսլամ ազգին հաճութեամբը եղած այս անիրաւութիւններն ու անարդարութիւնները պարտաւելով, ինք իբր գիտակից միւս լիման մը չի կրնալով հանդուրծել, «վերջ կուտամ կեանքիս ամօթ զգալով թիւրք անուան տակ սպրիւէ այլևս» ըսելով ստորագրած էր նամակները:

ՎԱԼԻ ՀԱՄԻՏ ՊԷՅ

1914 Հոկտեմբեր 1, Հինգշաբթի 7օր Տիգրանակերտ հասաւ նոր վալի Համիտ պէյ՝ բնիկ Ռոստոմօցի շամիտ պէյ միւթէաբիֆ եղած է Գրք-Բիլիսէ և Չանադ-Գալէ,

էտիրնէ՝ «Միւլքիլէ միւֆէթթիլի» և Պոլիս՝ օգնական էր անգլիացի Mr. R. Gravesի, ընդհանուր քննիչներու ներկայացուցչին Այսպիսի ուղղամիտ և աշխոյժ վալիի մը շատ պէտքը կար, զի անկարող և Ֆանարիի գատին՝ որ վալիին փոխանորդութիւն կ'ընէր Օգոստոս 16էն ի վեր, ամէն բան ձգած էր խելագար իթթիհատին ձեռքը, որ քստ կամս կը գործէր: Համիտ պէյլին առաջին գործն եղաւ պաշտօնանկ ընել «գօմիտէր» Մէմուհ պէյը՝ որ պատասխանատու էր շուկայի Օգոստոս 19ի հրդեհին, և աքսորեց զայն Ատանայ: Նսեւ ձերբակալել և բանա նետել առաւ քիւրտ կարգ մը աշիրէթներու ազդեցիկ առաջնորդներէն՝ Սարհան, Ալի-Պըթէ, Հաճօ, Թէմօ կաուրէի որդին Մըսթաֆայ և ուրիշ թօռ-Ապալինի կարգ մը քիւրտ աւազակապետները, որոնք միշտ կ'անասատէին իշխանութեան հրամանին և կը վրդովէին վիւայէթին խաղաղութիւնը, և հիմա ալ կարիւրութիւն տուած չէին «Ախլզ վէ սէվզի ասքէր»ի հրամաններուն:

Այս կորովի և ուղղամիտ վալիին շատ անգամ անձամբ կը դիմէր անգլիական հիւպատոսարանը և զազաւփարի փոխանակութիւն կ'ունենար հիւպատոսին հետ: Այն պարագային, որ կարծիք կը յայտնուէր հաւանականութեանը թիւքերու Գերմանիոյ կողմը անցնելուն, չէր քաշուէր արտայայտուիլ և ըսել թէ «Թիւրք իշխանութիւնը այնքան ալ յիմար չէ որ իր հին բարեկամն ու ազատարարը, Անգլիան, ձգէ և յարի Գերմանիոյ, այսպիսի բան մը ընել անձնասպան ըլլալ ըսել է թիւրքին համար»: Իայց կը խոստովանէր թէ թալասթ, Էնվէր և Ճէմալ՝ կրրեակ միացեալ իթթիհատի գիլհասնր բաշաներ, գերմանասէր էին — Գերմանիոյ ծախուած կոյր գործիքներ:

### ՓԱՆՈՒՍՏՍ

1914 Հոկտեմբեր ամսուան մէջ էր որ քանիցս նաւ

մակոլ իմացուցի և զրեցի քեզի իյարբերոյ, թէ հաւանական ու մօտ կ'երեւայ որ թիւրքերը՝ Գերմաններու — Կեղբոնական պետութիւններու — կողմը անցնին և զործեն ընդդէմ Դաշնակիցներուն, երբ անգլիոսկան հիւպատոսը պիտի ձգէ երթայ, և ես ալ ստիպուած եմ աշխատիլ արտասահման անցնելու իր հետը Քարիքիւլասիօններու ջնջումը զիս կը զրկէր անգլիական կառավարութեան պաշտպանեալի իրաւունքէս, որ ձեռք բերած էի 19 տարիներ շարունակ յիշեալ պետութեան Տիգրանակերտի և իյարբերլի հիւպատոսարանի պաշտօնեայ՝ և յետոյ ալ փոխանորդ ըլլալու հանգամանքովս։ Գրած և թնլաղբած էի որ դուն ալ պատրաստ ըլլաս վեց զաւակներով, որոնք Ամերիկեան Եփրատ Գօլէճի սաներն էին, մեկնիլ իյարբերոյէն, զալ Տիգրանակերտ որ միտալին հիւպատոսին հետ մեկնինք։ Սակայն թիւրքերու պատերազմի մօտնելու լուրը յանկարծ հասաւ, և հիւպատոսը ստիպուած էր անմիջապէս մեկնիլ։ Ասանց անձս և նոյն իսկ ձեր կեանքը վտանգի ենթարկելու չէի կրնար զատուիլ և բամուիլ իրմէ։ Ուստի հեռազրոյ և պաշտօնական նամակով մը քեզ զաւակներով իյարբերլի Ամերիկեան հիւպատոս Mr. Luise Daviseին պաշտպանութեան և խնամքին յանձնելով, ստիպուած էի արտորալ և շուտով արտասահման անցնիլ։

1914 Հոկտեմբեր 31, Շարաթ օր կէսօրին Պոլսոյ Անգլիական դեսպանատունէն ծածկազիր հեռագիր մը հասաւ հիւպատոսին, որ կ'իմացնէր թիւրքերու պատերազմի մօտնելն և Կեղբոնականներու կողքին կանգնիլը։ Կը հրահանգէր անմիջապէս արտասահման մեկնիլ։ Երկու ժամուան մէջ բոլոր կարիւր պաշտօնաթուղթերը մօտիկի վերածեցինք կանխազգուշութեան համար Յետոյ վալի Համիտ պէյին երթալով իրողութիւնը իմացուցինք իրեն։ Համիտ պէյ շանթաճար եղաւ, հաւատալ չուզեց այս լուրին, մինչև անգամ «կեղծ հեռագիր մըն է, թիւր-



քերը յիմար չեն որ անձնասպան ըլլան. Անգլիոյ գէժ պատերազմ հրատարակելը անձնասպանութիւն ըսել է՝ ըսաւ, յանկերդ մը որ շատ անգամ կրկնած էր Այդ միջոցին Պապտատի վալիէն ալ հասաւ հետագիր մը, որով կ'իմացնէր Համիտ պէյին թէ «Պապտատի անգլիական, առասական և ֆրանսական գիւ.անագիտական գործակալները իրենց վաւարարը կ'ուզեն թիւրքիայէն մեկնելու համար, ըսելով՝ թիւրքերը Գերմաններու կողմը անցած են և պատերազմ յայտարարած Գաշնակիցներու գէժ»։ Կ'ըսէր թէ «ինք ս և է լուր չունի Պոլսէն և կը խնդրէր որ եթէ Համիտ պէյ զիտէ աւելի բան մը հաճի իրեն իմացնել Պատասխանուեցաւ թէ այս կը ցուցնէ որ Պոլսոյ իշխանութեան տէրերը «Իթիթիհատ վէ Թէրապը ձէմիյէթի» ին սճրագործները՝ առանց գաւառները — վիլայէթները — հարցնելու իրենք իրենց զիտուն կը գործեն։ Եոյն օրն իրիկուան գէժ վալին մեր «պուլթուլթի»ն հիւպատոսարան զրկեց։

Կայծակի արագութեամբ ցրուեցաւ լուրը. Բոլոր քրիստոնեայ հասարակութիւնը մեծ ցաւով, վախով ու սարսափով լեցուեցան երբ լսեցին ու իմացան որ անգլիական հիւպատոսը կը մեկնի, և իրենց ամենավստահելի ու հզօր բարեկամն ու յոյսը — Բրիտանական հիւպատոսարանը կը գոցուի թիւրքերն ալ շուարեցան և անմիջապէս շի կրցան ըմբռնել ու կշռել գէպքերը որ արագօրէն իրարու կը յաջորդէին։

Եոյնմբեր 1 Կիրակի առաօտուն մ'իժնշալին, շորս եայլի կառքերով ճամբայ ելանք՝ Mr. Monck-Mason, իր Տիկինը, պէյպէն՝ կանթընկեր փոքրիկ ազջիկը և ես, նաև իրենց ազախինը Ուահիտէն՝ որ Լիբանանցի մառօնիդ մըն էր։ Առաջին օրը՝ Գայնալ, երկրորդ օրը՝ Գարա-ձուրուն և երրորդ օրը Ուրֆա հասանք։ Երեք օրուան մէջ 150 մղոն ճամբայ կտրելով։

Ուրֆայի միւթասարիֆ Մումթիալ պէյ մերժեց ու-

տիկան տալ մեզի, նոյն ատեն շատ ալ խիստ վարուեցաւ, նաեւ ուղեց վար դնել զիս և արգիւել ճամբաս շարունակելէ: Սակայն փօլիս քօմիսէրիին միջոցաւ, որ խելացի մարդ մըն էր, յաջողեցայ կարգադրել ինիրը և հետեւեալ օրը, Նոյեմբեր 4ին, ձգեցինք Ուրֆան և հասանք Սուրուճ: Կէս զիշերին Սուրուճի «Ախլ վէ սէվլի ասքէրի»ի զսպիթը, հազիւ 24 տարեկան երեսասարգ մը, կանչելով զիս հագորդեց թէ «Պոլսէն հրաման եկած է որ բոլոր «էճնէպի»ները ուր որ են հոն մնան և սպասեն վերջին հրահանցին»: Անմիջապէս խմբադրեցի երեք հեռագիրներ և Mr. Monck-Masonին ստորագրութեամբ եռապատիկ վճարելով Urgent առի Պոլսոյ Ամերիկեան գետպան Մր. Մօրկլընթաունին, Հալէպի Ամերիկեան հիւպատոս Mr. Jacksonին և Տիգրանակերտի վալի Համիտ պէյին, խնդրելով որ արածուեինք ծովեզերք երթալու: Բայց նոյն ատեն կասկածելով որ գուցէ մեր հեռագիրները վար կը դրուին, միևնոյն զիշերը երկու սուրճանդակ ճամբայ հանցինք՝ մէկը Հալէպի՝ ամերիկեան հիւպատոս M. Jacksonի և միւսն ալ Ուրֆա՝ ամերիկեան միսիօնար և դեր-հիւպատոս Մր. Լէյսլիին մէյմէկ նամակ տանելու և բերանացի ալ բացատրելու մեր անախորժ դրութիւնը:

Նոյեմբեր 6ին, Ուրբաթ օր, նախ Հալէպի Ամերիկեան Հիւպատոսը և քիչ յետոյ Պոլսոյ Ամերիկեան Գետպանը հեռագրաւ խմացուցին թէ Պոլսոյ Ներքին Կործոց Նախարարութիւնը հրաման և հրահանգ տուած է մեր Հալէպ անցնելուն:

Նոյեմբեր 8ին, Կիրակի օր, յաջողեցանք օձիքնիս ազատել և Սուրուճէն մեկնելով բռնել թրէնը և անցնիլ Հալէպ՝ ուր հասանք արեւամուտէն մէկ ժամ վերջ: Նոյն հետայն ամերիկեան և իտալական հիւպատոսները այցելութեան եկան մեզի «Պարոնի» պանդոպին մէջ:

Նոյեմբեր 9ին, Mr. Jackson շատ ճարպիկօրէն կը

յաջողի վալիին «վիզէ» ընել տալ մեր «պույրութի»ն Պէյրութ անցնելու համար: Հաս լսելով սակաւն, որ Հալէպի և ուրիշ անդլիական հիւպատոս մը փոխան Պէյրութի՝ Գամասկոս քչամ տարած են թրէնով, նոյն զինքը հասկացողութեան մը եկայ բօլիս միւսաբիին հետ, որ իարբերդի բարեկամին — քեզի բազմիցս օգնող — վահահաճ էֆին սպրտականն էր, լաւ և բարի մարդ մը, որ կարգադրեց որ զօրիւն մը մեզ հետ գայ մինչև Բայեազ, ուր թրէնը պէտք էր փոխել Պէյրութ կարենալ անցնելու համար: Այսպէսով նոյեմբեր 10ին Երեքչաբթի օր, կէս զինքին հասանք Պէյրութ: Կայարանին մէջ ամերիկեան գեր-հիւպատոս Mr. Cheesbery զիմաւորելով մեզ առաջ-նորդեց «Պատուի» պանդոկը:

Նոյեմբեր 11ին ուղեցի աբնէն առաջ այցելութեան երթալ Պէյրութի «Թէլէկրաֆի վէ ֆօսթա միւսաբի» Ղալիպ պէյին, Տիգրանակերտէն ծանօթ և հին բարեկամ մը ինծի, որուն բարեկամական ծառայութիւններ ըրած էի ժամանակին՝ Սուլթան Համիայն օրոլը Պահակ զինուոր-նիւր երեք անգամ արդիւնցին զիս պանդոկէն դուրս ել-լելու: Չորրորդ անգամին բաշքը օգնեց, պահակը քիւրտ էր և բարեբաղբար թիւրքերէն չէր զիտեր: Քիւրտե-րէն քանի մը անուշ խօսք և փոքրիկ ընծայ մըն ալ՝ ճամբայ տուաւ և ես սպրդեցայ դուրս Ղալիպ պէյ երբ տեսաւ զիս, ապշեցաւ մնաց որ ողջ հասած եմ հոն: Պարզեց ինծի թէ Պոլսոյ իշխանութիւնը մահուան դատապարտած էր զիս, թէ ամէն կողմ կը փնտռուիմ, թէ Տիգրանակերտի տունս, այգիս և բոլոր հոն ունեցածս, ինչպէս նաեւ ֆարգինի տուներն ու բոլոր կալուածները և ամէն ինչ որ ունէի հոս ու հոն՝ յարքունիս զրաւելու հրաման տրուած էր: Ինքը, մեր հին բարեկամու-թեան սիրոյն՝ հեռագրական հրամանը որ հոն ալ տրուած էր, պահած և Պէյրութի շար վալիին չէր հաղորդած, խոս-տացաւ սպասել մինչև որ անկէ անցնիլս կարգադրեմ:

Պալիկ պէյ օգնեց ինծի նաև՝ որ վեց սակի հետպրական հրամանաւ Պէյրութէն կարբերդի ամերիկեան հիւպատոս Mr. Davis-ին գրիեմ՝ քիզ տրուելու համար, և նաև օգնեց ալ որ տրամեմ տեղւոյն փալիս միւսիքիին հետապրնդութենքէն Սարաֆեան Պ. Սամուէլն ալ շատ օգնեց ինծի և չի վախշաւ զիս հիւրընկալել իր տունը՝ մինչև Պէյրութէն աւելնելու այսպէսով ազատ մնայի հետապրնդութենքէն:

Նոյեմբեր 14ին «Օրհնատ» հրամայող իսլամական ևս պիթեկի «Երասէի Ալեմիլէ»ն հրատարակուեցաւ Պէյրութ:

Նոյեմբեր 15ին, Պէյրութի սուսական և ֆրանսական հիւպատոսներու թարգմանները ձերբակալուեցան և աքսոր գրկուեցան Գանիա Անգլիական հիւպատոսարանի ալ պատուոյ թարգման Խորիր պէյ Շուքէրը Գամասկոս գրկուեցաւ Այս միևնայն օրը ձերբակալուեցան նաև Լիրանանի միւս թատարիի հայազգի Յովհաննէս բաշա Գոշում ձեան՝ իր աւագանիով, ինչպէս նաև Մառօնիթնէրու ընդհանար Պատրիարքը, և ամէնքն ալ աքսոր զըրկըւեցան Գամասկոս:

Նոյեմբեր 16 երկուշաբթի օր՝ մեր փրկութեան և ազատութեան օրը եղաւ: Ամերիկեան ընդհ. հիւպատոսին ազգու միջամտութեան շնորհիւ արտօնուեցանք և ամերիկեան vice-consul Mr. Cheesbery, ինչպէս նաև Syrian Protestant Collegeի նախագահ Dr. Howard Daniel Bliss և Dr. Graham-ին ընկերակցութեամբ և օգնութեամբ, նոյն օրը կէսօրէն առաջ փոխադրուեցանք ամերիկեան փոքրիկ նաւակալ մը մինք և մեր բոլոր զոյքերը իտալական Societa Italiana Servizi Marittimi չոզենաւերէն մէկը: Միջօրէէն յետոյ, ժամը 8ին, խարխալս վերցուց մեր չոզենաւը թիւրքիայէն փախչող ճամբորդներով լիւր-լիցուն ևս թէև չոզենաւին Բ. կարգի համար վճարած էի, սակայն առաջին բոլէին իսկ չոզենաւին կամրջակին վրայ հալիւ բազկաթոս մը կրցի գրա-

ւել թէ վրան նասելու և թէ պաւկելու համար Ամբողջ զըշերը տատով հով, փոթորիկ և անձրևս եղաւ. լաւ մը թրջեցայ :

Նոյեմբեր 17ին կանուխ՝ Հայֆա և իրիկունը Եաֆա հասանք : Այս երկու նաւանանդիստներէն ալ չողնաւը այնքան ճամբորդներ աւառ որ պատուելիք կուզար Սալօնները, սեղանատունները, այլանները, նրբանցքները, կամրջակը և ամէն տեղ այնքան լեցուեցաւ որ չարմելու տեղ չի կար ճատեր ամբողջ ժամանակը սոքի վրայ մնացին նասելու տեղ չի գտնելու : Բայց ամէն ոք ուրախ էր զի ազատած էր թիւրքիոյ զհննէն : Իսկ ծովը, երէկու ընէ ի վեր ալեկոծ էր ու խննդ :

Նոյեմբեր 18ին չորեքշաբթի օրը հասանք Բօթի-Սալիա՝ Եզրիպտական հաշակաւոր Սուէզի ջրանցքի բերանը նաւանանդիստ մը : Տասն և երկու քննութիւններէ անցնելէն յետոյ, որոնք տեսցին ամբողջ 5 ժամ, հիւպատոսներու խումբը արատնուեցաւ ցամաք ելլել, մինչդեռ միւսները Ազեքսանդրիա տարուեցան :

Նոյեմբեր 19ին Հինդարթի օրը Կահիրէ հասանք ապահով և փառք տուի Աստուծոյ՝ որ աշատեցայ թիւրքիոյ դժոխքէն : Բայց սիրտս միշտ գոյլի մէջ էր քեզ՝ իմ սիրելիիս և հոգհաստար վեց զաւակներուս համար՝ որոնք դժբաղդարար չէի կրցիր ազատել այդ կենդանի դժոխքէն և բերել հետս : Միակ բանը որ կրնայի ընել՝ անդադար աղօթիկ էր և Աստուծոյ պաշտպանութիւնը խնդրել ձեզ համար, նաև զրկել նիւթական օգնութիւն՝ որչափ որ անձուկ պարազաներս կը ներէին, նոյնիսկ անձէս զրկելու : Փառք Աստուծոյ, այս երկու կէտերն ալ յաջողեցաւ հրաշալիօրէն : Սակայն մեր վեց զաւակները ազատելու փառքը քեզի վերապահուած էր, և զիտեմ որ Աստուած, որուն հաւատացած և վստահած էիր բոլոր հոգիովդ, ձեռքէդ բռնեց Քրիստիսէի պէս ու կտրձանման երկրէն, թիւրքիոյ զհննէն և Ռուսիոյ սարսախներէն ու

քառուէն հանեց, ազատեց ու փրկեց հրաշալիաօրէն քեզ  
և մեր վեց զաւակները: Փառք իր անուան:

Դառնանք հիմա մեր պատմութեանը: Պիտի ջանամ  
հնար եղածին չափ ժամանակագրական կարգով դժել ու  
ներկայացնել Տիգրանակերտի դէպքերն ու անցքերը, սար-  
սափի և արխնի այդ օրերուն, յորում Հայութիւնը դան-  
դուածովին ջարդել, խաչել և փճացնել ջանացին Պոլսոյ  
թուրանական «Իթթիհատճի»: ոճրագար իշխանութիւնը՝  
քաջալերուելով զերման Հոներէն և մեղսակցութեամբը  
աշխարհուէր այդ վանտալներու:

### «ՃԻԼԼՅՏ» ՎԱԼԻ ՄԸ

Կորովի և ուղղամիտ Համիտ պէյի պէս վալիի մը  
պաշտօնախարութիւնը չէր կրնար երկար տեսել: Քաղա-  
քական միջնորդը ալ բոլորովին մթագնած էր: Իթթի-  
հատական ոճրագործները իրենց ծրագիրը գործադրելու  
արդելք ելող Համիտ պէյը Պոլիս փոխադրել կը յաջո-  
ղին և անոր կը յաջորդէ Մուսուլի վալին՝ «ճէլլատ»  
Գարասիի նախորդ միւթէսարիֆ, հարիւրապետ Տքթ. Բէ-  
շիտ պէյը, ծագումով չէրքէզ, որ Տիգրանակերտ կը հաս-  
նի 1915 Մարտ 28ին, իր հետ բերելով հետեւեալ դահ-  
ճապեանները. — «Միրալայ» չէրքէզ Բիւշտի պէյ՝ իբր  
ժանտարմա դօմանտանի: Պէտրէտտին պէյ՝ մէքթուպճի  
իր «սըր քեաթիպի»ն և պինպաշի չէրքէզ Շաքիր պէյ՝  
իրենն անձնական ետլէրը (թիկնապահ): Ունէր իրեն հե-  
տեւորդ նաև 50 չէրքէզ չիքեհիներ, որոնք ստիկանի  
տարազ հագուած և Հայերը ջարդելու յատկացուած Իթ-  
թիհատի հաւատարիմ գործիքներն էին:

ԵՐԵՍՓՈՒՍԱՆ ՖԷՅՉԻ ՊԷՅ

ԵՒ 15 ՄԻԼԻՈՆ ԴԱՀԵԿԱՆԻ ԿԱՇՍԱՌԻԸ

Օսմանեան Մէճլիսի Մէսուսանի անդամ Ֆէյի պէյ

գործի վրայ է հիմա, առիթը ներկայացր է և պատեհու-  
թիւնը յարմարագոյն: Ֆէյզլին սրղին է Տիգրանակերտի  
Փիրինձձի գատէ Արիֆ Էֆ.ին, համբաւաւոր պետ զողե-  
րու և աւազակներու: Հայրը՝ Արիֆ Էֆ., 1895ի Տիգ-  
րանակերտի Հայոց ջարդը սարքողներէն մէկն է, որ ան-  
ձամբ վարեց իրեն պատկանող խուժանն ու քիւրա աշի-  
րէթները, անձամբ առաջնորդեց անոնց որ ջարդեն և կու-  
տորեն Տիգրանակերտի քաղաքին և նահանգին մէջ զբա-  
նուող Հայերը: Ասոր ի վարձատրութիւն Արիֆ Էֆ. մէ-  
պուս անուանուեցաւ, և պէյութեան աստիճանին բարձ-  
րացաւ: Սահմանադրութիւնը հրատարակուելու նախօր-  
եակին:

Ֆէյզլի, Պոլսոյ Իթթիհատի կեդրոնէն յաջողած էր  
ստանալ հրաման մը, որը ձեռք բերելու համար Իթթի-  
հատի գովիթէին տասն և հինգ միլիոն դահեկան վճարելու  
մուրհակ մը կուտայ ի Պոլիս: և այս գումարը Հայերու  
կողոպուտէն հաւաքելէ յետոյ՝ կը զրկէ Իթթիհատի կեդ-  
րանին, և այս վերջինէն առած հրահանգին համաձայն՝  
ինքը Ֆէյզլին, վալի Տօքթ. Բէշիտ, մէքթուպձի Պէտ-  
րէտտին և ժանտարմա գոմանտանի՝ միրալայ Բիւշտի  
պէյերու օգնութեամբ կը զծեն Տիգրանակերտի նահանգին  
Հայոց բնաջնջումի ծրագիրը:

Շուտով կէվրանլի-գատէ գովիսէր Մէմուհ պէյ,  
սրբկայ և անբարոյական «Իթթիհատձի» մը, աւերումի  
և քանդումի աննման գործիք մը և ոխերիմ թշնամի  
Հայոց, ետ կանչուեցաւ: Ասանայէն ու նորէն իր գովի-  
սէրութեան պաշտօնին վրայ հաստատուեցաւ:

### ՄԻԼԻՍ ԲԱՆԱԿԸ

Այս միեւնոյն ամուսն Ապրիլի մէջ Տիգրանակերտի  
Իթթիհատականները վալիին հրամանաւ Միլիս (քաղա-  
քային) բանակ անուան տակ հաւաքեցին քաղաքին և  
նահանգին մէջ զանուող շարագործներն ու եղևուսպործ-


ները, և կազմեցին 11 թաղուր չէրեկներ, համարել էնիւնիւններու: «Միլիա»ի, այս աւերիչ ու քանդիչ բանակին պետերը եզան արդէն համբաւ հանած երկու ժողովասպան աւաղակներ, թուեղ իթթիհաստականներ ձէմիլ բաշա զատէ: Մուսթաֆա պէյ նշանակուեցաւ միբաւայ ընդհանուր հրամանատար Միլիա բանակին: Մուսթաֆա պէյ շատ վատ համբաւ հանած է 1895ի Հայոց ջարդերուն ատենն ալ, ինչպէս նաև իր եղբայրը Գասթ պէյ: ձէմիլ բաշա զատէ զերգաստանը արդէն ծանօթ է իբր չարազործ և բռնապետ: Ետին զատէ Շէվլը պէյ հազարապետ կը նշանակուի, կորովի և ազգեցիկ սնրազո երիտասարդ մը:

Միլիաի 11 թաղուրներուն կը հրամայեն հետևեալ 12 հարիւրապետները՝ ամէնքն ալ համբաւ հանած մասնակի և նշանաւոր սնիրներով:

- |  |               |
|--|---------------|
| 1. Փիրինճճի զատէ Սըտպը Էֆ.                     | Տիգրանակերտցի |
| 2. Տէլլալ զատէ Էմին պէյ                        | »             |
| 3. Շէյխպատէ Գասարի պէյ                         | »             |
| 4. Զապա զատէ Մուհամէտ պէյ                      | »             |
| 5. Մուսուլլը Եանհայ Էֆ. (Տիգրանակերտ կը բնակի) |               |
| 6. Մուլլայ Բաֆֆօ (Քէլլէկճի)                    | Տիգրանակերտցի |
| 7. Մուխթար զատէ Օթուրպզճի Սալէ՛                | »             |
| 8. Տիրեկջի թահիր                               | »             |
| 9. Ալի Հաթօ զատէ Սալէ՛                         | »             |
| 10. Հաճի Պիպըր (Ֆաթահ Բաշա թաղէն)              | »             |
| 11. Գասապ Հըջօ՛                                | »             |
| 12. Գասապ Շէխօ                                 | »             |

Տասն և մէկերորդ թաղուրը կը կոչուէր Գասապ քապուրը, որուն հրամանատարներն էին վերջին երկուքը, արհեստով «գասապ» (մապործ) Հըջօ և Շէխօ: Տասը թաղուրներն իւրաքանչիւրը 500 հոգիէ կը բաղկանար, իսկ գասապ թաղուրին ունէր միայն 150 հոգի: Միլիա բանակին իւրաքանչիւր հարիւրապետը ազատ է աւել-





Թիւրք «Քիւլլիւր»

ցընելու իր թիւը ըստ կամս Գասապ թաղուքը մորթեալու և յօշոտակու յաակացուած էր յաակապէս սարսափ ձգելու համար:

Միլիս բանակը ունէր 50 չալուչներ և 500 ասանապաններ: Ասոնց ամենուն անունները արձանագրուած կան յականէ անուանէ Միլիս բանակին տեսրակներուն մէջ:

ՏԻԳՐԱՆԱԿԵՐՏԻ ՆԱՀԱՆԳԻՆ, ԿՈՏՈՐԱՇԻՆ,  
ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒՆԵՐԿ:

Տիգրանակերտի նահանգին Հայութեան կոտորածի և ջարդերու պատասխանատու ևն Միլիս Կարմիր Բանակին տասն և չորս հրամանատարները, ինչպէս նաև կառավարական հետևեալ անձերը.

Վալի «Ճէլլաս» աքքթ. Բէշխ պէյ՝ չէրքէզ:

Մէքթու պճի Պէտրէտտին պէյ, գարչելին յեսայ Մարտինի միթէտարրֆի ալ եղաւ և սարքեց այն տեղի կոտորածն ալ տեղացի էչրէֆներու օժանդակութեամբ:

Ժանսարմա դոմանտանը միրալայ Բիւ շախ պէյ՝ չէրքէզ:

Վալիին հալէրը՝ պինպաչի Շաքիր պէյ, չէրքէզ:

Մէպուս Ֆէյզի պէյ Փիրինճճի գասէ, Տիգրանակերտցի:

Մէպուս Զիլֆի գասէ Զիլֆի պէյ »

Փօլիս միտիրի Ճէմիլ պէյ:

Սէր գոմիսէր, Բէսուլ պէյ՝ արնուտա:

Գօմիսէր Մէմուհ պէյ Կէվրանլի գասէ »

Աթթար Հազըլ էֆ. Իթթիհատի պատասխանատու անօրէն, Տիգրանակերտցի:


Քէօր Եուսուֆ պէյ Ճըճիս ալա գասէ, Իթթիհատի միւրախաս, Տիգրանակերտցի:

Շէրիֆ պէյ Միւֆիթի գասէ, Իթթիհատի չէֆերէն:

Ատիլ պէյ Զիլֆի գասէ »

Քէմալ էֆ. Իսթինաֆ քեաթիպի Ապախուլ Գաստիրի որդին, Իթթիհատի չէֆերէն. Տիգրանակերտցի:

Երբ Հայեր կախաղանի վրայ ի նսնու



Երեզրագայի վէլի պէյ (Պօնէլի) վէլի պատա գասէ,  
Իթթիհատի շէֆերէն, Տիգրանակերտցի:

«Մեկիսր Ալի», Տիգրանակերտ նահանգի կեդրոնին,  
համանուն քաղաքին մէջ — կառավարութիւնը և «Իթ-  
թիհատ վէ թէրագը ճէմիլէթի»ն ներկայացնող այս  
քսան և ինը պաշտօնական անձերը կազուեցան «Մէճիսը  
Ալի», որուն նախագահն էր վալին՝ ինք՝ Չէրքէզ աօքթ-  
Րէչիս պէյը, և Բ. նախագահ՝ մէպուս Ֆէյզի պէյ, Ասոնք  
ծրագրեցին և կազմակերպեցին Տիգրանակերտ նահանգին  
Հայոց բնաջնջումը: Ասոնց աջակցեցան.

Ա. Չէրքէզ շէրեկիներ և նահանգին մէջ բնակող  
Չէրքէզներ:


Բ. Միլիս բանակը, և՛

Գ. վիլայէթի մէջ գանու ող ամբողջ քիւրտ հասա-  
բակութիւնը և աշիրէթները:

Սադայիլական այս ծրագիրը զարծազրուեցաւ սիւ-  
թէմասթիք կերպով:

### ՀԱՅԵՐԸ ԶԻՆՈՒՈՐ ՄԱՀԻԿԻՆ ՏԱԿ

1908 Յուլիս 23ին էր, երբ Օսմանեան Սահմանա-  
գրութիւնը (Մեքուրէի) հսկակուեցաւ Թիւրքիոյ ստատ-  
նին մէջ, և Կարմիր Մուլթանին քաղաքական ու մն ու  
զօրութիւնը կտարեցաւ հիմէն շարժելով Մուլթան Հա-  
միտին գահը: Ալաուրիսն, Հաւասարուրիսն, Արզարու-  
րիսն և Երզարուրիսն «Հիւրիյէթ, Մուսավաթ, Ասա-  
լէթ վէ Ռախուվէթ», այս քառեակ բաւերու հոգեպարար  
ազգեցութեան գինտիութեանը տակ՝ ամէն ոք հաւատաց  
թէ բռնակալութեան լուծը կտարած և ալ Արզարուրիսն  
ու Հաւասարուրիսն պիտի տիրէր եւեթ: Եւրպա տնգամ  
զարմացաւ այս մտպական ազգեցութեան և փոփոխու-  
թեան վրայ, որ տեղի կ'ունենար ի թիւրքէտ Հայերը  
չտացած և զզլսած էին, ու քրիստոնէական անյիշաջու-  
րութեամբ գիրկընդխաչուեցան իրենց երէկի գահիճնե-  
րուն հետ և համբարուեցան...:




Perfo-brafani quardui gnu. p. l. l. l. l. l.

Ազգին միահամուռ փառաքին վրայ Հայ ներկայացուցիչ կրեափոխանները «մէպուսներ» ի Պոլիս, իրենց գլուխն ունենալով Օսմանեան Մէպուսանի զոհարը՝ Գրիգոր Զօհրապ, պնդեցին ու յաջողեցան օրէնքի մէջ անցընել յօդուած մը, որով Հայերն ալ (ինչպէս նաև բուրբ քրիստոնեաներն ու Հրէաները) զինուորապրուելի կ'արտօնուէին, որոնք յօժարեցան մահիկին տակ իրենց արիւնը թափել հայրենիքի և պետութեան շահին համար, որուն հպատակներն էին: Հայերը բնատուր ձիրքերու բայց մանաւանդ իրենց աւելի բարձր կրթութեան շնորհիւ, արագօրէն յառաջացան և մեծ ընդունակութիւն ու կարողութիւն ցուցուցին զինուորական ասպարէզին մէջ ալ: Կրգ բանակի «Ֆէրիզ»ներէն մէկը, օր մը, խօսակցութեան մը միջոցին ըստ. «Հայ կրիտասարգները մէկ ամսու մէջ կը սորլին ինչ որ թիւ բքը մէկ՝ իսկ Բիւրաը կրկու տարուան մէջ հազիւ կրնան ձեռք բերել»: Ուրիչ «Ֆէրիզ» մըն ալ տարրեր առթիւ ըստ յետագայ շատ նշանակելի խօսքը. «Կ'ընարեմ հրամանատար ըլլալ Հայերէ բազկացած մէկ ալային, քան Բիւրտերու բանակի մը»:

#### «ԱՄԷԼԷ ԹԱՊՈՒՐԸ»

Երեւութապէս չլացուցիչ այս վիճակը տեսեց մինչև 1914ին վախճանը: Հայերը իրենց խորունկ թմբիքէն արթնցան յանկարծ, կրը Պատերազմական Սպարապետէն եկած հրամանի մը վրայ բոլոր հայ զինուորներու ձեռքէն զէնքերը աւնուեցան և ամէնքն ալ քշուեցան «Ամէլէ թաղուրի» (գործաւորական բանակ) ըստածը, գործածուելու համար ձամբաներու շինութեան, իբր հասարակ բանուորներ և մահապարտ բանտարկեալներ՝ լեռներու գլուխը, հետո հայ բնակչութենէն, անգուծ հրամանատարներու հակազութեան և ճնշումին տակ: Այսպէսով Տիկրանակերտն ալ ուրիչ բազմահայ



Տիգրանակերտի մօտ Եղած ջարդի մը տարանքը

կեցրածներու պէս մերկացուած էր իր երիտասարդներու  
ուժէն, և զրկուած էր անոնց հետ հարբողակցութիւն  
ուճանալէ: Տաւն մնացած էին 17 տարեկանէն վար անչա-  
փահասներ, և 5(0)էն վեր էր ի՛նչ մարդիկ: Վերջինները գլխա-  
ւորաբար փաճասականներ, հոգատէրներ, արհեստաւոր-  
ներ, սեղանաւորներ և մտաւորականներ էին կային  
սմանք ալ որ եւսպատիկ պիտէ՛լ տարալ խոստոված էին  
Թիւրքիոյ զինուորական տաժանկի և «ամէլէ թապուրի» ի  
թխապարտի կ'անքէն:

### ԽՈՐՀՐԴԻՈՒՈՐ ՃԱՄԲՈՐԴՈՒԹԻՒՆ ՄԸ

1915 Ապրիլ 19 Երկուշաբթի օր, փրիւնճճի զատէ  
Ֆէյզի պէյ, «Աէճլիսը Ալի»ին սրտումով կը մեկնի ձե-  
զիբէթ էլ-()մէր երթալու, զիւղ մը Տիգրիսի եղերքը:  
Ճամբան հանդիպած բոլոր զիւզերն ու աւանները, և կա-  
սալարական կեցրածները բրաբականա կ'ընէ զրգուելալ և  
հրահանգելալ քիւրա աշխրէթները և բոլոր միւսլիման-  
ները իրենց կրօնական պարտականութիւնը կատարելու,  
այսինքն ջարդել և բնջնջիլ Հայերը — կեսալուրները —  
կողպատնէ անոնց ամէն ինչքն ու ստացուածքը և բնա-  
չի խնայել արուներն ու էգերը, կիները, ծերը կամ  
սկարր: Բայց միայն պահել գեղանի ազջիկները և հոր-  
սերը իրենց «հարէմ»ները զարդարելու համար Շէյխեր  
և խօճաներ ալ կ'օգնէին իրեն՝ այս բրօքականաին «Իու-  
րան»էն վկայութիւն բերելով նախապատութիւն մը որ  
ամէն ուրաթու ալօթքի մէջ կը յեղչեղուի իսլամ մըղ-  
կիթներու մէջ՝ «Ալլահումնա եէթիմ աթիֆալէհում, ուէ  
բամմէլ նիսասնում, ուէ իճալհում զանիմէթէն լէմուս-  
լիմին» Աստուած՝ անոնց (կեալուրներու) զաւակները  
որը ձղէ՝ անոնց կիները այրիացուր և անոնց հարսաու-  
թիւնը սուր իսլամներու»: Կաես իսլամներու մէջ առածի  
կարգ անցած հասնակալի պէս խօսքեր թէ «կեալուրա-  
րըն մարը, ճանը վէ նամաւը հէլալ տըր իսլամլարա»:



(Կեալու բներու ստացումքը, կեանքը և կիրք հալալ է իսլամին)։ Նոյն ատեն կը հաւատային ալ թէ թիւրքերոյ հզօր դաշնակիցները՝ Գերմանիան ու Աւստրիան հաւանութիւն տուած և արտօնած են զիրենք ջարդել ու բնաջինջ ընել Հայերը...



### «Մրդան» Եագուպ

Քիլսանի Արեւելիսկոպոսը ի ձեզ իրէ մարբոսացած

Յէլզին, վերադարձին համբան կը հանդիպի Շղափ-  
թան անուն քիւրաի գիւղ մը, նոյնպէս Տիգրիսի եզերքը,  
պատկան Ռաման աշխրէթին, ուր հիւր կ'ըլլայ անոր՝  
Իպրահիմին այրիին՝ Փէրիխանին։ Ասոր՝ որդիներէն Ամէ-  
րօ՝ կիրաւայրենի մարդասպան աւազակապետ մը, որ

քանիցս մա՞նուան դատապարտուած «Հէյիթէն վէ Մէյիթէն» (ողջ կամ մեռած) ձերբակալուելու Սուլթան ական «Իրատէի Սէնիյէ»ն ելած էր, լեռնէն, իր փախստ ական որջէն զիւղ կուղայ մօրը փէրիխանին հրամանին վրայ, որուն Ֆէյզին կ'աւետէ թէ «Աֆու Եէհանէ» ի (կայտեբական ներման) արժանացեր է, թէ Խալիֆային այս շնորհին փոխարէն ինք ալ ընելիք բաներ մը ունի անոր և մարդարէին հաճութեանը արժանանալու համար, այն է Ջարդիլ և կոտորել բոլոր Հայերը, որոնք քէլլէկներով պիտի զրկուին, Սուսուլ երթալու պատրուակին տակ»:

Այսպէս, Ֆէյզին վիլայէթին ամէն կողմը տարազիր Հայերը աքսորի համբուն մէջ կողոպտելու, բնաջնջելու գոյնային ամենաանարկու կարգադրութիւններ ընկէ վերջ՝ քիւրտ, արաբ և չէրքէզ աշիրէթապեաներու, շէյխերու և էշրէֆներու հետ կը վերադառնայ Տրիպոլիական երկր և հոս կը գտնէ ամէն բան կազմ ու պատրաստ, եղած որոշման և արուած հրահանգին համեմատ:

### ՁԵՐԲԱԿԱԼՈՒԹԻՒՆՆԵՔ ԵՒ ԲԱՆՏԱՐԿՈՒԹԻՒՆՆԵՔ

1915 Ապրիլ 16 Ուրբաթ օր սկսան ձերբակալութիւնները քաղաքին մէջ: Այդ զիշերը կը պաշարուին բոլոր Հայոց թաղերը. փողոցներն ու տանիքները լիցուած զբաւած էին ժանտարմաներ, չէրքէզներ ոստիկաններ, գանդներ և միլիսներ: Փախստական զինուոր (ֆիրաբ) փնտռելու պատրուակին տակ ասաները խուզարկըւեցան մէկիկ մէկիկ, ամէն ինչ զէնք որ գտնուեցաւ զբաւուեցաւ և ձերբակալուեցան 300է աւելի երիտասարդներ՝ որոնք սակայն փոխանակ «Ախլ վէ սէվլը սաքէրի»ի կեդրոնները յանձնուելու, առաջնորդուեցան կեդրոնական բանտը:

Ապրիլ 19ի երկուշաբթի օրը սկսան ձերբակալութիւնները ազգային մարտնչներու. ձերբակալուեցան հետզհետէ ֆաղաքական, երեսփոխանական, թաղական,

Տնտեսական և Հայկ. Բարեգործական Միութեան ազգային մարմիններու բոլոր անդամները, և սոսկ ձեւակերպութեան համար հարեւանցի քննութիւնէ մը վերջ ամենքն ալ զրկուեցան կեդրոնական բանտը:

Ապրիլ 21ին, Չորեքշաբթի օր, հայ կուսակցական շէֆերն ու կարեւոր անդամները, — Դաշնակցական, Հնչակեան, Ռամկավար — բռնուեցան ամենքն ալ և բանտերն ու զնտանները տարուեցան:

Մայիս 11ին կարգը եկաւ քաղաքին կարեւոր հայ ղէմքերը ձերբակալելու: Կաստլարութեան բոլոր հայ պաշտօնեաները, վաստարանք, աչքի զարնող մտաւորականք, վաճառական, սեղանաւոր, հողատէր, գործարանատէր, ճարտարապէս և կարող արհեստաւորներ, ամենքն ալ անխարաքար բռնուեցան և զնտաններու մէջ նետուեցան Հազիւ 50 անձ առնելիք սեհեակի մը մէջ լեցուցին, թիւսցին 300էն 350 հոգի, հանդիստի և դուրսի հետ յարաբերութեան առէն միջոցէ զուրկ Ադաեղութիւնն ու զարշահոտութիւնը այս զնտաններուն և բանտերուն, ուր նետուած էին հայ բանտարկեալները, ստակալի էր և աննկարագրելի:


«Գասք քահանայից»ն ալ չի խնայուեցան, իրենց կարգին անոնք ալ ձերբակալուելով բանա զրուեցան: Հայոց Առաջն. փոխանորդ Գեոր. Մկրտիչ վրդ. Չլլատեան, (որդի՛ Դատվանի Տէր Մկրտիչ քհնյ. Չլլատեանի) ինը քահանաներով, Հայ-կաթողիկ Առաջն. Գեոր. Անդրէաս Արքեպիսկոպոս Չէլէպեան՝ իր քահանայից դասով՝ թուով երեք, և Հայ բողոքականաց երէց՝ վեր. Յակոբ Անտոնեան նոյնպէս բանտարկուեցան Ընդհանուր թիւը Մայիս 27ին հասած էր 980ի:

ՀԱՅՈՅ ԿԱՐԵՒՈՐ ՄԷԿ ԺՈՂՈՎԸ

Երբ Ապրիլին Տիգրանակերտի մէջ ձերբակալու-

թիւնները ծայր տալ կը սկսին, նայ կուսակցութիւնները պէտք կը տեսնեն ժողով մը գումարել: Հնչակեան, Գաշնակցական և Ռամկալար չէֆեր, իրենց նետ առնելով երեքական կարևոր ընկերներ՝ Չլզասեան Մկրտիչ վարդապետի նախագահութեան տակ ժողով կը գումարեն Առաջնորդարանին մէջ, որ քիչ յետոյ Լեզնանուր ժողովի նանդամանքը կ'առնէ, զի ներկայ կը գտնուին կրօնական, քաղաքական և բոլոր ազգային միւս ժողովներու անդամներէն զատ՝ քաղաքին բոլոր կարևոր և մտացի անձնաւորութիւններն, ինչպէս նաև Հայ-կաթոլիկ և Հայ-բողոքական համայնքներէն ալ կարևոր անձեր:

Օրակարգը պարզ էր, այն էր թէ՛ «Հայ ժողովուրդը իր անձուկ միջոցներով ինքնապահպանութեան դիմե՞ր թէ վստահի կառավարութեան խոսումներուն եւ զինաբափ ըլլալով յանձնուի»: Երկար խօսակցութիւններ և ձեռք ու տաք միծաբանութիւններ իրարու կը յաջորդեն և զիրար կը խաչածնեն օրն ի բուն և ամբողջ գիշեր մը: Բոլոր կուսակցութիւնները միաբերան իրենց չէֆերալի ու ներկայացուցիչներով, Հաճի Յարութիւն Գասապեան՝ (Թարգման և գեր-նիւպատոս Ֆրանսական), Գաղապեաններէն Շրճիս (անգամ Մէճլիսը Իտարէի), և Տիրան՝ ու իր եղբայրը Աթթալայ, Տիգրան Իլլանեան՝ Թարգման միլայ-յէթի, Մտեփան Մաթոսեան, Տօնճեանները և փաստաբան Կիրակոս Ենովքեան՝ իրենց գլուխը ունենալով Մկրտիչ վրդ: Չլզասեանքը, կը սքնդեն թէ «Հայը ինքնապաշտպանութեան դիմելէ զատ ուրիշ ճար չունի, թէ մինչև վերջին փամփուշան ու մարդը գիմարելու է պաշտպանելով իր իրաւունքն ու նամուսը, «կաշին հնար եղածին չափ սուղ ծախելով», թէ երբե՛ք վստահելու չէ թիւրք «նէլլաս» կառավարութեան և «արիկայ» «Իթթիհատ մէթէրագըր ճէմիլէթի»ին ստապատիր խոստումներուն: Սակայն միւս խումբը՝ Գաղապեան Ամսի, Թրիէնճեանները, Եէկանեանները, Խանտէնեանք և Ընկերք իրենց



1. Ամեն Տ. Զաւեն Արեւայ. եղեպեան՝ Պատշարէ Հայոց Կ. Պոլ-  
սոյ.— 2. Յարութիւն Գասարեան՝ Իրանական դեր-նիւպատոս.— 3.  
Տիգրան Իվանեան՝ վիլայէթի բարձման.— 4. Յարութիւն Պոյանեան՝  
Վնսախի վանառական.— 5. Ասեփան Մ սրոսեան՝ մեծ սեմալ վա-  
նառական.— 6. Միսաք Շիրիլեան՝ անգալ Քալապաղեանքեան:  
Ս. Պատշարեան գաս ամենն ալ մարտիրոսաց սմ:



զլուխը ունենալով Տիգրանեան կաշատուրը, հակառակը  
էր սիւզեն ըսելով թէ «իրենց միջոցները անբաւական  
են, հազիւ մէկ ամիս կամ քիչ աւելի կրնան զիմանալ,  
անկէ վերջ յոսեղոյնը կը սպասէ իրենց» եւն: Տիգրան-  
եան կաշատուր՝ իր «Մէճլիսը Խաթէ»ի անդամ ըլլալու  
հանգամանքին զօրութեամբը Չլդատեան վարդապետը  
հասավարութեան միջոցով աքսորի՝ և հակառակորդներն  
ալ իշխանութեան յանձնելու իր ըրած սպառնալիքին,  
աւարելիօրէն տեղի կը տրուի և լրծովի ինքնապաշա-  
տանութեան զիմելու խնդիրը քուրը կ'իշխայ, որուն ամե-  
նատխտը արգիւնքը կը ծանրանայ ու կ'իշխայ ընդհա-  
նուր հայ բնակչութեան վրայ, ինչպէս նաև սրբազան  
մխարանութիւնը խանգարողներու և իրենց ամբողջ զեր-  
գաստանին վրայ:

### ԲԱՆՏԻՆ ՄԷՋ ՏԱՆՁԱՆԲԷ ԵՒ ԾԵՆԷՄԷ ՄԵՌԵՆՈՂՆԵՄ՝

Տիգրանակերտի նահանգին գահճապետը «մէլպուս»  
ճեյզլին և «ճէլլատ» վայրի՝ «ճէրբահ» ասքթի. Բէշիա պե-  
յերը, իրենց իթթիհատի քլիքին հետ կը հնարին չար-  
չարանքներու տեսակները, զիրար զերազանցող, պատ-  
մութիւնը նսեմացնելու աստիճան: Մտքերը լուսաւորե-  
լու համար բանաօրկելոյ վրայ ի գործ դրուած դանակու-  
ծամի, տանջանքի քանի մը տեսակը մխայն յիշենք, որոնց  
ենթարկուեցան հետեւեալները մա՛նտաւրապէս.

Գաշակցական չէֆիրէն Միհրան Պատթաճեան՝ վառ-  
դրուուն երիտասարդ մը՝ բնթացաւարտ Եփրատ Գօլէճի,  
Կիրակոս Օհաննէսեան, Տիգրան Չաքըճեան, Գասապ  
Էլանօ, Նալպանտ Յակոբ (Պօզոյ), սանտարազրծ Յակոբ  
ն. փօլիս Օհան՝ վարպետ սակերիչ և փորագրիչ:

Հնչակեան չէֆիրէն Ստեփան Չրաճեան՝ անդամ Ե-  
քեօփոխանական ժողովի, լու թրքապէտ խելաջի ու աղ-  
գասէր հայ մը. որդին կարապետ՝ մխալուրը Հապապ զիւ-

զին (Մբրահաթի գաղային մէջ Խթօռ-Սպարին) Եփրատի Գօլէճական, և միւս որպէն Խորթով՝ քարտուղար ընդհ. գառախազութեան նոյնպէս Եփրատ Գօլէճէն շրջանաւարտ:

Ուսմկալար չէֆերէն Յակոբ Օզասարեան՝ Խարբերգէ. Հօլէ գիւղէն, ընթացաւարտ Եփրատ Գօլէճի, Ամերիկայէն հայրենիք վերադարձած էր 1910ին. Տիգրան Իլվանեան՝ վիլայէթի թարգման և քարտուղար Հ. Բ. Ը. Միտթեան, ընթացաւարտ Այնթապ Գօլէճի և շատ խոտանալից երիտասարդ մըր Ստեփան Մաթոսեան՝ անդամ Քաղաքական ժողովոյ, քննիչ Հ. Բ. Ը. Միտթեան Տիգրանակերտի մասնաճիւղերու, վաճառական ու գործակատար ամերիկեան կազի ընկերութեան: Միւսաք Շիրիկճեան՝ անդամ Քաղաքապետութեան, Հ. Բ. Ը. Միտթեան անդամ և գործակատար Սինկէր ընկերութեան:

Ասանք, ինչպէս նաեւ գրեթէ ըսլոր մտաւորականները և իրենց ընկերակից միւս բանասարկեալներէն շատերը՝ բանալին մէջ տեսակ տեսակ զանախոսման ենթարկուելէ վերջ, ոմանք (նալպանա Պօզոն և ընկերք) ձիւրու պէս տաքերէն պայտած՝ պարացուցած են, ոմանց ալ մերկ սրտերէն տաքցած պոյտեր դարկած են երկաթէ խոշոր գամերով, ինչպէս՝ Միհրան Պասթաճեանի և ընկերներուն Ոմանց գլուխը մեքենայի մէջ գնելով ճգմած ջախջախած, տախկցուցած են գանկը... , ոմանք անգամահատուած են, բթամատերը մեքենայով ճնշած ք ձեւքի և սոքի եղունգները աքցանով քաշուած... ոմանց (սանարագործ Յակոբ) ամոլձիքը հանած, ոմանք ողջ ողջ քերթած, մորթազերծ ըրած են... , ոմանք մորթած (գասապ վահօ և ընկերք) և մարմինները զգասապլասնէն կախելով կտոր կտոր ծախած են, ոմանք ալ խաշուած են (փօլիս Օհան և ընկերք)... : Զարհուրելի էին տանջանքները. բանարկեալները ամէնքն ալ մահ կը վերնառէին. կ'ազիրսէին գնդակահար ընել գիրենք, կը ինչորէն:



այս շնորհը և փոխարէն կը խոտտանային իրենց ամբողջ հարատւութիւնը ապա Տանջուպնիքուն և գանակածուպնիքուն գտուժ գոչումը երկինքն ու երկիրը կը վազացընէր... սովայն թիւրք և քիւրա մարդագազանները ճիւղարէն կը հրճուէին ժարտիրոսներուն այս անլուր չարչարանքներուն ի տես



Մկրտիչ Վրդ. Չլղասեան

Տիգրանակեցի Հայոց Առաջնորդ — մաքսիրտ սյամ

Մկրտիչ Վրդ. Չլղասեանին չարչարանքը ստեղծել էր, զլուխ գործոց մը թիւրք ճիւղարտութեան Այս կենդանի ժարտիրոսը ենթարկուեցաւ անլուր խայտառակ նախա-տինքներու, և այդ վիճակով Տիգրանակեցի փոզոցները և չուկան ի ցոյց միւսայ խմանկերու՝ թմբկահար շէյխերու և տէր/իչներու աստճնարգութեամբ պատարուելէ վերջ կը վերագարձենն Մզկիթին բակը կառավարութեան շրջա-

նակին մէջ, և հոն կառավարական տաշտօնեաներու, իսկամ խուռն ամբօսին և շէյխերու ու թմբկահար տէրվիշնիրու, ներկայութեամբը՝ վրան քարխաղ կը թափեն և կենդանւոյն կ'այրեն...

«ԲԱՐԻ ՍԱՄԱՐԱՅԻ ՄԷ»

Հայ վիրաւորներն ու գանակոծեալները իրենց մահուան ժաման և ամենագանն վիճակին մէջ միակ անձի մը կը սպասէին, հայ տառապեալներու միակ բարեկամին — Ամերիկացի միախօնար Տօքթ. Սմիթնի, որ միննայն անձնուիրութեամբ օգնեց և մխիթարեց ու վերջին բողէին շատ մը մահափերձներու աչքերը գոցեց, հակելով անոնց սնարին քով, իբր Ատուծոյ քահանան՝ վերջին սղօթքը մրմնջելով առանց քահանայի թաղուող և ալքանոցը նետուող անբաղդներուն վրայ՝ լսելեայն Տօքթ. Սմիթն զեղ ու դարման ձրիաբար կը հայթայթէր, որուն որ կրնար հասնիլ, շատերու ալ դրամ, հացի պատաս մը և կամ ուրիշ ուտելիք մը, պտուղ մը գրգանին մէջ դնելով կը սանէր կուտար անտէր վիրաւորին, մահամերձին և կը մխիթարէր զայն։ Այս դժբաղդներն ու տառապեալները զինքը «Բարի Բժիշկ» կը կոչէին։ Ասկայն դժբաղդարար «բարի բժիշկն» ալ ազատ չի մնաց «ճէլլատ» վալի տօքթ. Բէշիրի ուշադրութենէն։ «Բարի բժիշկը» լսելով որ Չլզասեան վարդապետը կիտապա վիճակի մէջ թրքական հիւանդանոցին աստը նետուած է հետեւեալ օրն իսկ կը փութայ հոն՝ օգնելու։ Համար աւնոր կը դանէ զայն անճանաչ և անհնչացած վիճակի մէջ՝ երեսի վրայ գետին փռուած, ու պատանքի տեղ սեւ ալտոտ լաթ մը վրան ձգուած...։ վալին կը լսէ և շատ կոպտա կերպով կը յանդիմանէ «Բարի Բժիշկը» ու կ'արդիւէ անոր ալ Պէլէտիլէին հիւանդանոցը մտնելէ։

Տօքթ. Սմիթն, իր Տիգրանակերտ մնալը ալ անօգուտ

տաննելով, կ'ուզէ նախ իր կ'ընը զրկել իտարբերով մ'իսխո-  
նարաց քով և յետոյ ինքը երթալ: Քաղաքին դուռնէն  
դուրս ելլելու ասանը Միսիս Սմիթն մանրակրկիտ խու-  
զարկութեան մը կ'ենթարկուի ոտականներէն սլափի սե-  
նեակի մը մէջ փակուած իր ամուսինին ներկայութեան  
Միսիս Սմիթնին անութիւն տակ, մերկ մարմնոյն վրայ  
պահուած մանր գրերով պատած անզնկազիր մը կը բռնուի,  
ուզգեալ իտարբերի ամերիկեան նիւպատտին և միսիսու-  
րաց: Ասոր վրայ վալին նրաման կ'ընէ խաղաղիւ Տօքթ.  
Սմիթնին ասանը: Մեր, Տիգրանակերտ ձգած օրը գիշերով  
նիւպատտս Monck-Mason անդը. նիւպատտսարանի պաշ-  
տօնաթիւս զթերով լեցուն հակ մը, կնքուած գրկած էր  
Տօքթ. Սմիթնին ասանը, սրպէս զի ինք ալ յարմար տաթիւ-  
զրկէր իտարբերը՝ ամերիկեան նիւպատտս Mr. Daviceին:  
Այս հակը կը գանուի ու կը պատուի կատալարութե-  
նէն: Ասոր վրայ վալին կը վսնակ և դուրս հանել կու-  
տայ «Բարի բժիշկը» Տիգրանակերտի նահանգէն իր ընտա-  
նիքով միասին: Այսպէսով խեղճ Հայերը կը կորսնցնեն  
բարի, ճշմարիտ և անխախտ բարեկամ մը, իրենց վերջին  
ու միակ յոյսը:

### ՔԻՒՐՏ ԱԻԱԶԱԿԱՊԵՏ ՄԷ

Վալլին նրամանու, քիւրս Ռամմա աշխրէթապետ  
Շղաթթանցի Ամէրօ Տիգրանակերտ կողմայ և իր առաջին  
այցելութիւնը կուտայ վալինն Ամէրօ կարճահասակ է,  
թխազոյն և ծաղկոտ երես մը ունի, զլուխը կայ քիւրսով  
ձերմակ էիւլան մը կէս կանպուն երկայն գոյնպոյն մե-  
տաքսէ կազմաներով զարգարուած՝ ինչպէս իր աշխրէթա-  
պետ ըլլալուն: Կնտոյի սեւ ապէկ մը երկայն մազերով  
վրան, կարմիր սարեով, և վրան զլուխը ամբողջովին  
փամփուռ, խանչէր, դամոյ և կեռ թուրը մէջքին, եր-  
կու վիցնարուածեան վրան և ձեռքը մալղէր մը: Լերան

այս կիսախայրենի եզեւնազորձ քիւրաբ, որ ոչ կարգալ ոչ ալ գրեւ գիտէ, ոչ բարոյականէ, և ոչ ալ քաղաքակրթութեանէ տեղեկութիւն ունի, որ իր կիսանքը անցուցած է մարդասպանութիւններ ընելով և առգտակապետութիւնը իրեն արճեատ ունի իբր հայրենական ժառանգութիւն, միշտ թափառական լեռներու վրայ, և ձերբու ձերպերուն ծանօթ, տասնեակ անգամ «Իրասէյի սէնյիլ»ով մտնուան դատապարտած «Հէյիթէն» կամ «Մէյիթէն» ձերբակալուելու նրամանը ելած է, այսօր կառք կը նստի մէպուս ֆէյգիին և ժանտարմա զօմանտանը չէրքէզ Ռուչաի պէյերուն հետ և գինուորական պատիւներով առօք փառօք կը տարալի վալիին ներկայանալու: Վալին սիրով կ'ընդունի Ամէրօն, և ֆէյգիին ու ժանտարմա զօմանտանըին ներկայութեան այսպէս կը խօսի իրեն՝ որ ֆէյգիին քիւրտերէնի կը թարգմանէ:

«Չուսկա Ամէրօ, քանի մը օրէն 700ի չափ երեւելի և հարուստ Հայեր քէլէկներով մեր հալէր պինպաշը չէրքէզ պէյի հսկողութեան տակ Մուսուլ երթալու պատրուակով արտար պիտի տարախն երբ գիւղը Շգալթիան հասնին, հոն Շաքիր պէյին նրահանպին հատածայն աշիրէթիդ միջոցով պէտի ոչնչայնես զանոնք: Եթէ իմանա՞մ որ մէկ հաս իսկ ինայած ես՝ անձամբ պատասխանատու ես իշխանութեան այս նրամանը կատարելուդ ի վարձ Մուլթանական պատուանշաններով և ընծաներով պիտի պատուեմ ու վարձատրեմ քեզ»: Ամէրօ իր հաւատութիւնը կը յայտնէ պատասխանելով. «Աէր սարէ մըն, սէր չալէ մըն» (զլխուս և աչքերուս վրայ):

Այսպէս, Ամէրօ կուտակալին և ֆէյգիին նրամանն ու նրահանպը ստնելով հետեւեալ օրն իսկ կը մեկնի իր գլուղը Շգալթիան երթալու քէլէկով, ստնելով իր հետ երկու կառքի բեռ պարան (քէնտիր), որ «թէքէալիֆի Հարպիյէ»ի կողմէն ընծայ արուած էր իրեն:

### ՊԵՉՈՒՄՆԻ ՄԱՐՏԻՐՈՒՄՆԵՐԸ

Վալիին հրամանով քննիչ յանձնախումբ մը կը կազմուի անմիջապէս՝ Ֆէյզիի նախագահութեան տակ Բանասարկուած և զընտանի մէջ նեղուած Հայերը, որոնցմէ ոմանց առջև ժամանակին Ֆէյզի ի յարգանս ձեռընկապ սպասած էր ժամերով, հիմա իր ներկայութեանը կը կանչուին իրենց մահուան դատարկճիւղը ընդունելու: Ֆէյզին աչքէ կ'անցնէ ամէնը, կարեւորագոյններու անուան մէկ ցանկը պատրաստել կուտայ շուտով, որուն համադրմամբ 636ի կը հասնի:

1915 Մայիս 30ի կիրակի տատօտուն ցուցակին մէջ նշանակուած բանտարկեալները, որոնք Տիզրանակերտ քաղաքին և նահանգին Հայութեան օլէկը կը կազմէին, միլիոններով և զերբէզներով շրջագրատուած հալէր պինպաշի Շաքիր պէյի հրամանատարութեան տակ 23 քէլէկներով ձախայ կը հանուին Մուսուլ արքայութիւն:

Յունիս 1ին է որ քէլէկները կը հասնին Շգալթան և հալէր Շաքիր պէյ արդէն ձամբան Ամէրօյի հետ աննուած և պէտք եղած կարգադրութիւնն ա Վիլանը չինած էին ըլլալիք դրժարութիւններուն, ըստ որում քէլէկները զեռ Շգալթան չի հասած՝ յարձակում կը կրին քիւրտ աւազակներէ՝ որոնք երկու հրացան կը կրակին քէլէկներու վրայ ի նշան անձնատուութեան Շաքիր պէյ հրաման կ'ընէ միլիոններուն հալածել «Էշքըհա»ները, որոնք լուր կը բերեն թէ երեք քիւրտ սպաննուած և միւսները փախած են: Շաքիր պէյ իր քէլէկին վրայ ունէր ամենէն նշանաւոր և հարուստ Հայերը, որոնք էին Կաղապեան Ամսիհ, Ճրճիս և Տիրան, իրաչատուր Տիզրանեան և առանեակ մը տրիչներ, որոնք կը համոզէ ըսելով թէ քանի որ ձամբան վտանգաւոր է թող 23 քէլէկին վրայ զանուոյ ըագմութիւնը իրենց բոլոր գրամները բերին և պահ զնեն և հալէր քէլէկին վրայ իրենք ցուցակ մը թող

քոնեն, հաշիւներու և գրամի քանակը, սուսդին անուներ արձանագրեն մէջը: Ինք ալ կը խոստանայ զինուորական զլխաւոր ուժը իր քէլէկին վրայ հաւաքել՝ իրենց և գրամներուն ապահովութեանը համար: Բիշ ժամանակի մէջ վեց հազար ոսկիէն աւելի գումար մը կը հաւաքուի և կը լեցուի հազարապետ ևսլէր Շաքիր պէյին պայտասկին մէջ:

Քէլէկները երբ Շղալթան կը հասնին Յոնիս Գին, այդ օրն ու զիշերը հոն անցնելու համար ցամաք կը մօտենան: Ետէր պէյ Ամէրօյի այցելութիւնը կ'ընդունի որը քիչ մըն ալ ուստիք բերած էր հետը Շաքիր պէյին և իրեն ծանօթ ու բարերար աքսորեալներուն համար: Կը պատմէ թէ իրենց զիւղէն վար քիւրա աշխրէթներն ու աւազակները բռնած են Տիգրիսի աջն ու ձախը՝ քէլէկները կողպակու և վրայի մարդերն ալ սպաննելու համար: Եոյն սասն բարեախարար իր ասպնջականութիւնը կը գնէ ևսլէրին և իր բոլոր հետեւորդներուն ու ճամբորդակիցներուն հրամանին սուր կարծ խորհրդակցութենէ մը վերջ կ'որոշուի ևսլէրի քէլէկէն սկսեալ կարգաւ բոլոր քէլէկները պարպել, և ոչսպութիւն չի գրուելու: համար վեցական հոգի ցամաք ելլեն և Շղալթան զիւղը Ամէրօյի բրած կարգապութեան շամմատ հիւր բլլան իր սրտած անգերն ու սուները և անոր պաշտպանութիւնը վայելեն մինչև նոր հրահանգ ստանան վիլայէթէն: Որոշումն ու հրամանը ի գործ կը գրուի, աստջին վեցեակը մ'իլիմներու և չէրքէզներու պաշտպանութեան սակ զիւղ կ'աւաջնորդուին և հոն գարանի սպասող Ամէրօյի աշխրէթէն կը բռնուին և մերկացուելով չուաններով կը կապուին ու կը տարուին զիւղէն հետ: Պէզուանի ձորը Այսպէս կարգաւ բոլոր աքսորեալները, վեցական հոգի չուաններով կապուած՝ կը հաւաքուին ձորին մէջ: Պէզուանի ձորին անցքերն ու բարձունքները կանխաւ բռնուած էին Ամէրօի հրամանաւ իր Ռամմանի

աչիրէթի մարդիկներով: Երբ ամէն բան պատրաստ էր, ետէր Շաքիր պէյ կը հասնի իր գահիճ չէրփէզներով և միլիտով, նշանը կուտայ, և ահա ջարդը իր ամենա-անարկու, անհրատեսիլ զայրոյթովը կը սկսի... հրացան-ներու որոտումը, գնդակներու շաշխւնը, սուրերու և տա-պարներու շառաշխւնը, զոհերու ազմուկն ու վայնա-սունը, գոռումն ու գոչիւնը ամբողջ օդը կը թնդացնեն... սմանք կ'աղօթեն, սմանք ալ պոտա ու գոռալով օդ-նութիւն կը խնդրեն, բայց ի գո՛ւր... երկինքը լուռ և երկիրը անզուժ գոխք դարձած է...: Երեք ժամ վերջ ձորը լուժիւն կը տիրէր, դիակներու շեղջեր գետին փռուած են կոյտ կոյտ հոս ու հոն... Առուակը Պէղուա-նի ձորին՝ ժամերով արիւն կը հոսէր... կարմիր ետէրի հրամանով միլիա գասապներն ու չէրփէզները ձորը կ'իջ-նեն դիակները քննելու, և անոնք որ տակաւին կը մա-քառին մահուան հետ՝ գլուխները կորելով կը վերջացնեն գործը...:

Այսպէս, 1915 Յունիս 9 Չորեքշաբթի, չարագոյժ օրուան արեւմուտին հետ կը մարի նաև Տիգրասականի Հայութեան 636 բնօրեակներու, մասսորական, վաճառա-կան և կարեւոր դէմքերու արեւն ալ Եւ անոնց դիակ-ները վայրի գազաններու և գիշատիչ թռչուններու կեր կ'ըլլան...:

Մօտ 15 օր վերջ իժերու այս ծնունդները — վալին և Ֆէյզին — կը հրաւիրեն Ամէթօն Տիգրասականի, վարձատ-րելու և սուլթանական նշաններով զինքը պատուելու պատրուակով: Տասը չէրփէզներ, որոնք վալին կողմէ յատկապէս դիմաւորել կ'երթային Ամէթօն՝ զայն կ'սպան-նեն Անպար Չայի ազրիւրին քով ու վերջ կուտան այս սուսմին:

ՏԻԳՐԱՆԱԿԵՐՏԻ ԻՍԼԱՄՆԵՐՈՒՆ ԱՐՏԱԿԱՐԻ ԺՈՂՈՒՆ  
ՈՒ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

Իթթիհատի դօմիթէն այս օրերուն մէջ մէպուս Ֆէյ-



Քիւրքի սիւրբազարի մարգարիտները



զիի նախագահութեան տակ մեծ և ընդհանուր ժողով մը կազմեց, ուր ներկայ գտնուեցան նազիպ էլ-Էշըթի Պէ-քիր պէյ, միւֆթի Իպրահիմ էֆ., քաղաքին բոլոր էշ-րէֆները, շէյխերը, իւլէմաները, խօճաները, պէյերը և փաշաները ու բոլոր իթթիհատականները: Օրակարգն էր Տիգրանակերտ նահանգին մէջ գտնուած նարիւր յիսուն նազարի մօտ Հայերու զանգուածովին բնաջնջումը: Երկա-րօրէն վիճարանութեան կը գրուի նարցը. «Ամէն նայ անխը-նայ արու և էգ, մեծ ու պզտիկ և կրախայ, ջարդելու է, այս արածուած է Մուհամմէտի Գուրանին շէ-րիաթովը՝ թէ կրախաներն ու զեղեցիկ սեռը խնա-յելու է»: Այս մեծ և ընդհանուր ժողովին մէջ մինակ մէկ անձ, միւֆթի Իպրահիմ էֆ. կը պնդէ թէ «պէտք է 12 տարեկանէն վար երկսեռները խնայել զանոնք իսլա-մացնելու համար, և զեղեցիկ կիներն ու ազջիկները նա-րէֆները առնել՝ անտնցմով քիւրտ ցեղը զեղեցիկացնելու համար»: Ժողով, խորհրդակցութիւն, թեք ու գէմ վիճարանութիւններ երեք օր կը տեսնն Ուլու ճամբին մէջ: Ի վերջոյ կառավարութեան, քաղաքական և զինուորական իշխանութիւններն ալ, մեծ մասամբ տե-ղացի, ներկայ գտնուելով և իրենց խորհուրդն ու կարծիքը յայտնելով շուտով ժողովը կը հասնի նպատակեալ ծրա-զըրին: Վերջապէս Թիւրքերէ և Քիւրտերէ բազկա-ցեալ այս արտակարգ ժողովը միաձայն կ'որոշէ և կը վճռէ «Հայոց բնաջնջումը զանգուածովի, բայց միայն խնայել ընտրանօք զեղեցիկ սեռին»: Ամէն մարդ կ'երդ-ուրննայ Գուրանին վրայ՝ սպաննել, չի խնայել իր գրա-ցին, ընկերը, գործակիցը, բարեկամը կամ ծառան, չի խնայել կաթընկեր մանուկն ալ և եթէ մէկը անատատէ այս որոշումին, և համարձակի օգնել Հայու մը, պիտի սպաննուի իր գաւաճան կրօնի. ո՛վ որ ալ ըլլայ՝ Որո-շումը կը ստորագրեն ամենքն ալ և այս մահալճիւրը կը յանձնուի վալի «ճէլլատ» տօքթ. Բէշիտ պէյին՝ մէսուրու



Հայ սարագիր մայրը իր ձագուկով

Ֆէյզիին ձեռքովը: Այսպէս ահա պատրաստուեցաւ բնա-  
ջընջումի տաամը, և վարագոյրը բացուելու պաշտօնա-  
կան հրամանը շուտով տրուեցաւ...:

### ՈՐՈՇՄԱՆ ԳՈՐԾԱԴՐՈՒԹԻՒՆԸ

Ա. Մարտինի մէջ  
Միւրեւարքի Պէտրոսի, Գօմիսէր Մէմուհ  
Է. Մարտինի Հայոց շարքը

Վալին ու Ֆէյզին, փառարանուած ու քաջալերուած  
Պոլսոյ իշխանութիւնէն, իթթիհատի կեդրոնէն արուած  
ծրագիրը յաջողութեամբ զլուխ հանելուն համար, կ'որո-  
շին մէքթուպճի Պէտրէտտին և զօմիսէր Մէմուհն պէ-  
յերը, որոնք մեծ ընդունակութիւն ցուցուցին իրենց  
պաշտօնի կիրառումին մէջ, Մարտին զրկել: Պէտրէտտին  
միւթէսարիք կը նշանակուի Հիւմի պէյի տեղ, որ բարի  
անձնաւորութիւն մը ըլլալով ջարդի հրամանին զործա-  
գրութեանը անսաստելուն համար կ'աքսորուի Մուսուլ,  
իսկ Մէմուհն պէյ կը նշանակուի փօլիս միւտիլի Ասնց  
տրուեցաւ պէտք եղած հրահանգը, և լիազօրութիւն՝  
ամէն միջոցներով բնաջնջելու ոչ միայն Մարտինի Հա-  
յերը՝ այլ նաև Տիգրանակերտի այն բոլոր հայ տարա-  
գիրները, որոնք անկէ պիտի անցնէին:

Պէտրէտտին և Մէմուհն, առանց մեծ աշխատու-  
թիւն թափելու, Մարտինի մէջ զտնուող իթթիհատի  
զօմիթէիս և համախոհներու օգնութեամբ կը յղանան  
զիւային ծրագիրը, այն է՝ Տարայի և Ռաս էլ-Այնի շուրջ  
հին ժամանակներէ (Հապմայեցիներէ շինուած) մնացած  
գատարկ և պատրաստի հորերը, զեանափոր նկուղներն  
ու զնաանները գերեզմանը ընել Տիգրանակերտի, Մար-  
տինի և անկէ անցնող բոլոր հայ տարագիրներուն:

Միւթէսարիք Պէտրէտտինի և փօլիս միւտիլի Մէմ-

առնի հետ միասին Մարտինի ջարդերուն պատասխանա-  
առ են հետևեալ անձերը, որոնք զորձակիցան այդ  
գիւային ծրագիրը յլացող հրէշներուն, ասոնք են.



Գերապայծառ Մալօնան  
Մարտինի Հայ-Կարգիկ Արեւայիակոպոսը  
մարտիրոսացած

Ապտիւլլահման Գառլաս, քաղաքապետ իըտըր Չէ-  
լէպի, Ապտիւլլիզապ Չէլէպի Շահթէնէ, Մուհամմէտ  
Կուպաչօ, Ապտիւլլահ իըտիր, «լէրկի միւտիրի» Նէնլպ  
էֆ. և «սէվզընաթ մէմուրը» Ապտիւլլէքէրիմ էֆ.:

Ասոնց ամենուն քով տակաւին կը գտնուին շատ

մը գեղանի հայ կիներ ու աղջիկներ, որոնք մեծ անձկութեամբ կ'սպասեն իրենց ազատութեան օրուան:

Երկու հազարէն աւելի հայ-կաթողիկէ և հարիւր ընտանիքի չափ ալ բողոքականներ մի'աջն Մարտին քաղաքին մէջ ջարդուեցան ամենատակալի կերպով: Գիրապայծառ Մալոսան Արք-եպիսկոպոս և Պօտուրեան Յովհաննէս վարդապետ, Տէր Մկրտիչ Գալիւանեան և բոլոր քահանայից գասը, թուով 17, ինչպէս նաև բողոքականաց երէց Ըսոֆ Սէլիմ ձըրճիս, մարտիրոսացան ամենամեծ կերպով: Միւսնոյն բանը կատարուեցաւ նաև ամբողջ Մարտինի սանճազին մէջ և ամենաճարկու կերպով:

Ամերիկացի միսիօնարներէն Տօքթ. Թ՛հօմ, Մր. Անտրըս և Միս Ֆընանկա, հայ տատապեալներու անձնուիրութեամբ օգնելու և մխիթարելուն համար, անպոթ Պէտրէատինի կողմէ աքսոր կը զրկուին 1915 Օգոստոս ամսու մէջ: Ասոնց քով պահ գրուած էին տատապեալ աքսորական Հայերէ 7000 ոսկի իրենցմէ ողջ մնացողներուն և կամ իրենց մահէն վերջ իրենց ամերիկացեակ պարտզաներուն զրկուելու համար: Միւթէտարըֆ Պէտրէատին այս բոլոր գումարները կը բռնադրուէ միսիօնարներէն, 3 Օգոստոս 1915ին, զանոնք աքսոր զրկելէ առաջ: Տօքթ. Թ՛հօմ զիս Սերատիա չի հասած ճամբան կը մեռնի չի գիմանալով իր տեսածներուն: Թէև Մր. Անտրըս կը հասնի Ամերիկա Միս Ֆընանկայի հետ, բայց ա՛ն ալ մտահոգուելով իր ժողովուրդին և իր աշակերտներուն համար, որոնք մեծ մասամբ չարաչար կերպով մահացուած էին, ինք ալ աչքերը կը գոցէ և կ'երթայ յախտնականութեան գիրկը:

Ամբողջ Մարտին քաղաքին մէջ հազիւ 200 ընտանիք, անոնք ալ տասանորդուած, ողջ մնացած են:

Բ. Տիգրանակերտի նահանգին միւս գաւառներուն,  
գաւառակներուն եւ գիւղախումբերուն մէջ:

Ամէն սանձագ, գազայ եւ միւտիրիյէթ իր սահմանին մէջ գանուող հայ զիւղացիները տեղահան ընել սկսաւ միլիտի, քիւրա աշիրէթապետներու եւ անոնց աշիրէթներուն միջոցաւ՝ արտօնելով զանոնք զործել ըստ կամս եւ ըստ հաճոյս կտուաւարութիւնը, նախ բոլոր էրիկ մարդիկը «ամէլէ թապուրի»ն զրկելու պատրուակով հաւաքեց, որոնք՝ ճամբան ձորերու մէջ կողոպտուելէ վերջ չարաչար սպաննուեցան ի վերջոյ սկսան անտէր ու անպաշտպան մնացած կիներն ու երախաներն ալ բռնի դուրս հանել իրենց տուներէն ու օճախներէն, ու ծեծի տակ խումբ խումբ Ռաս էլ-Այն եւ Տէր-Չօր քառեցան՝ առանց արտօնուելու որ ու է պատրաստութիւն տեսնեն ճամբու համար, միտայն ինչ որ կրնային շարակնուն եւ ուտերնուն վրայ վերցնել հետերնին առին՝ հետխտն քալող տառապանքի եւ ցաւի այս զաւակները... Աստուած իմ, ի՛նչ գոռում գոչում կիներու, աղջիկներու եւ երախաներու, որոնք անգիթօրէն, ծեծի տակ կը բռնդատուին ձգել իրենց հայրենական օճախը — երէկի հանգիստը — եւ ծեծի ու խաւազանի տակ, անօգնական ու անպաշտպան, քալելի հուրի եւ սուրի մէջէն, յանձնուած անխիղճ եւ անաստուած թշնամիներու, մարդակեր բորենիներու կամքին ու հաճոյքին... Երթալ իրեն անձանօթ վայրերն ու անապատները, հեռաւոր զողզոթաները, աւելի չարչարուելու, տառապանքի եւ խաչելութեան ամենասարկուն տեսնելու համար...:

Միլիաններն ու փիւրտերը ամենասնգութ կերպով վարուեցան այս բունաշուրկ անմեղ կիներու ու երախաներու երամակին հետ կը մերկայնէին զանոնք իրենց ամէն ունեցածներէն, հագուստներէն եւ պատիւէն... Դոմանք մինչև անգամ մորթազերծ ըրին... չէին խնա-

Suramphelirye afriq lu wifoph



յեր ոչ մի սրբութեան, կը քշէին կրօնիւրու և երախանե-  
բու այս անտեր ու անօգնական երամակը՝ առանց գուր  
ու գազար տալու, որոնք ոչինչ աւելին տակիք բացի  
վայրի կանաչ խոտերէ... գեղեցիկ կրօններն ու աշխիկները  
կ'ընտրուէին և հարէմները կը քաշկատուէին տարազրու-  
թեան երկաշն ու անխժեղ ճամբուն մէջ, իսկ աղեղներն  
ու երախաները անղթօրէն, տաննակներով ու հարիւր-  
ներով կ'սպաննուէին ամէն օր և տարազրութեան  
ճամբուն վրայ անխժեղ կը ձգուէին ցան ու ցիր... կիր  
վայրի գազաններու և զիշատիչ թռչուններու:

Միլիոն բանակը, ժանտարեաները, քիւրա աշիրէթ-  
ները և Չէրքէզները գործի վրայ էին գիշեր և ցօրիկ  
Տիգրանակերտ վրայէթին բոլոր տանձագնորուն, գազա-  
ներուն և զիւզախումբերուն միւսերիցէթներուն մէջ զրու-  
նուող հայ զիւզերն ու աւանները ամբողջովին կողոպ-  
տած, փճացուցած և բնակչութիւնն ալ տարազրութեան  
և աքսորի ճամբուն վրայ տասանորդած էին:

Կարգը եկաւ Տիգրանակերտ քաղաքին:

#### Գ. Տիգրանակերտ քաղաքին մեջ

1915 Յուլիս ամիսը յատկացուած էր Տիգրանակերտ  
քաղաքին հայ բնակչութիւնը տարազրելու և զանոնք  
աքսորի ճամբուն մէջ բնաջնջելու: Արիւնտարու Յէյզին և  
գազանապրտ վալի Բէշիս՝ ըստ տեղական Արսախայ կարգի  
ժողովոյ որոշման՝ իթթիհատականներու միջոցաւ հրահանգ  
տուած էին ամէն կողմ բոլոր իսլամներուն չի խնայել  
ս և է Հայու, անաստուղին անձը անանց փոխարէն գոհել  
սպաննալով:

Միլիոն հազարապետ էաթին գատէ Շէկզը պէյ և  
ժանտարմա գօմանաանը Չէրքէզ Բիւշաի պէյ, ամէն օր  
կէսօրէ առաջ քանի մը փօլիսներով և չէրքէզներով հայ  
տունները կը մտնէին, կ'արձանագրէին տան անգամները,  
և միլիոններէն սղահակներ կը գնէին դրան առջեւ, ար-



Տարալիք շախմատի արկածնային միջ մտնելու կը փնտրեն արքայի ու հարսու



զիւելով զուրսի հետ յարարեալ թիւնք: Դոյն օրը արեւ-  
ւամուտէն յետոյ բռնի ձամբայ կը հանէին մօտ հարիւր  
ընտանիք, խումբ մը Մարտինի ձամբով գէպի հարու,  
ուրիշ խումբ մը Գարապաղէի ձամբով գէպի արեւմուտք  
կը զրկուէին Մարտին, Տարա, Ուաուէյլէի ձոր, Ռաս էլ  
Այն, Դեպին և Տէր-Չօր երթալու՝ միլիսի և չէրքէզ-  
ներու հակադաժեամբ՝ անոնց քմահաճոյքին խալալիք:  
Անհար է նկարագրել աքսորեալներու ազիտորմ ճիշերը,  
աղաղակներն ու պոզտանքը, երբ մութին, փօլիաներ,  
ժանտարմաներ, չէրքէզներ և միլիաներ տուները կը  
մանէին և բռնի կիներու և աջիկներու ձուքերէն և  
մաղերէն քաշելով ու քաշկոտելով զուրս կը հանէին ու  
կը սանէին զանոնք...:

Գերապայծառ Անգրէաս Արքեպօս Չէլէպեանը աքսոր  
զրկուեցաւ իր հօտին, Ամին Սապաղի ընտանիքին և  
ուրիշ հայ-կաթողիկ հարուստ ընտանիքներու հետ միասին:

Վեր Յակօր Անտոնեան ընտանիքով, իր զեռային  
Մաւլեան Պեարտին՝ և ընտանիքին, և ուրիշ շատ մը  
բողոքական ընտանիքներու հետ Գարապաղէի ձամբով  
կ'աքսորուին՝ ու կը նահատակուին ամենքն ալ: Հո՛ս է  
որ երեսփոխան Ստեփան Չրաճեանի յարգելի Տիլինը,  
Տուտու, և ուրիշներ մտրթազերծ կ'ըլլան...:

Անգլիական հիւպատոսարանի պատուոյ թարգման՝  
Տօքթ. Սակեան Թոխալեան (ընիկ Այնթապցի), ամիսներ  
ատաջ աքսորուած էր Էրզրում և հոն մահացուած: Իր  
կինը Շամիրամ երկու զաւակներով և կնոջ քոչրը Վիդ-  
թօր՝ կին Ստեփան Մաթոսեանի՝ բոլոր զաւակներով ու  
պարագաներով, իրենց գրացի Օսման Էֆ.ի սրբօրոյն  
պաշտպանութեանը տակ և անոնց կառքովի ու անա-  
տուններուն միջոցաւ կը սարուին Ազ-Փինար, վեց ժամ  
հեռու Տիգրանակերտէն, Օսման Էֆ.ի զիւրը Մարտինի  
ձամբուն վրայ Շամիրամի և Վիդթօրի հայրը հանգուցեալ  
Տօքթ. Կարապետ Փիրինճեան (Ազգապետ Տիգրանակեր-

2. In the day of the summer people in the



տի բողոքականաց) 25 տարի Օսման էֆ-ի տանը և բոլոր գերդաստանին, որ իր գրացիներն էին, բժիշկն էր: Շամիրամի էրիկը Տօքթ. Ոսկեանն ալ նոյնպէս իր աներօջ, Տօքթ. Կարապետէն վերջ 10 տարի այդ գերդաստանին բժիշկն էր եղած: Շամիրամ իրենց 35 տարիէ ի վեր գրացի և բարեկամ, իր հանդուցեալ հօր և էրկան բարիքը վայելող Օսման էֆ-ի սրղուոց խոստումին վատահետք իր զաւակները, քոյրը Վիզիթորիան, նոյնպէս զաւակներով, կ'առնէ և կը հետեւի անոնց զիւզը երթալով, հոն սրաչապանուելու համար: Սակայն, զիւզին մօտ, Շամիրամ ալ Վիզիթորը մերժելով Օսման էֆ-ի ազոց իրենց կինը ըլլալու աստճարկը, նոյնպէս իրենց ընկերները մերժելով տւանալ իրենց Սուրբ Հաւատքը, բոլորն ալ Օսման էֆ-ի ազոց և Ադ-Փինարցի զիւզացիներու ձեռքով չարաչար կը սպաննուին, կը մարտիրոսանան զիւզէն դաբա՝ իրենց բոլոր զաւակներով:

Յրանտական հիւսպատոարանի թարգման և pro-consul Հաճի Զարութիւն Գասապեանի կինը Կասար և երկու ալջիկները Ռօզ ալ Վիրժին, նոյնպէս տարազրուեցան իրենց կարգին և ճամբան նահատակուեցան ամենքն ալ, միայն Լեւոնը, ինչպէս յիշած եմ կանխաւ, կը յաջողի պահուիլ ծակէ ծակ, մինչև 1917 Գեղտեմբեր 7, անկէ վերջ կը փախի քիւրախ տարազով և կ'ազատի:

Հայ տարազիներէն մեծ թիւ մը, Տիգրանակերտ քաղաքին հարաւը մէկ ժամ հետու, Չարոխիկ զիւզին մօտ, Գօզան Տէրէի մէջ չարաչար սպաննուած և յօշոտուած էին միլիաներու և քիւրախու ձեռքով: Իթիթիւսառ ճէմիլյէթին անդգամօրէն խորհուրդը կը յղանայ հաւաքելով այս մեռելներուն զիւակները, էրիկ մարդոց զուխը ձերմակ փաթթիկ կուտայ և կիներուն ալ լաջակ, ու այդ վիճակին մէջ լուսանկարել կուտայ: Բազմաթիւ օրինակներ Գերմանիա և Պոլիս կը զրկեն, կցեալ աստպատիրտեղեկութիւններով, զրպարտելով թէ «Հայ ապոստամբ-

ներն ու ֆեսայիները այսպէս անզօրէն սպանած են խեղճ և բարեմոյն քիւրա մարդիկը, կիներն ու երափառները: այս պատճառաւ տեղացին իշխանութիւնները անկարող եղած են զսպելու քիւրա աշխրէթներու բարկութիւնն ու ցասումը՝ ընդդէմ Հայոց» և ըն և ըն՝ Այս կարգի լուսանկարներ տպելով ցրուեցին նաև ս'չ միայն Տիգրանակերտի վիլայէթին ամէն կողմը, այլ նաև ուրիշ վիլայէթներու ալ զրկեցին՝ զրգսելու և բարոքեցնելու համար քիւրա, թիւրք, արաբ և բոլոր խաւաններու ասելութիւնն ու թագուն գաղանային զգացումները՝ Հայոց դէմ:

Վարածատաղի հիւսիսային բնակիչներէն քիւրա թըրքա՛ն — Համխոխէ հեծեկազօր — աշխրէթը 24,000ի մօտ տարազիր Հայեր կողոպտեց և սպաննեց Շէյխման Տէրէսիի և Վայնաղ գիւղին մօտ Պիկաթլան ձորի միջև գտնուող եօթ ժամու տարածութեան վրայ: Սպաննուածները, արու և էղ, անթաղ, յօշոտուած վիճակի մէջ թաղուած մնացին ամիսներով ցիր ու ցան՝ և կեր եզան զիշատիչ թուշուններու և վայրի գաղաններու:

Այս զժոխային վիճակը տեսց մինչև 1915 հոկտեմբեր ամսուն վերջը:

Տարազիրներէն և արարականներէն անոնք որ յաջողեցան ամենապաւն անձնագրութիւնը կրելով հասնիլ Ռես էլ Այն, հոն այդ բեկորները յանձնուեցան տեղացի չէրքէզներու վայրագութեանը, որոնք իրենց կարգին անզօրէն կողոպտեցին և չարաչար, ամենախայտառակ մահուամբ սպաննեցին ու նետեցին գարիկէ ի վեր պարաստի պարսպ հորերու մէջ: Քանի՛ քանի՛ կիներ ու աղջիկներ կիսամեռ ջախջախուած վիճակի մէջ այդ հորերու յօշոտուած և նեխած դիակներու գլգակոյտին մէջ մնացին և օրերով կեանքը քաշկռտեցին ապրելու յոյսով... ոմանք ալ թո՛հ ու բո՛հին մէջ առիթն ու պատահութիւնը գտան կամաւ ինքզինքնին նետելու այդ հո-



Գերապաճառ Անդրեաս Չելեպեան  
Առաջնորդ Տիգրան սկեսի Հայ-Կարոլ իկներու  
մարտիրոսացած

րերուն մէջ՝ փրկելու համար իրենց պատիւը, և վերջ տալու իրենց անտանելի տառապանքներուն:

Ասոնցմէ ոմանք հրաշքով ազատեցան և հասան Հալէպ: Տիգրանակերտցի Կալաֆեան բարեկեցիկ ընտանիքէն երեք քոյրեր, Վարդուհի՝ 24 տարեկան, Հէրմինէ՝ 21 տարեկան և Թագուհի՝ 19 տարեկան, Հալէպ հասած են կիսամեռ վիճակի մէջ: Այս երեք քոյրերը տակաւին կը կրեն հուրի և սուրի, գնդակի և տապարի հարուածներուն հետքերը, և մարտիրոսութեան նշանները իրենց դէմքին ու մարմնոյն վրայ: Այս կենդանի նահատակները, որոնք կորսնցուցած են իրենց մարմնոյն գեղն ու ձեւը՝ կը պատմեն այնպիսի բաներ որ սիրտ չգիմանար, միտք ու երեւակայութիւն անգամ չի կրնար ըմբռնել, ազգաց պատմութիւնը կը սարսափեալով ժամանակը՝ ի լուր եղած ու գործուած այս զազանային եղեռներուն, որոնց նմանը արձանագրուած չէ տարեգրութեանց մէջ...:

«Կօզան» և «Շէյթան» տէրէները Տիգրանակերտի մօտ, Պէշտանի ձորը Շգալթիան գիւղին քով, Ռատուէյէի ձորը Մարտինի աւրնթիւր և Տարայի հռովմէական անդնդախոր զնտաններն ու զհանափոր նկուղները և Ռաս էլ Այնի գարերէ ի վեր պարսպ մնացած հակայ հորերը ինչև՛ր տեսան... Ի՛նչ ահարկու խուժուժ տեսարաններու հանդիսատես եղան... և որքա՛ն հազարաւոր զոհերու գիակները դէզ առ դէզ ընդունեցին իրենց մէջ և մարտիրոսներու ու նահատակներու ոսկրոտիքը մինչև և հիմա կը ծածկեն անոնց, մանաւանդ վարջի երկուքներուն յատակները...:

Ռաս էլ Այնի չէրքէզները, այս մարդակեր ըորենիները, իրենց սպաննած տարազիւր հայ ալջիկներու և կիկներու պիտու մազերովը շինուած և հիւսուած 25 մէթր երկայն հաստ պարան մը — երեք լևն արամազծով — ընծայ կը զրկեն իրենց Ապպոզիոնի՛ն՝ մէպուս Թէյզի պէ-

յին, որ այս քիւրտ ներոնին հիւրանոցի աճենամեծ գարգը և իր եղեոններուն փառապատկն է:

### ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ՔՆՆԻԶ


#### ՏՕԲԹ. ԻՍԴԱՅԻԼ ՊԷՅԻ ԱՔՍՈՐՈՒԻԼԸ

Կառավարութիւնը 400էն աւելի 1-3 տարեկան հայ երկսեռ որբեր հաւաքելով կը լեցնէ բողոքականաց զըպ-րոցին (Մեծ Կօնալին) շէնքին մէջ: Քանի մը ամիսներ լինածք կը տարուի անոնց: Բայց յանկարծ, որ մըն ալ կէտը կատքերու մէջ լեցնելով կը տարուին կամուրջը (քաղաքէն կէս ժամ հեռու, հարաւը, Տիգրին գետին վրայ Սարակինսոսներէ շինուած հին կամուրջ մը) և ողջ ողջ ամենքն ալ սոքերէն, ձեռքերէն կամ զլուխներէն բռնելով կամուրջին վրայէն կը նետեն ստրայող Տիգրիսին մէջ... մնացեալ կէսն ալ՝ ուրիշ որ մը Գարապաշ կը սանիրն (Տիգրանակերտի արեւելքը մէկ ու կէս ժամ հեռու գիւղ մը), ոմանց սոքերէն բռնելով, իրենց ուժը փորձելու համար, երկուքի կը ձեղքեն, ոմանց վրայ ալ իրենց խանչարներու կամ յոտոցի սրութիւնը փորձելու համար կ'անդամահատեն ձեռք, սոք, զլուխ, մէկ հարուածով կը կտրեն կամ մէկտեղէն երկու կտորի կը բաժնեն. ոմանք ալ ողջ նիզակներու զլուխը կ'անցնէին, և ուրիշներ ալ կատրած շուներու առջև կը նետեն յօշոտուելու համար... Եւ դազանարարոյ ճիւղով թիւրք լէխանութեան ներկայացուցիչները կը զուարճանան քորենի քիւրտերու և շէրքէզներու այս բարբարոսութեանց և վայրագութեանց ի տես...:

Տօքթ. Իսմայիլ պէյ, «Սըհիլէ միւֆէթթիլի» (առողջապահական քննիչ) որ մը այս վայրագութիւնը պոխարակելով բարեկամներու և մտերիւններու խմբակի մը առջև կ'ըսէ. «Եթէ Աստուած ներէ թիւրքին իր ամէն յանդանքները, մեղքերն ու մարդասպանութիւնները, սակայն այս անմեղ և դեռ անխօս երախաներուն չորս հա-



Տիպանակերտի Սարակկոնները՝ շինած կամուրջը՝ Տիպիտի վրայ .



րիւք որբուկներուն վրայ ի գործ գրուած արիկայութեանը համար, Աստուած պիտի դատէ և վերջապէս պիտի կործանէ թիւրք կայսրութիւնը: Բիշ վերջ Տօքթ. Իսմայիլ պէյ պաշտօնանկ կ'ըլլայ և ընտանեօք Պուլիս կը գրեւոր:

Տիգրիս գ'տը, որ ժամանակին դեռ մարդիկ այսպէս չար և զազան չեղած, կը ջրէր և կը պաղաքերէր Աստուծոյ գրախտը ստեղծած Ազամին համար, հիմա, սկսեալ իր հիւսիս-արևմտեան ակէն՝ կէօլճուկէն Պաքըր մատնով ճամբով, և հիւսիսային մեծ սկզբնական ակէն՝ Պըլզըլէյնէն Նէրիպի միջով և Տըպնէի վրայով հայ սպաննուած տարագիրներու և աքսորականներու՝ մեծ ու պզտիկ մարմինները բերաւ խառնեց Տիգրանակերտի անթիւ գոհերուն... Մինչև և վեց ամիս Տիգրիսի ջուրերը կարժիբ ու պզտոր հոսեցան... Այս ժամանակամիջոցին Տիգրիսի եզերքի բնակիչները կը գարշէին, չէին կրնար ուտել Տիգրիս գետին այնքան համեղ ձուկերը՝ որոնց միւսը հիմա գարշահոտ և փորը լեցուն էր մարդու մազերով ու ոսկորներով... Աւելի'ն՝ մինչև անգամ օրերով ու շաբաթներով շատ զիւղի բնակիչներ չի կրցան խմել Տիգրիսի զուլալ ջուրը, որ հիմա արիւնահամ էր և հոսած՝ ու հարիւրաւոր մարգերու մարմինները ալիքներուն մէջէն կը տարուէին շարունակ...:

### ՏԻԳՐԱՆԱԿԵՐՏԻ ԻՆՔՆԱՊԱՇՏՊԱՆՆԵՐԸ

Տիգրանակերտ՝ թէև 1895 Նոյեմբերի խառնութիւններու և ջարդերու անթիւ երեք օր զինացրեց և քաջութեամբ պաշտպանեց իր նամուսը յարձակող քի բոտերէն և զինուորներէն հարիւրակներ սպաննելով, իր զենքը պահեց և երբէ՛ք չի զիջաւ զայն իշխանութեան յանձնելու: Բայց հիմա՝ ցաւալի, մանաւանդ պախաբարելի է, որ անմիաբանութեան պատճառաւ ծունկի կրողալ և անոր անձնատուր կ'ըլլար իրտ ցաւալի է նաև, որ Գազազեան Ամին, 1895ի գէպքերու հերոսը, որ 15 օր զինադրեց իր

տանը և թաղին վրայ յարձակող կառավարական զինուորներու և ժանտարմաներու օգնութեամբ հազարաւոր խուժանին, որոնց պեան էր Ֆէյզիի հայրը Արիֆ էֆ., սպաննելով անոնցմէ տասնհազներ՝ քաջաբար պահեց իր զիրքն ու քաղաքին Հայերէն ստուար մաս մը, որոնք իրեն թաղը ապաստանած էին, ՚իմա կը տատամար իր նախկին առիւծաորութեան բարձրութեանը և վեհութեանը վրայ մնալ:

Սակայն և այնպէս ուրախալի և քաջալերիչ է որ շատ մը անհատներ իրենց անձնական քաջութեամբը փայլեցան և յաւերժացուցին իրենց անունն ու պատիւը՝ փրկելով իրենց ընտանիքը և ուրիշ ընկերներ: Ասոնց մէջէն քանի մը անհատներու անունները միայն յիշեմ:

Մարտինցի Մարտօ, Հազրօցի Կիրակոս, Չալիզա վաթճի Մընճօ և Իսրիբ օլլու Մարտօս Ասոնք մէկ մէկ բէվօլլէր կամ հրացան ձեռք ձգելով, շաքաթներով, ամրաներով և տարիներով գիմագրեցին շարունակ փոխելով իրենց զիրքերն ու տեղը, այս ծակէն միւս քարայրը, այս հորէն ան մազարան փախչելով ու անդադար կառուելով գիմացան թշնամիին, մանաւանդ անօթութեան, մերկութեան, ցուրտին, ձիւնի և անձրևի տակ շարունակ հալածական... բայց տոկացին, գիմացան, պահեցի՛ն իրենց զէնքերն ու զիրքերը, ու վերջապէս պատուով ազատեցան իրենց հետ ազատելով նաև ուրիշներ:

Մարտինլի Մարտօն օր մը շատ նեղը կ'իյնայ մատնիչ մը մեծ վարձքի փոխարէն Մարտօյին և ընկերներուն պահուած քարայրը կը ցուցնէ: Հարիւրաւոր զինուորներ, միլիաներ, փօլիս, ժանտարմա և չէրքէզներ Նասին զատէ պինպաշը Շէվզը պէյի հրամանատարութեան տակ քարայրը կը պաշարեն: Մարտօյի հին ընկերներէն Սէրսէմ (Օննօ անուն մէկը կը տարուի որ համարէ զինքը ծակէն դուրս ելլելու ընկերներով միասին և անձնատուր ըլլայ, կը կրկնէ Շէվզը պէյին, «ճէլլատ» վալիին և բոլոր կա-

ուսակարութեան խոստումներն ու երգումները՝ զինք և ընկերները ողջ պահել: Հերոսը կը պատասխանէ. «Սէր-սէմ Օհնօ, դուն անուանդ պէս «սէրսէմ» (ապուշ) ես, մի՛ հաւատար այդ սրիկայ մարդասպաններուն. անոնք ստախօս են «ճինսով ճիպիլիէթով», եկուր ինձի, հին բարեկամիդ և ընկերիդ միացի՛ր, կամ կորսուէ՛, «ճէ՛նէ՛ն-նէմ» եղիւր գնա՛. խեղճուկ ես, վերջապէս հայ ես, «վալ-լահի» չեմ ուզէր որ սպաննիչդ ըլլամ»: Բայց Սէրսէմ Օհնօն յամառաբար և յիմարաբար ներս, քարայրը մտնել կ'ուզէ հազարապետ Շէվզըրի ստիպումին վրայ՝ իր ընկերը Մարտօն բռնելու, երբ յանկարծ ճակատէն գնդակ մը ընդունելով զխտապատ կ'իյնայ: Մարտօն երեսը խաչա-կընքելով ներս կը քաշուի իր ընկերներուն քով:

Մինչեւ 1917 տակաւին տասնեակներով՝ հայ երի-տասարդներ կային որոնք տանիքէ տանիք, տունէ տուն, քարայրէ քարայր, հորերու, պարտէզներու, էջ-սէլին (քաղաքին հարաւ-արեւելքը Տիգրիսի եզերքը զըտ-նուած անտառները) և պարիսպի ձակ ու ծուկերը, եր-բեմն ալ կոյուղիներու մէջ բնակելով կուռեցան ու գի-մացան, սպաննեցին իրենց վրայ յարձակողները առանց խնայելու՝ ո՛վ որ ալ ըլլար, և կողոպտեցին ու դողա-ցան ապրելու համար: Ասոնք կեանքը քաշկռտեցին մո-կերու և մողեսներու պէս, բայց ո՛չ, ի՛նչ կ'ըսեմ, առիւծ-ներու և գիւցազուններու պէս ապրեցան և իրենց դոյու-թիւնն ու կեանքը պահեցին և աւելին ըրին, պահեցին ազգին պատիւը բարձր և աւելի բարձր:

Պատիւ այս կենդանի գիւցազներուն:

ԳՌՈՎԵԼԻ ԱՐԲԵՊԻՍԿՈՊՈՍ ՄԸ  
ԵՒ ՊԱՌԱՒԻՆ ՄՈՄԸ՝ ՏԻՐԱՄՕՐ

Ըլլան՝ հայ փախստական զինուորներ, ըլլան՝ «ամէլէ թապուրի»էն փախչող «ֆիրար»ներ ըլլան իրենց կեան-

քի ազատութեան համար կռուող հայ երիտասարդներ,  
փախստական և հալածական կեանք մը ունէին քաղաքին  
ներսն ու դուրսը Բաղաքացիներէն չստեր զուխէ, ոմանք  
ալ վախէ ստիպեալ կ'օգնէին այս հալածական Խիւսարհե-  
րուն՝ կեանքը տանելի ընելու համար։ Ասոնք ամենէն



«Մըրքան» Սիւլէյման  
Տիգրան սկերտ, Քիլիսանիներու Արեւալսկոպոսը

աւելի կը նեղուէին ապրուստի տեսակէտով, որովհետեւ  
տուն տեղ չունէին ասոնք, հալածական էին ու թափառա-  
կան ամենուրեք։ Թիւրք կառավարութիւնը իր բոլոր բա-  
նակով, միլիոններով, ժանտարմաներով, փօլիաներով, քիւրա  
աշխրէթներով, չէր քէզներով և լրտեսներու լէզէսներով

կը հետապնդէր ու կը հալածէր զանոնք զիշեր ու ցերեկէ քանառ և մահ կար սնոր՝ որ հայ փախստական մը, Ֆէ-տայի մը կերակրէր կամ օգնէր տնայր. առատ վարձատւ բուժիւն կար սնոր՝ որ կը յայտնէր «Ֆիլիար»ի մը կամ «Ֆէտայի»ի մը տեղը:

Ֆիլիտանի (Քաղզէացի) պառաւ կին մը «Մէր Բըթիւն» (Ս. Պետրոս) Ֆիլիտանիներու եկեղեցին կ'երթայ ամէն օր առաւօտ և երեկոյ, Սուրբ Կոյս Մարիամին առջև մոմ մը կը վառէ և ծնկաչօք կ'աղօթէ: Սր մըն ալ միամիտ և կրօնասէր այս պառաւը խղճի խայթէն ազատուելու և մանաւանդ սրբուրիւն կարենալ առնելու համար կը խոստովանի քահանային իր մէկ գաղանիքը, կ'ըսէ թէ քանի մը հայ երկտասարդներ իր առնը զերգեմիին մէջ պահած է քանի մը շարաթէ ի վեր և կը կերակրէ զանոնք: Ֆիլիտանի քահանան անփորձ ըլլալով կը տատամախ կ'նշդիրը իր մեծաւորին Մըթրան Սիւէյման արքեպիսկոպոսին կը յայտնէ: Այս բաքի և քաջ եկեղեցականը, «որուն ներսը նենգութիւն չի կայ», պատաւը իր ներկայութեան կը կանչէ և խոտիւ կը պատուիրէ: անոր ալ եկեղեցի չի գալ, հապա տունը նստիլ և կերակրել այդ հայ հալածականները կ'ըսէ. «Ամենամեծ սգարմութիւնն ու գործն է որ կ'ընես Աստուծոյ և Սուրբ Մարիամին հաճելի. այս բարեգործութիւնը ընելով անոր սանդուխներուն վրայ կուխելով Եղիային պէս շիւի շխտակ Տիրամօր զերկը պիտի երթաս»: Մըթուրիւն կուտայ իրեն և «Արձակեմ զքեզ յամենայն մեկայ քոյ» ըսելով կը ճամբէ զնէ իր պարտականութեան, պատուիրելով նոյն ատեն երբ պէտք ունենայ նութական օգնութեան՝ իրեն դիմել:

Ապրիլն այսպիսի կ'երակամները առնք եկեղեցոյ փառքն են, Աստուծոյ ճշմարիտ ծառաները: Ապրիլն այսպիսի պարզամիտ պատաններ՝ ճշմարիտ երկրպագուներ Տիրամօր:



Հայ հարուստ եւ ուսեալ կինն մը  
ստամբուլեան մէջ մտնողի սն . . .

### ԳԵՐՄԱՆ ՀՐԷՇ ՀՐԱՄԱՆԱՏԱՐ ՄԸ

Մարախնցի քիւրա մը, Մէշքինլի Աշլերէթէն, իր կողոպուտներուն հետ, իբր զահար՝ Տիգրանակերտի բարեկեցիկ ընտանիքներէն Արուսեաններուն մէկ գեղեցիկ աղջիկը սուս կը տանի Օր Արուսեան լապին Քաբուշիններու աղջկանց «High School» Բարձրագոյն վարժարանէն ընթացաւարտ ըլլալով ֆրանսերէն կարգալ գրել լաւ գիտէ Արուսեանը լսելով որ գերման հազարապետ մը — Տիգրանակերտ նահանգին օչօխալիներու «Թապուր զօմանտանը» — շատ ազգեցութիւն ունի, ֆրանսերէն նամակ մը գրէ անոր իր պարագան կը պատմէ և կը խնդրէ որ խաչեալ Յիսուսի սիրոյն ազատէ զինքը իր անբաղձալի վիճակէն: Գերման զօմանտանը ընդօրոյթ կը պատասխանէ Օրիորդ Արուսեանին և կը յայտնէ իր յօժարութիւնը զնէ ազատելու, պայմանաւ որ իրեն հոմանունին ըլլայ՝ սրբան ատեն որ ինք Տիգրանակերտ կը մնայ Արուսեանը կը պատասխանէ գերման զօմանտանին, ըսելով թէ «ինք կը նախընտրէ կրթութիւնն չունեցող մարդասպան քիւրաի մը կինը ըլլալ, քան անՍասուած, անկրօն և հրէշ գերման զօմանտանի մը հոմանին»:

Այս գերման լիբր զօմանտանն է որ Հայոց Ս. Սարգիս եկեղեցին գերման «օթօմօպիլ թապուրի»ին կեդրոնը կ'ընէ և առանց ոչազբութեան ու նկատողութեան առնելու քրիստոնէից կամ զրացի իսլամներու զգացումը, սովէն սրբութիւնն և նուիրականութիւնն ստքի տակ առնելով, կ'արօժնէ իր մարդոց իրենց «լէթրինի» արտաքնացի սիթիլ ամանները եկեղեցւոյ ներսի կողմը դնել . . .

Յաթի՛ն Փաշայի թաղին մէջ (1895ի ջարդերուն առթիւ թաղին Հայերը անձնատուր չըլլալուն համար «Կեաժուր Մահալլէսի» սկսաւ կոչուիլ) կառուցուած Հայոց Ս. Կիրակոս եօթնախորան մեծ և հսկայ եկեղեցին ալ հաճի գերմաններուն ընդհանուր սպայախոյտի կեդրոնն էր:



Աստնք ալ աչք և ականջ զոցեցին՝ երբ տեղացի խոլամ-  
ընրը սպայակոչախն աչքին ստջեւ ժլցուցին Ս. կիրակոս  
և կեղեցւոյն զանկակատունը, որ մէկ տարի առաջ միայն  
չինուամ ընկած էր 2000 սակիի ծախքով:

Այս դերման բարեպառուներէն է որ քրիստոնեայք  
գութ և օգնութիւն կ'սպասէին !!!

### ՏԻՒՐԱՆԱԿԵՐՏ ՆԱՀԱՆԳԻՆ ՀԱՅՈՅ ԿՈՐՈՒՍՏԻ

Տիգրանակերտ նահանգին հայ բնակչութիւնը հա-  
րիւր յիսուն հազարի մօտ կը հաշուուի Ամէն գիւղ իր  
բնակչութեամբ և յակասէ անուանէ արձանագրուած կան  
«վիճակագրութիւն Տիգրանակերտի Հայոց» անուն ան-  
տիպ ուսումնասիրութեան մէջ, որ պատրաստած եմ  
երկար տարիներու մանրակրկիտ քննութիւնէ մը վերջ:  
բոլոր վանքերը (չէն կամ աւերակ), եկեղեցիներն ու  
գոբրոցները իրենց շինութեան արձանագրութիւններով և  
«Ֆէլեմանոնիքութեան կանոններով» նշանակուած են այս  
ղբջոյկին մէջ: Կոյնպէս առաջնորդներ, վարդապետներ,  
քահանաներ և երկես ուսուցիչներ՝ անուններով և մա-  
կանուններով, աշակերտներութիւր, ամբողջ վիդայէթին  
հողին, երկրագործութեան, մշակոյթին սրբան մասը և  
բաժինը Հայոց պատկանելիը և ըն և ըն, ամենքը մի առ մի  
նշանակած եմ այն «Ուսումնասիրութիւն-վիճակագրու-  
թիւն» մէջ:

Ազատուած Տիգրանակերտցիներէն, որոնք Հալէպ կը  
գտնուին հիմա, առած լուրերուս, հաշիւներուն և ցուցակ-  
ներուն համաձայն՝ բուն քաղաքին հայ բնակչութեան կո-  
բուսար կը հաշուուի 25-26,000ի մօտ և գաւառներու  
կորուսար 60-65,000ի, ընդհանուր գումարը կ'ըլլայ  
9,000 անձի կորուստ: Ուրեմն 59,000ի մօտ հայ բնակ-  
չութիւն մը այլ մնացած ըլլալու է տակաւին, որոնք կը  
քաշկուտեն կեանքը՝ մաքթակով սովի, չքաւարութեան և  
այլազան նիւսնգութիւններու գէմ՝ սարքիւտ յոյսով:

մոխիրներու մէջէն նոր և ազատ հայրենիք մը կանգնելու և շէնցնելու անհուն կորովի և աննուսձ հաւատքովը լի։

Նահատակուած և մարտիրոսացած հայ կղերականներու, մտաւորականներու, պաշտօնեաներու, կարեւոր գէմքերու, նշանաւոր վաճառականներու և սեղանաւորներու անուանց ցանկը ինչպէս նսեւ ամէն անանք՝ որ կեանքը քաշկոտած ապրած են, ու հիմա Հալէպ կամ հոս հոն ցիր ու ցան կը դանախն, ինչ որ մինչև թուականս կրցած եմ հաւաքել, գրքոյկիս վերջը կը գնեմ անոնց անուանց ցանկը՝ ի գիտութիւն մեր Տիրգրանակերտցի հայրենակիցներուն։

\* \* \*

### ԵԶՐԱԿԱՅԻՒԹԻՒՆ

1.— Ինչպէս տեսանք, Հայերը ու եւ է անձատուական ձգտում չունէին, և գուցէ ասոր հետեւանքով՝ անհեռաստորէն բարբառի անպարտազանց անսթոն ու բռնին, վերջին գոխային կոտորածներն ու լուսնելութիւնը մտքերնուն անգամ չանցնելով։

2.— Հայ քաղաքական կուսակցութիւնները նոյնպէս թիւ բքիոյ ու եւ մէկ կողմը գրապէս չապացուցին թէ իրենք, ինչպէս թիւ բք սճրապարտ իշխանութիւնը կուղէ փառտակ, ունէին պատրաստութիւն և կազմակերպութիւն՝ դաւաճանելու թիւ բքին և յարձակելու կոնակէն։ Սմեհնէն յայնանի յեղափոխական շարժումը եղաւ վանի մէջ, որ սակայն պէտք է յաւէտ կոչել «վանի ինքնապաշտպանութիւնը», բան մը որ դուռ տեղային էր և ժողովուրդը ինք հաղճնպով մը պատրաստեց և գառաւորեց իր շարքերը թիւ բք և քիւրտ բարբարոսութեանց դէմ պաշտպանելու իր կեանքն ու նամուսը։ Եւ եթէ սուսական

զինուորները շուտով չհասնէին՝ անոնց վախճանը ևւս որոշ էր: Շապին Գարահիսարի և Ուրֆայի ինքնապաշտպանութիւնն ալ դուռ տեղական էր. նոյնպէս վտանգի պահուն հապճեպով, անբաւական ու շատ թիւրի միջոցներով պատրաստուած: Եթէ իսկապէս հայ կուսակցութիւնները, ինչպէս թշնամին կ'ուզէ հաւատացնել, ունենային պէտք եղած զորձնական լաւջ պատրաստութիւնները յեղափոխութիւն հանելու և թիւրքին դատճանելու. երբև՛ք թիւրք կառավարութիւնը չի պիտի համարձակէր Հայք տեղահան քնելու և չարոչար կոտորելու: Թշնամին շատ լաւ գիտեր այս բանը, և անո՛ր համար յօշոտեց զինութափ անարաշտպան ժողովուրդը:

Յ.— Հայոց սարագրութեան և բնաջնջումի ծրագրերին, որ սխիթէմսթիկ կերպով զործարարութեան գրուեցաւ թուրքիոյ ամէն մէկ անկիւնը, պատասխանատու են.

Ա) թիւրք կառավարութեան զինուորական և քաղաքային բոլոր մարմիններն ու տաշտօնեաները՝ որ զործարկեցին ու զործակցեցան:

Բ) «Իթթիհատ վէ թէրազըը ձէմէլէթի»ին Պոլսոյ և գատաներու ամէն մէկ քլիւսը՝ իր բոլոր անգամներով:

Գ) Նոյնինքն խլամ ժողովուրդը, որ հաւատարիմ իր ցեղային սպին, իր անձնական շահին և հաճոյքներուն ի խնդիր, մասնակցեցաւ եզեւնազործութեան, մասնակի թէ զանցուածային կոտորածներու, կոզոզուտի և տակուանգումներու:

Դ) Պատասխանատու է նաև Գերմանիան՝ ժողովուրդ թէ կառավարութիւն, որ համախո՛ջ քաջալերող և նոյն խակ զործակից ելաւ հայաջինջ եզեւնին գժոխային սխրագործութեանը: Առանց Գերմանիայ, թիւրքը պիտի չհամարձակէր ա՛յլքան մեծ ոճիր մը զործել:

Է.— Անաջառութեան համար յիշենք նաև այն յարգելի բացառութիւնները, ըլլան անոնք թիւրք կամ քիւրա զինուորականներ և քաղաքացիներ, որոնք գնա-



Հայ կլմեր անտուսդ...




Հայ կինը սարագրուքի մեջ

հասելի ծառայութիւններ մատուցին հալածական Հայերուն: Անոնք զծրապարար օյնքան քիչուոր են որ գանցառելի քանակութիւն մը միայն կը կազմեն ժողովիրոջ հրէշներու աշխարհին մէջ:

5. — Կը հաւատանք որ Խալալութեան Համաժողովը նկատի պիտի առնէ 1914էն — մեծ պատերազմէն — առաջ Հայերու ունեցած թիւը, և յառաջիկային ազատ և բարգաւաճ Հայաստանի մէջ ունենալիք թիւը Հակառակ որոշում մը պիտի նշանակէ նախարարածումը ընդհանրական սճրապարծութեան, և փոքր ու սկիւր օլզիրու բնաջնջումի գիւտին ծրագրին:

6. — Կը յուսանք և կ'ակընկալենք որ վերապրող Հայութիւնը ի Հայաստան, ինչպէս նաև արտասահման գտնուող Հայութիւնը, որուն հայրենիք վերադարձը կ'ըստպատի անձկանք, անցեալի սխալ և գաւն յիշատակներէն, քաղաքական հոլովումներէն ու յարակիչ շահակցական գործունէութիւններէն և ներքայ թա՛նք ու ըռհէն պէտք եղած փորձառութիւնը առած պիտի դնեն ու հաստատեն նոր, ազատ և վերակազմեալ Հայաստանի գործութեան և իշխանութեան հիմքը ձեւաւորեան, Արարութեան եւ Եղբայրութեան երկնասաք երբեակ սկզբունքին վրայ Պիտի կառավարեն Հայաստան իր այլազան, ազրատարազ և այլալեզու բարբ ժողովուրդներով, (մէջն ըլլալով նաև մեր երէկի մարդասպանները), ճշմարտութեան և արդարութեան լայնախոս մեծ և յաւիտենական սկզբունքովը, որ առնն Ահմէն Հայաստանը պիտի ունենանք շէն ու կանաչ, զարգացած, աճած, մեծցած և զօրացած, որ առնն բարոյապէս ու նիւթապէս պատկասանք պիտի սպգէ իր յարեւան սպգերուն եւ այսպէս մեր այսօրուան բարերար տերութիւններու յոյսն ու ակընկալութիւնը արդարացնելով ինքնիշխան և Ազատ Հայաստան մը վերակազմենք աստասան յախտեան, ընդ հոխանեաւ Աստուծոյ սուրբ աջոյն:



Այս փոփոխությունը խոսք էր Զայեհ Արեճայի վաճառական հասարակության մասին, որը 1914-1919 թվականներին իրականացրել էր իր քաղաքում և իր շրջանում բնակիչներին:





## ՅԱՆԿ ՆԱՀԱՏԱԿՆԵՐՈՒ ԵՒ ՎԵՐԱՊՐՈՂՆԵՐՈՒ

*Տիգրանակերտ և Մարտին քաղաքներու բնակիչներէն նահատակուած և վերապրող հայ կարեւոր գէմքերու անուան ցանկն է միայն, որ ցարգ ձեռք բերելով կը դնենք:*

### ՆԱՀԱՏԱԿՈՒՄՆ

Ա) Հիւպատոսական խումբը

Տօքթ. Ոսկեան թոխալեան, Անդլ. հիւպատոսարանի պատուոյ թարգման, բնիկ Մարաշցի, կինը՝ Շամիրամ, ազջիկը՝ Վիրգինեա և որդին՝ Յովհաննէս 4 տարեկան: Մեծ ազջիկը Եւդիմեայ 11 տարեկան՝ թաշճի Սահակ 45 տակի վճարելով ծախու առած է քովտէր Մէմուհ պէյէն, որ վերջինս սլ 25 դրուչի գնած է հաղարապետ Շէվղըյէն:

Հաճի Յարութիւն Գասապեան, ֆրանս. հիւպատոսարանի թարգման և դեր-հիւպատոս, կինը՝ Կատար և երկու ազջիկները Էօմէն և Վիրժին:

Բ) Արօնական եւ ուսումնական խումբը

Գեր. Մկրտիչ վրդ. Չլլասեան՝ ինը քահանաներով:

Վահան վարդապետ՝ Առաքելոց վանքին վանահայրը:

Գեր. Անդրէաս Արքեպիսկ. Չէլէպեան՝ առաջն. Հայ-Կաթողիկէներու և երեք քահանաներ:

Վեր. Յակոբ Անտոնեան՝ երէց Հայ-բողոքականաց, կինը՝ Մարիամ: Նաեւ Հայ-Լուսաւորչական-Կաթողիկ-Բողոքական 48 ուսուցիչ-ուսուցչուհիներ:

Գ) Կառավարական պատճենայլ

Ստեփան Չրաճեան, երեսփոխան Օամ. Խորհրդարանի.

«Միրալայ» Տօքթ. Արթին պէյ Հէլվաճեան՝ բժշկապետ.

Հարիւրապետներ՝ Տօքթ. Յովնանէս Թէրզեան, Տօք.

Նշան Պապալեան և ստամբուղայի Ա. Ետիս Պալմանուկ-  
եան (Այնթապցի).

Գեղապործներ Յակոբ Հէքիմեան և Արթին Ալկէկեան.

Ճըրճիս Գազապեան, անդամ «Մէճլիսը Խտարէ»-ի, հոգատէր

Խաչատուր Տիգրանեան » » » սեղանաւոր

Տիգրան Իլվանեան, թարգման վիլայէթի և ուսուցիչ

«Իտասիլէ»-ի

Սամուէլ Հիւմի (Ասորի), վիլայէթի առաջին քարտուղար

Կարապետ Չրաճեան, միւտիւր Հապսազ գեղախումբի

Խոսրով Չրաճեան, քարտուղար ընդհ. դատախազութեան

Յարութիւն Մինասեան, թղթատարական անօրէն

Փիլիսպոս Արիիարեան (Խարբերդցի), անօրէն Երկրա-

գործական պանքայի

Մեղքոն Սուքիասեան, անօրէն երկրապործական ճիւղի

Յովսէփ Հաքիմեան, քարտուղար Օամ. պանքայի

Պօղոս Թէմոյեան, Գազաքապետութեան անդամ, հոգատէր

Միսաք Շիրիկճեան » » »

Յարութիւն Մուրատեան » » »

Կարապետ Ալեանաք (Ասորի) » » սեղանաւոր

Եռսուֆ Փափազեան (Երևանի) » » հոգատէր

Կարապետ Խանտէնեան, անդամ «Ճէզա մահքէմէսի»-ի »

Բըսպալայ Չէլէպեան, անդամ «Իսթինաֆ մահքէմէսի»-ի

Տիգրան Ճէրրահեան, ընդհ. դատախազ «միւտայի ու-

մումի»

Կարապետ Նաթըղ, իրաւաբան և ներկայացուցիչ օսմա-

նեան «միւղէ Ի

Կիրակոս Ենովքեան » հոգատէր

Պօղոս Տէր Գարբիէլեան » »

Կէրդք քէօն Օղլեան (Էճեցի), իրաւաբան և հոգատէր

Գ) Հողատեր, կալուածատեր, սեղանատեր,  
վանառական ելյն

Գազաղիան հղբարք և որդիք, ասոնք կորսնցուցած են նաև իրենց գերդաստանին բոլոր արու և էգ անդամները, ու 250,000էն աւելի արժողութեամբ հարստութիւն.

Թըրփէնճեան հղբարք և որդիք, իրենց գերդաստանին բոլոր անդամներով, կորսնցուցած են մօտ 300,000 ոսկի հարստութիւն.

Եէկէնեան հղբարք՝ Մկրտիչ և Յարութիւն, հողատէր Խանտէնեան հղբարք՝ Կարապետ և Հաճի Յակոբ, »  
և բաժնետէր Փիրէճման կապարի հանքի

Յովհաննէս և Տիգրան Մէնաէլճեան հղբարք հողատէր և վաճառական

Կարապետ և Մինաս Պոյաճեան, հողատէր և վաճառական Յակոբ Գարանֆիլեան, հողատէր

Յարութիւն Մուրատեան » »

Շիւքրի և Մխաբ Շիրիկճեան » »

Ալիքսան Ճէնաղեան » »

Ե) Մեհաբի գործարանատեր եւ վանառական

Ապտալեան հղբարք	Մկրտիչ Թէրէքէճեան
Մարտիրոս Աթթարեան	Յարութիւն Պոյաճեան
Յակոբ Պազալեան	Յակոբ Գաղանճեան

Զ) Մեծաբանսկ վանառականներ

Տիգրանեան հղբարք	Ֆարաշեան հղբարք
Թօփալեան »	Աճէմեան »

Ստեփան Մաթոսեան	Պօղոս Գազազեան
Յովնանէս, Յակոբ և Տիգրան Տօնճեան	
Պամթանան հղբարք (հողատէր)	Գայսէրլեան հղբարք
Պաղիկեան »	Գրիգորեան »
Քեաթիպեան »	Գալէմքերեան »
Միքայէլ Բումի (Սուրբանի-կաթուղի)	
Մոմճեան հղբարք ( » )	Տէր Պօղոսեան »
Յաթհուլլայ Հաքիմ (Քիլտանի)	Յովսէփ Շիրիկճեան
Պետրոս Հաքիմ »	Շըխույեան հղբարք, և հողատէր
Պուտուկեան Գրիգոր և որդիք	Սամուէլ Պընտուկեան
Բարսեղեան հայր և որդիք	Տիգրան Անտանեան
Յովնանէս Ոսկերիչեան	Յակօրեան հղբարք
Ամին Սապաղ և որդիք	Նաճարեան »
Եօրկի Ապաճի (Յոյն)	Գասպարեան »
Եռսուֆ Քօսթի »	Սարրաֆ Վասիլ (Յոյն)

ՄԱՐՏԻՆԻ ՆԱՀԱՏԱԿՆԵՐՆ ՈՒ ՎԵՐԱՊՐՈՂՆԵՐԸ

Իգնատիոս Արքեպիսկոպոս Մալօեան՝ Առաջնորդ կաթուղի Հայոց .

Յովնանէս վրդ. Պօտուրեան, Տէր Մկրտիչ քհնյ. Գալիուճեան, 17 կաթուղի քահանաներ, «Ընքով» Սէլիմ ձրճիս Հասայէ՝ երէց բողոքականաց և երկու հղբարաները նահատակուած հայրը, մայրը և զաւակները ողջ են:

սպաննուածներ	անձ	վերապրողներ
«Պէյթ» Մալօեան	ամբողջ	
» Գալիուճեան	60	կինը Հապուճ՝ իխտա Գահիրէ և 2 աղայ՝ Պաղտատ
Իսքէնտէր Ատէմ	11	Մարին և ձօսէֆին 2 աղջիկ ու 5 տարեկան թոռ մը
Նաուժ Ճէնանչի	6	Շէֆիկա և Վէրմին 2 աղջիկ

սպաննուածներ	անձ	վերապրողներ
Հաննա ձէնանչի	1	կինը Մըզսիէ
Ամսին »	1	
Էլիաս Պապօսա	12	Էլիաս
Հաննա Քէնտիր	ամբողջ	Միայն կինը և ձըպուր
Սահտօ »	»	»
Ֆաթիալա »	»	Ֆաթօ՝ 6 տարեկան տղայ
Բաֆաէլ Չէրմէ	10	Պահիէ, Նազլիէ և ձէմիլէ
Սարգիս Սախար	ամբողջ	
«Պէյթ» Շէլըմէ	25	Ֆաթրինա և Նազուպ
» Հէյլօ	3	3 կին և 5 զաւակ
» Քասիօ	6	Ճօսֆին և 2 տղայ
Պօղոս Մախուլէ	40	Էմինէ և Սայիտ
Եուսուֆ Գարակուլէ	5	ձէմիլ և Քէթրինէ
Տք. Նաուժ Գարակուլէ, (կինը		
Ամերիկացի Stella և 1 տղայ)		
Սաիտ Գառակուլէ	1	կինը փախստ. ի Գահիրէ
Ճօսէֆ Խըզրիկ	1	կինը Մարի
Պրահիմ Շանխօր	1	հայրը, մայրը, կինը՝ զաւակներով
Աղիշ Քէչօ	2	
Հաննա Աղրըզ	1	
Սէլիմ Բարանի	4	Ֆէրիա, Աղիշ և 3 աղջիկ
Ռուսէ Նահմէ	2	
«Պէյթ» Մարինա	2	մնացեալք ողջ են
Ա. Կարիս Սաաթի	1	կինը՝ Պաղտատ, աղջիկը՝ Հայէպ փախստական
Սաիտ Ըչօ	1	
Բըսքալա Հաթունէ	1	
«Պէյթ» Հահի Եուհան	1	ընտանիքին մնացեալը Հալէպ փախստական
» Չըրպազա	16	կիները փախստ. ի Գահիրէ

սպաննուածներ	անձ	վերապրողներ
Հաննա Մէրքէզէ	1	
«Պէյլթ» Մանասարբ	7	
» Էղօ	4	
» Համնալ	3	միայն կիներ
» Տօզմազ	4	» »
» Ա.տէմ	2	» »
» Տիլէնչի	1	» »
» Ա.Ֆրիթ	2	» »
» Ճրճիս Սուսէ	10	
» Մէրթէպիթ	4	
» Նասրի Բաթրճի	20	
» Շօնա	7	
» Թուֆէնքճի ամբողջ		
» Մըզաէսի Բըհիսպ		միայն կիները
» Ա.իբէ Սալիսլ ամբողջ		
» Մահմար Պաշի	3	կիներ փախստ. և Հալէսպ
» Ուսէ Պահէ	1	» » »
» Տառսն Բէչօ ամբողջ		
» Գօնտաղճի	2	
Ասխտ Աթամպուլի	1	կիներ և տղաքը Մարտին են

ՏԻԳՐԱՆՆԱԿԵՐՏԻ ՎԵՐԱՊՐՈՂՆԵՐՈՒՆ ՅԱՆԿԸ

Մարտինի Մարտօ՝ ընտանիքով և ազգականներով .  
 Հազրօցի կիրակոս՝ ընտանեօք.  
 Զավլալաթճի Մընճօ՝ իր մէկ աղջիկը և ազգականները .  
 Իսրիբ օղլու Մարտօ՝ ընտանեօք.  
 Յակոբ Տապաղիան (Իրաւարան) և քոյրը Մընուշ .  
 Թազուհի Պապաղիան դատկնետով՝ Սմբատ, Վլիզթոբ և  
 Արթին.

Զամբրուհի Պապալեան և երկու եղբայրները՝ Կարապետ ու Մինրան,

Պըշար Շամսի Պըշար՝ կինը Աղաւնի բոլոր զաւակներով.  
Արշակ Նաճարեան՝ մայրը Հօռմիկ, մէկ քոյրը 25 տարեկան և զաւակը Յակոբ.

Արուսեակ Նաճարեան իր հինգ զաւակներով, մայրը՝ կին Սարգիս Մուրստեանի՝ քոյր է.

Մարտիրոս Մալլեան բոլոր ընտանիքով և զոքանչը թու մա Մինասեան.

Յակոբ Աթամպուլեան (Զարշալճի) 59 տարեկան.

Թազուհի Թաշճեան 20 »

Յովհաննէս Տաղլեան 50 »

Տապաղ Սմբատ (Կարմիր) 35 »

Առսիս Աթամպուլեան՝ Մուրատ Նէշատին մայրը երկու աղայ և աղջիկը Վիգթոր (վերջինը չէր քէզ մը իրեն կնուխան առած է).

Թովմաս Գաւաղանճեան կինը և երկու աղջիկները.

Մընուշ Արաքչինճեան և երեք տղաքը Սարգիս, Թովմաս և Խոսրով.

Պէրպէր Յակոբ, կինը և երկու աղջիկները.

Գէորգ Մալտալեան, կինը և աղջիկը.

Խաչատուր Մայրալեան, կինը և երկու աղջիկները.

«Միր Ալայ» Տօքթ. Արթին պէյի կինը երկու զաւակներով՝ Արաքսի և Գեղամ.

Բրուտեանի կինը՝ 60 տարեկան, որդին Սահակ և աղջիկը՝ Նաճար Օհան, կինը և աղջիկը.

Լեոն Գարանֆիլիան, եղբայրը և մեծ մայրը.

Մընուշ Պօյաճեան և իր Կարապետ որդւոյն զաւակներէն՝ Վիգթոր (ամուսնացած Ասորիի մը հետ), Սրամ և Պետրոս, (Ռօղա, Աղաւնի, Պայծառ և Վիրժին Հալէպ տարագրուած են).

Լեոն Աճէմեան, մայրը Լուսիս և քոյրը Նեկտար.

Վիրժին Գասապեան.

Սուճի Գրիգոր և կինը.

Պօղոս Չաարճեան, կինը Սօֆիա և որդին Կարապետ.

Մկրտիչ Գասապ'ան, կինը, և որդին Մխաթ.

Յակոբ Զուրուճեան ընտանեօք.

Գաղաղ Էրմուշ և իր ընտանիքէն չորս հոգի.

Տապալ Նիկողոս (Չնգուշցի) կինը և չորս զաւակները.

Եսթեր Չէլէպեան, իր աղջիկը և երկու տղան.

Գաղաղ Թովմասին վեց զաւակները Լուսիա (50), Նուարդ (36), Ազաւնի (30), Վիգթոր (19), հինգերորդը (15) և Յակոբ (17).

Տաճի Դաւիթ մայրն ու քոյրը.

Տաճի Սահակ, կինը և երկու աղջիկները՝ Այս բարի և ազգասէր մարդն է որ 45 սակիի ծախու առած է Անդլ. հիւպատոսարանի պատուոյ թարգման Տօքթ. Ոսկեան Թոփալեանի միակ ողջ մնացած աղջիկ զաւակը Եւզիմիան՝ 11 տարեկան՝ զօմխէր Մէմուհ պէյէն Տապաղ Խաչատուր, կինը և զաւակները Դազար և Արշալոյս.

Տապաղ Յակոբ, իր հայրը և մայրը՝ Մարիամ.

Տօքթ. Հանուշ (Քիլտանի բողոքական) կինը և երկու աղջիկները.

Գասապ Նօնօ 20 տարեկան.

Զավգալաթճի Թաթօ և ընտանիքը.

Յովհաննէս Թուֆէնկճեան ամբողջ ընտանեօք, նաեւ իր աներոջ ընտանիքը.

Գրիգոր Չէլէպեան (դերձակ) ընտանեօք.

Թումա Փալասիզիան.

Մկրտիչ Խոհարարեանի կինը, զաւակը և կնոջ սգաբիկ եղբայրը.

Քօնտուրաճի ունթա Հաճի Գէորդ ամբողջ ընտանեօք.

Ճօն Քարիէնթըր ամբողջ ընտանեօք.

Նաճար Դաւիթ ամբողջ ընտանեօք.

Քէլէքճի Կարապետ Շաքէրլէմէճեանի երկու աղջիկները.





Քիւրսի սարագով

1. - Լեւոն Դասապեան, որդի՝ Տիգրանակերտի  
Ֆրանսական դեր-հիւպատոս Յ. Դասապեանի:
2. - Կարապետ Աղանանեան, Խարբերդի Ամե-  
րիկեան Գօլէնէն օրջանաւար:

Իսաղաղ Յակոբ.

Խարբերուցի թաշնեան Սարգիսին աղջիկը թագուհի-  
Պուրուհի Պողոս ամբողջ ընտանեօք (հայ-կաթողիկ).  
Կարապետ Չատրճեան » »  
Տէր Յովսէփ քահանայ » »

Քիլտանիներն ու Ասորիները (Եագուպիները) անձի կորուստ շատ քիչ ունին քաղաքին մէջ, աւելի շատ նիւթական կորուստ ունեցան, բայց թօր-Ապտինի Եագուպիները շատ տառապեցան և անձի ալ շատ կորուստ ունեցան Հայերու պէս:

### ՎԵՐԱՊՐՈՂ ՏԻՒՐԱՆԱԿԵՐՏՑԻՆԵՐ ՀԱՍԷՊԻ ՄԷջ

Պողոս Կաֆաֆեանի չորս զաւակները Վարդուհի (24),  
Հերմինէ (21), թագուհի (19) և Մինրան (15).  
Լաթիֆ՝ որդի Յովհաննէս Կաղազեանի և Պէսիմ՝ որդի  
Հաննա Կաղազեանի, երկուքն ալ ուսանող ըլլալով  
Պէյրութի մէջ ազատած են.

Թովմաս, որդի Յովհաննէս Տօնճեանի.

Տօքթ. Մելքոն Չրաճեան՝ Հալէպի մէջ ուր կը բնակէր.  
Եղբայրը Տիգրան, Պոլիս իրաւաբանական դպրոցը ըլ-  
լալով ազատած են.

Լեւոն Յ. Կասապեան, որդի Ֆրանս. թարգման և դեր-  
հիւպատոս Հաճի Յարութիւն Կասապեանի, հիմա Կա-  
հիրէ փախստական

Հաճի Դաւիթ Պէյրութ է (քարակոփ).

Մաննիկ Հաքիմեան երկու զաւակներով թովմաս և Խսորով-  
Լուսիա Տէր Յովսէփեան (35).

» Մախաթճեան և որդին Աբամ.

Հումիկ Տէյիրմէնճեան և աղջիկը Ազնիւ.

Կատար Իսրիլեան և որդին Յակոբ.

Աննա Աղաճանեան և աղջիկը Մընուշ.

Կարապետ Գաֆաֆեանի զաւակները Ռվասնա, Լուսիա  
և Լեւոն.

Թումա Չուլէկեան և աղջիկը Էլմասդ.

Մընուշ Վարդանեան և աղջիկը Մարի.

Մինա Պասթաճեան և զաւակները Մարի, Նշան, Տիգ-  
րան և Աղնիւ.

Թումա Հայեղիքեան և որդին Խոսրով.

Մինա Թույսուգեան և որդիք Նշան, Տիգրան և Մինրան.

Աննա Չարմեան և զաւակունք Աղեքսանդր, Յովհաննէս,  
Վարդունի և Լուսնիակ.

Սօֆիա Աթթարեան և զաւակունք Տիգրան, Կարապետ,  
Արշալոյս և Մարի.

Սիրանոյշ Քէշիշեան (22).

Աննա Տէր Պօղոսեան և զաւակունք Վիգթոր, Վիրգին և  
Սաթենիկ.

Թումա Յարըշեան.

Մարգրիտ Տէր Մատթէսեան և աղջիկը Հոխիսիմէ.

Եղբա Տէր Ղազարեան և մայրը Մարթա.

Թումա Տէր Պետրոսեան և որդիք Յովսէփ ու Պետրոս.

Կատար (45), Պայծառ (25), Մինրան (15), Սեւրակ (11)  
Չուլճեան.

Օղիտա Զօրեան և զաւակունք Վահան (30), Թումա (18),  
Մարտիրոս (15), Պօղոս (12), Եսթեր (10).

Հայկանուշ Տէր Պօղոսեան (Բարսեղեաններու զուսարը)  
և Մարի.

Կատար Ստեփան Չարշալճեան (40).

Պայծառ Թալճեան (25) և Խոսրով (18), Աղնիւ (15) ու  
Կարապետ (10).

Կարապետ և Վիրժին Յուրունճեան.

Մանուկ, Մարիամ, Աղնիւ, Նաֆիւնա, Զուարթ և Ար-  
շալոյս Չիլիկիլեան.

- Հայկանոյշ (30) և Յակոբ (2) Տապաղեան.  
Մարիամ, Բօղա և Ճօսէֆին Թուրքահան.  
Նշան, Հօրմիկ և Տիգրան Նաճարեան.  
Լուսիա (40), Կարապետ (19) և Մկրտիչ (12) Պաղարեան.  
Կարապետ (60), Զարուհի (25), Պայծառ (20), Մինրան  
(18) և Բօղա (17) Ճէնապետեան.  
Սարգիս Եէկէնեան (18).  
Մարիամ Զէրաէեան (66).  
Մկրտիչ (28), Լուսիա (17) և Կարապետ Տաղլեան.  
Տիգրան Գույումճեան.  
Պայծառ (29), Ազնիւ (14), Զարուհի (9) և Մարիամ (7)  
Զէլէպետեան.  
Աննա (55), Տիգրան (38), Սեդրակ (29) և Մարիցյա (25)  
Պէքճիպետեան.  
Պօղոս Բարսեղեան (30).  
Յովհաննէս (27), Գառնիկ (11), Մինրան (6) Թուրքա-  
հան.  
Աննա (40), Նուարդ (22), Յովհաննէս (21) և Կարապետ  
(19) Նաճարեան.  
Մընուշ (39) և Երանիկ (19) Պուտուշեան.  
Րիհան (55), Արուսեակ (30), Տիգրան (13) Տէր-Մանուէլ-  
եան.  
Լուսիա Դեղրարեան (28).  
Ազնիւ Խընաճեան (27).  
Զարման (32), Արշալոյս (9), Վլիքովն (8), Պետրոս (14)  
Տէլէքեան.  
Սահակ (15) և Վարդուհի (13) Տէկիլիովէնճեան.  
Առաքել (55), Խաչատուր (40), Մարիամ (30), Վարդա-  
նոյշ (9) Թէմոյեան.  
Ուսաննա (52), Գրիգոր (35), Խաթուն (26), Վիլիթորիա  
(2) Փախաղեան.  
Ասատուր (56), Թումա (40), Մընուշ (27), Ազնիւ (18),  
Մանեակ Աստուրեան.

Միքայէլ Չուճեան (26)․

Արմենակ Յակոբեան (24)․

Վահան Չարչաւճեան (18)․

Թումա (35), Եղիա (14), Հայկանոյշ (12), Գառնիկ (6)  
Մարտիրեան․

Օհաննէս Բէպապճեան (20)․

Հանրմ Միքայէլեան (15)․

Մարիամ (35) և Օհաննէս Շիրիկճեան․

Յակոբ (48), Կատար (40), Տիգրան (15), Աբամ (13),

Միհրան (11), Հայկանոյշ (7), Վահան (3) Տէմիրճեան․

Յարութիւն Թովմասեան (45)․

Մկրտիչ (45) և Ֆէրիտա (40) Պաղտասարեան․

Զարման, Զօհրա (24), Արշալոյս (5) Շիրիկճեան․

Խոսրով Տիրատուրեան (20)․

### ՅԱՆԿ ԱՌԵՒԱՆԳՈՒԱՅ ԿԻՆԵՐՈՒ ԵՒ ԱՂՋԻԿՆԵՐՈՒ

Տիգրան Իլլանեանի մեծ քոյրը (նշանած Այնթապցի Դարբինեանի) փօլիսի մը քովն է ի Տիգրանակերտ․

Մկրտիչ Եէկէնեանի փոքր աղջիկը «Իթթիհատճի»ի մը քովն է ի Տիգրանակերտ․

Յակոբ Տօնճեանին երրորդ աղջիկը Նուարդ կը հաւատաւոր թէ Չէրքէղ ժանտարմա մը հետը Պոլիս տարած է․ Պատկերահան Գէորգի (որ պատերազմէն քիչ առաջ Տիգրանակերտ եկաւ) երկու քոյրերը մէկէն չէրքէղի մը կիներն են ի Ռէս-Իւլ-Այն․

«Ընկեր» օր. Սաթենի՛չ և քոյրը չէրքէղի մը քովն են ի Տիգրանակերտ․

«Ընկեր» Օր. Սիլիլեան քիւրաի մը քովն է ի Տիգրանակերտ․

» » Զապէլ և քոյրը Դեղրարեան հոչակաւոր աւաղակապետ Պէտիրխանիներու հարէմն են․

(Այս վերջին հինգ օրը որդիները, որոնք Դաշնակցական էին, մեծ քաջութիւններ ըրած են ինքնապաշտպանութեան սրբազան գործին մէջ. կող ընդ կողի կռուելով Տիգրանակերտի ինքնապաշտպաններուն հետ Բայջ հուսկ յետոյ ինկած են թշնամոյն ձեռք իրենց պատնէշներուն մէջ)։

Աղաւնի և Էօծէնի կանտանեան կ'ըսուի թէ Տէր Զօր արարներու քոջն են։

Արշալոյս Թէճիրեան կ'ըսուի թէ նոյնպէս Տէր Զօր արարներու քոջն է։

Արաքսի Շխլոյեան կ'ըսուի թէ «Իթթիհասճի»ի մը քոջն է ի Տիգրանակերտ։

Պայծառ Տիրատուրեան կ'ըսուի թէ միլիսի հարիւրապետներէն Եահեա էֆ.ի կ'ինն է ի Տիգրանակերտ։

Զարուհի Ֆաթահեան կը հաւաստուի թէ «Իթթիհասճի»ի մը քոջն է ի Տիգրանակերտ։

Շատ ցաւալի է ըսել թէ քիչ բացառութեամբ ամէն իսլամ ընտանիք — թիւրք, քիւրտ, չէրքէզ, զաւա և լին և լին — ունի իր հարէմին մէջ հայ կ'ին մը կամ ազջիկ մը և մեծ թիւով ալ հայ երախաներ, որոնք ամենքն ալ մեծ անձկութեամբ կ'սպասեն ազատութեան մեծ արշալոյսին, երբ ազատուելով գերութեան շղթաներէն պիտի դառնան հայրենիք իրենց աւերակ օճախին շէմը համբուրելու և փիւնիկի պէս մոխիրներու մէջէն վերաշինելու իրենց տունն ու կազմելու աւելի մեծ, զօրաւոր, ազատ, անկախ և չէն ու կանանչ Հայաստան մը։









## Յ Ա Ի Ե Լ Ո Ւ Ա Մ

### ՔՐԴԱՅԱԾ ԵՒ ՏԱԿԱԻՆ ՀԱՅ ՄՆԱՅԱԾ ԱՇԻՐԷԹՆԵՐ

Քաղաքական գէպքերու բերումով ներկայիս այնքան արծարծուած հետաքրքրութեանց զոհացում տալու համար, առայժմ համառօտակի պիտի թուեմ այս ուրոյն յաւելուածին մէջ Հայ այն հատուածները, որոնք Տիւրանակերտի նահանգը\* թրքօ-թաթարական յոռի և վայրագ վարչութեան տակ անցնելէն յետոյ, 1517ին, բռնադատուեցան իրենց կրօնքն ու լոյս հաւատը փոխել, ապրիլ կարենալու և իրենց պապենական օճախէն չի զատուելու չի հեռանալու համար: Կը թողում յարմարագոյն առթիւ մը հրատարակութեան տալ՝ այս մասին, ինչպէս նաև թիւրքիոյ մէջ զանուած բոլոր ֆիւրա աչիրէթներուն և Եէզիտիներուն (Դիւապաշաներուն) պատմութեան մասին անսփայ ուսումնասիրութիւններս:

\* Այս նահանգը «Տիարպէթիւր Ալայէթիւր» կը կոչուէր, որ կը պարունակէր այժմու Խարբերդ և Պիթլիս վիլայէթները իր մէջ, որոնք սակայն զատուեցան իրմէ և ուրոյն նահանգներ կազմեցին 1878ին, Սան Սթեֆանօյի Գաշնազրութեամբ՝ Կարս և Արտահան Ռուսերու անցնելէ յետոյ:

Նախ վեր առնենք անոնք որ արդէն յիշուեցան զըջոյկէն Պատմական բաժնին մէջ և յետոյ կարգաւ զընենք միւսնիրը:

1. ՌԵՏՈՒՆԻՖ.— Նիմա Ռէշքօթա քիւրտ զիւզարնակ աշիրէթ մըն է, որ հաստատուած է Պըշէրի գաղալին (գաւառակին) Նիւսիւք Պաթման Սուլի (Բալիբթ գետի) և Ռալան Սուլի (Արզն գետ) միջև եղած տարածութեանը վրայ Ռէշքօթանցիք 7 տոնմերու կը բաժնուին որք են, իյասարքա, Տարմանքա, Շէխըքա, Պապուճանքա, Պընտուրքա, Չալըքան և փիրօքա: Յիշենք զիւզիբէն մէկ քանին, — Սալիպ (խաչ), Տարա-պի (Բարտի), Տարա-պառու (Գալնի), Չէտիա, Հաճընա, Լիւլըք (Լիճ), Ռաշըք (Սեւուկ), Մէրինա, Խէլըքան, Տըրպէսան, Պօլլնտ ևն, տեղերնին սարահարթ է և շատ պտղաբեր: Բնակչութեան զբաղումն է երկրագործութիւն և խաշնարածութիւն: Ունին իրենց ցեղապիսնները, ամենքն ալ ձիաւարժ և քաջ նրացանակիր են: Երբէ՛ք զինուոր չառնին թիւրք իշխանութեան, մնացին միշտ վայրագ և կռուասէր, ուսնունս՛վ միայն հնազանդ իշխանութեան Գորըզ, Կէտուկ, Հաթհաթք և Գալնօք զիւզիբը թէև Ռէշքօթանցուց մէջ են և անոնց կը պատկանին՝ բայց Հայ մնացած են մինչև Նիմա և կանոնաւորաբար կուտան իրենց տուրքերը թիւրք իշխանութեան:

2. Մամիլիոնեանց.— այժմ կը կոչուին քիւրտ Մամըկա աշիրէթի, և կը բնակին Ռալան Սուլի արեւելեան եզերքը: Իրենք կը հաւատեն թէ ի հնումն իրենց մայրաքաղաքն էր Արզն՝ Նին պարսպապատ քաղաք մը (Նիմա փլատակ), Ռալան Սուլի (Արզն գետ) արեւելեան եզերքը, Տիգրանակերտէն Չօգուլ Պիթլիս երթալու պողոտային վրայ: հողը ջրարբի և շատ բարեբեր է, ամէնքն ալ երկրագործ և խաշնարած են: Փըրս-Մամըկա (Կամուք-Մամըկանց) անունով կամուրջի մը մնացորդները կան տակաւին:

Ռուսլան-Սուլի վրայ, իր տեսակին մէջ միակը, երթեւեկութեան համար ունի մասնաւոր ճամբաներ թիւնէլի պէս, և ասկէ զատ վրան ալ կարալանի համար յատուկ ճամբայ: Մամիկոնեաններէն մէկ մասը գրկից ըլլալով կարգայ հայ մեծ ու զօրաւոր աշիրէթին՝ միացաւ ու խառնուեցաւ անոր: Իսկ անդին անոր ստաւար մասը հաւատարիտն ըլլալով քիւրա Մամըլիս կոչուեցան և կը մնան մինչև հիմա: Յօր, Տուսատէք և ուրիշ գրկից քանի մը գիւղեր անոնցմէ են որ Հայ մնացին Մամիկոնեաններու այդ ծանր երկունքին ստան, և որ միշտ կարգացուցօց օգնութեան յնուով ազատ մնացին քրդական տիրապետութենէ և լուծուեցէ՛ կորսնցնելով մի՛այն իրենց ազգային լեզուն:

3) Ալեաններն ու Ալանք.— կը կոչուին հիմա քիւրա Ալքքա աշիրէթը, որ շրջապատուած է հիւսիս-արեւմուտքէն՝ Ռէշքօթա, արեւմուտքէն՝ Պըշէրի գաւառակէն, հիւսիս և հիւսիս-արեւելքէն՝ Մամըկա, հարաւ և հարաւ-արեւելքէն՝ կարգայ աշիրէթներէն: Կայ նաև Ալան անունով ուրիշ բազմամարդ քիւրա աշիրէթ մըն ալ՝ որ ձէպէլ-թօսի (Մասիսս լիւ) հարաւը կը բնակի ձէպէրէ գաւառակին մէջ և ունի մօտ 40 գիւղեր:

4) Մակուիք, Մոկաց երկիր.— կը կոչուի հիմա Մոզկայ քիւրա աշիրէթը, որոնց երկիրը շարունակութիւնն է Անտօք լիրան (Տաւրոսի լեռնաշղթայ), և ունի շատ մը պտղաբեր ծառախիտ սարահարթներ: Կրնայ մօտաւորապէս սահմանուիլ հիւսիսէն՝ Մուշէն Պիթլիս երթալիք պողոտան, արեւելքէն՝ Պիթլիսէն Ջօք պողոտան, հարաւէն կարգան աշիրէթը և արեւմուտքէն՝ Սասուն Շատ զօրաւոր աշիրէթ մըն է, ամենքն ալ լու հրացանակիք և ձիաւոր են: Ասոնք էին որ 1914 Մարտ ամսոյ մէջ յարձակեցան Պիթլիսի վրայ, գրաւեցին քաղաքը, վաւրեսեցին թիւրք իշխանութիւնը անկէ և մօտ 15 օր իշխուի վերջ՝ վանէն եկող զինուորական մեծ ուժին առջև:

տեղի տուին թիւրք կառավարութիւնը ասոնց պետերէն  
և ուրիշ զինակից քիւրտերէ 13 հազի կախնց և այսպէսով  
վերջ գրաւ այդ տաւրին

5) Մասիոս լեւան Հայերը.— Թօռ-Ալպսին (Լեւ ճըզ-  
նաւորաց) կը կոչուին հինա հայկական Մասիոս լեւաները,  
որոնց Հայ և Եագուպի (Ասորի) բնակչութիւնը Եագուպի  
պատրիարք «Փաթրիք» Իամայէլի նախածեհնութեամբ  
հարկագրուեցաւ ուրանալ իր հաւասարը, և կրօնա-  
փոխ Ըլլալով կազմեց Մուհալլէ. մի ակրէպէյութիւնը  
Եագուպիներու պատմութիւնը ի Տէր-Չահէլէրան, կը հա-  
ւատաէ թէ «Փաթրիք» Իամայիլ Պոլիս ուղտեցաւ թրքաց  
Սուլթանէն, որմէ կոչուեցաւ «Շէյխ» Իամայիլ, և մեծ  
ընծաներով ու գրամով գարձաւ հայրենիք և եղաւ իր  
ժողովուրդին պետն ու հովիւը լաւ կազմակերպեց ու  
պատրաստեց զանանք և յետոյ սրէ անցուց իր վաս թըշ-  
նասիները

6) Աճսիֆ և Լաւես սնի.— Մասիոս լեւաներու (Թօռ-  
Ալպսին) հիւսիսային և հիւսիս-արեւելեան մասին մէջ  
(Տիգրիսի հարաւը և արեւմուտքը) բազմաթիւ և շատ զօ-  
րաւոր քիւրտ աշիրէթ մը կայ Աշիրի անուամբ, թէ ի  
Հասէնքէֆ (Տիգրիսի եզերք) և թէ ուրիշ շատ մը քիւրտ  
զիւզերու մէջ մինչև հիմա գտնուող վիմախոր եկեղե-  
ցիները՝ վիմախոր տուներու և անձաւներու մէջ գտնուող  
խաչ ու բուրլառ նշանները կենդանի ապացոյցներ են  
թէ այս քիւրտ ժողովուրդը ժամանակին քրիստոնեայ էր,  
և ամենայն հաւանականութեամբ Աճսիֆ և Լաւես սնի  
Հայերը՝ Տեղւոյն Բիւրտերը իրենք իսկ կը խոստովանին  
թէ իրենց նախահարք «Կեսալուր»ներ էին, բայց յետոյ  
«նապ ս ն»ը ընդունած են Աշիրէթի Բիւրտերը երկու  
զլխաւոր բաժանումներ ունին. — Հաուէրքի և Տաքչու-  
րի Երկրագործ, խաչնարած և զլխաւորաբար այդեզործ  
են. ամենքն ալ քաջ կուտոզներ ու աւաղակ, և անու-  
նով միայն հնազանդ են թիւրք իշխանութեան:

7) Եկեղեցայ.— Տու-Տէր անուհով բաղմամարդ քիւրա-  
ժբանաբնակ աշխէթ մը կայ՝ որ կը թախաւի Տիպրանա-  
կերաի, Մուսուլի և Պիլթիխի նահանգներուն մէջ «Տու-  
Տէր»ի հայերէն բառական թարգմանութիւնն է Երկ-Եկե-  
ղեցի, իր անուհին իսկ կը մատնանշէ թէ քրիստոնեայ  
էին և ամենայն հաւանականութեամբ Եկեղեցայ հայտոմբ:  
Ասոնք մասնաորաբար անասնաբոյժ են, մեծ քանակու-  
թեամբ Չորինիս ունին և այս երեք վիլայէթին ալ վա-  
ճատականական փոխադրութեանց գործը Հալէպի հետ,  
գրեթէ իրենց մենաշնորհն է: Գուրմանձներն (Բիւրս) ան-  
գամ այս աշխէթը՝ իրեն հանդարտաբարոյութեան և ժրա-  
ջանութեան պատճառաւ «Բիւրս կեալուր»ներ կը կոչեն:

8) Հուս.— Բիւրս զիւրաբնակ աշխէթ մըն է Բալա-  
հալսին մէջ, Բալուէն գէպի հարաւ-արեւելք A ժամ հե-  
ռուորութեամբ, կեդրոն ունենալով Հուն ծառախաղ զիւզ  
մը Մուրաթի եզրքը: Հուն զբարառ է և կը նշանակէ  
անցք (կէշիս գետի՝ Ունի շատ մը ուրիշ զիւզեր ալ,  
որոնք իրենց հայերէն անուհները տակաւին կը պահեն,  
օրինակ՝ Ազրակ (Ազարակ), Սէրա-Չուր (Մարի Չուր),  
Պտղիք և ըն Ասոնց ալ մեծերը պարծանօք կը պատմէին  
թէ իրենց նախնիք «կեալուր»ներ էին և յետոյ «նսգ  
սիւն»ը բնագունած են:

9) Սօրա անուհով հայ աշխէթ մը կայ որ կը բնակի  
Տըճ պառտակին (Սղերդ սանճաղ) մէջ համանուն քիւրա-  
աշխէթին հետ միասին:

10) Աես և Աեսաւ.— Կէս աշխէթին կեդրոնն է կըս-  
կիծ անուհով հայ զիւզ մը ջերմուկի մօտ Պաղըր Մատէնի  
(Տիպրանակերաի նահանգ) պառտին մէջ: Այս զիւզին  
բնակչութեան կէսը հայ քրիստոնեայ է և միւս կէսը  
քիւրա մահմետական, որոնք միասին կը բնակին միւս-  
նայն երգիքին տակ՝ միւսնայն գերդաստանին անդամներն  
ըլլալով: Հայ քանանան կանոնա որաբար կ'այցելէ ա-  
նոնց, կը մկրտէ և Սուրբ Միւսնով կ'օծէ ու կը գրոշ-

մէ կրղիքին տակ գտնուող բոլոր լաճերը և երախաները անխորաքար սառնեղիւտն և տօն օրերուն կ'օրհնէ տունը, ալը և հայը, Սրբութիւն կուտայ ամենուն և կը խոստախանցնէ: Մօլլան ալ զատէն կուզայ և կը թըլփատէ միայն քիւրտ լաճը և կրօնական խրատներ ու յորդորներ կուտայ միևնոյն կրղիքի քիւրտ անդամներուն: Կալիճ անունը որչա՛ր յարմարութեամբ դրուած է գիւղին, որ շրջակայ քանի մը գիւղերով միասին կէս աշիրէթի կը կոչուին Ասոնց մեծագոյն մասը քրդացած է և Սնեքէկի հարաւարնակ «Կէօզլիլէր» Գարա-Քէչի քիւրտներուն միացած՝ Կեւան (կէսերը) կը կոչուի և կը կազմէ Համիրիլէ հեծելազօրաց 44րդ «ալայ»ը:

11) Թ.Ա.Ե.Ա.Ն. — Հայ աշիրէթ մըն է թախաաշրջիլ (վրանարնակ) որ համանուն աւրիշ քիւրտ աշիրէթի մը հետ միասին կը բնակի: Շատեր այս պատճառաւ, խոկ զաննք քիւրտ կը կարծեն: Ասոնք կը բնակին Սուրբ գիւղախումբին մէջ, Տիգրիսի հիւսիս արևելքը զանուոյ Քարտուխի (կորդուաց) լեռներուն մ'ըջ: Թանան աշիրէթը ամէն տարի ամառը կը չուէ վանի հողը և աշունը կ'իջնէ իր հոտերով ու երամակներով և կը պտտի Սանճար լեռներու հիւսիսը:

Տէր թագէտս քահանան ձէզիրայէն տարին կրկու անգամ, զարնան և աշնան միջոցին, աշայիրին հարաւէն հիւսիս և փոխադարձաբար՝ չուելու տանն է, կ'այցելէ այս հայ աշայիրին Անոնց ծնունդները կ'օժէ Սուրբ Միւսօնով, պատկները կը կատարէ, մեռելներուն «Հոգոց»ը կը կարգայ, կ'օրհնէ անոնց խմբին ու ալը և մատաւը, կը հաղորդէ, Սրբութիւն կուտայ ամենուն և կը միխիթարէ իւրաքանչիւրը հոգևորապէս՝ մէկ մէկ կամ երկու քական նշխար տալով անոնց: Աւելորդ պիտի չըլլայ և ո՛չ ալ վերաւորանք մը երբ ըսեմ թէ Յակոբ ալա Գուլումճեան, որ բնիկ կեսարացի է և Տիգրանակիրտ կը բնակէր, և յետոյ, 1895ի գէպքերէն վերջ, Պաշտաս

փոխադրեց իր տանը, կը հոգար և կը վճարէր Տէր Թա-  
ղէտին տարեկանը, և այս կրօնաւորը հաստատարար  
կը շարունակէր իր պաշտօնը իր անապատական մի  
բարի հովիւ:

12) Տերախմ.— Այս գաւառը Անտի Տարոս լեռնա-  
շքի թային մէջ կ'ընկնայ, Եփրատի, Մուրատի և Գլի Սուրի  
միջև: Ունի հետեւեալ վեց գաւառակները.

- 1.— Օվաճըզ, 2.— Գուզիճան, 3.— Մազկերա (Մեծ-
- կերա), 4.— Գըլըլ Բիլիսէ [Կարմիր Եկեղեցի], 5.— Փախ
- և 6.— Գօղաթ որ կեդրոնն է գաւառին:

Տէրախմ անուանական կերպով սկսաւ հզարակիկ  
թիւրք իշխանութեան 1848էն ի վեր (Տաճկաց 1264  
թուին) Առաջին գաղմագամութեան, զոր տեղայնք «միւ-  
սալիմ» կը կոչէին, կեդրոնն եղաւ Զէրէսիկ գիւղը ի Օվաճըզ:

Գօղաթ նշանակուեցաւ կեդրոն Տէրախմի 1881ին, և  
բարձրագու վիլայէթի աստիճանին Առաջին վալին նշա-  
նակուեցաւ Տէրախմի քուրս պէյ մը Ֆիքրի փաշա անու-  
նով: Այս և ասոր յաջորդ երկու վալիները իշխեցին եր-  
կուքական տարի միայն թիւրք իշխանութիւնը շուտով  
ձանձրացաւ և յուսահատեցաւ Տէրախմի այս անկուտի և  
փորձանաւոր ժողովրդին անհասնում խնդիրներէն և  
1886ին (տաճկաց 1303 թուին) միութեսարըֆութեան վե-  
րածեալ կցեց Սարըբըզի վիլայէթին, որ այլևս կոչուե-  
ցաւ Մամուրէթ իւլ Ալիզ վիլայէթիս Սակայն և այնպէս  
Տէրախմ երբեք գլուխ չի ծնեց թիւրք յօտի և կ'ընկեր  
իշխանութեան, ու միշտ փորձանք եղաւ անոր գլխուն:

Տէրախմ Մեծ Հայքի մէջ հայութեան կրօնական վա-  
սարանը եղած ըլլալ կը թուի ժամանակին, զուցէ և ոչ  
մէկ տեղ ասոր չաի ըստմաթիւ վանքեր ու կրօնական  
հաստատութիւններ տնեցեր է: Տէրախմի 26 վանքերէն  
քանի մը հատին անունները միայն յիշատակենք.

Ա. — Մուրք Դրեզոր Լուսաւորչայ թուանը թոռ  
Մեծն Ներսէս Հայրապետին — Պարթեւալուոց — դամ-

բարանը և վանքը յոչն Քի գիւղին մօտ, լերան ստորան է՝  
Բ. — Սուրբ Կիրակոս վանքը Քուր (Քար) գիւղի  
գլուխը կը գտնուի։

Գ. — Սուրբ Գէորգ վանքը ի Երկնա գիւղ։

Դ. — Չարչարանաց Լուսաւորչայ վանքը ի Մրճան  
Պօղաղը, որուն ներսն է Ս. Հայրապետին խոր վիւսպը։  
Ե. Սուրբ Նիկողոս վանքը՝ ի Բըթառաձա։

Զ. — Սուրբ Պօղոս՝ ի Չախումուն։

Է. — Կարճիր վանք՝ ի Կարմիր գիւղ։

Ը. — Շօխայ վանք՝ ի Շօխայ գիւղ։

Թ. — Մեծն Լուսաւորչայ վանք՝ Սեպուհ լերան ստորադը։

Ժ. — Սուրբ Լոյս վանք\* Սըբ-Լուս լերան զաղաթը  
և Էն և Էն, ինչ որ կը ցուցնէ թէ պատկառելի թիւով հա-  
յութիւն մը կար ի Տէրսի՛՛՛ մամանակին։

Շատեր կը կարծեն որ Տէրսիմը ըլլայ Հայ Պերզան  
տոհմը։ Ես կը թողում որ աւելի կարող հեղինակութիւն  
ունեցողներ սաղացուցանեն այս պարագան զօրաւոր և շօ-  
շափելի փաստերով, ես կը բաւականանամ նշանակելու հոս  
թէ զրքոյիլին հեղինակը անձամբ տեսած է Հայկական Ար-  
քունի հին մեհաքանայ գրոջակ մը ու թագ մը, զորս ու-  
րախութեան արցունքով համբարած է։ Այդ ամենամեծ ու  
թանկագին գանձերը կը պահուին Տէրսի՛՛՛ թիւրտ զօրա-  
ւոր և ազդեցիկ պետերէն մէկին քով։

13. — Խալդայ. — Հայ ամենամեծ, զօրաւոր և բազ-  
մամարդ աշիրէթն է ներկայիս, որ յաջողեր է իր գոյու-  
թիւնը պահել իր իսկ քաջութեան, և հետանա ու  
խոհեմ պետերուն՝ Մէլիք Մահաջաի Գալօյէնցի (Գալուսա-  
կան)՝ իմաստուն և ռամկավար կառավարութեան շնորհիւ։  
Յիշենք թէ, 1830էն 1850, քսան տարուայ փոքր

\* Սուրբ Լոյս լեւը, որուն վրայ կառուցուած է Ս.  
Լոյս վանքը, Քիւրտերը կը կոչեն «Սըբ-Լուս» տաղ,  
աշխարհացոյցին մէջ ալ այս է անունը։



չըջանին մէջ կալուցայ աշխրէթը մէկ անգամ Շէյխ ձէ-  
լալէտախինի հրոսախոս մըերուն կրօնային մոլիսանդու-  
թեան, և երկու անգամ ալ կեննթարկուի Պօնթիանու  
քիւրտ անգութ և աւաղակարարայ Պէտիրխաններու ար-  
շաւանքին կալուցայի տյս արշաւանքներէն երկուքին ալ  
քաջութեամբ կը զիմադրեն և թէև կ'ազատին մեծ գու-  
հագութիւններով, բայց երբորդ արշաւանքը որ ամենա-  
ծանր կերպով կը ճնշէ վրան և որուն զեկալարն էր  
նայնինքն Ազախնէր, ելլալով Ապաուլխան պէկի Տա-  
նուաէր Մէլիք Գալօն՝ դրամով և մեծագին ընծանե-  
րով ու քաջըր լեղուով կը յաջուլի մեծ խնաստութեամբ  
և ճարպիկութեամբ քրդական այդ հեղեղն ու չարիքը  
հեռայնել վրայէն:

Հեղինակը լաւ կը յիշէ որ Ազախնէր, հօրեղբայրը  
Պէտիրխանիի, և վերջնայն որդին Պանրի պէյ մօտաւորա-  
պէս 10,000 Պօնթիանցի քիւրտերու զուլան անցած 1877ին  
նորէն կալուցայ եկան. բայց այս անգամ վերջնայ քարե-  
կամութիւնը շահելով զարձան Ալըքանցուց վրայ զաննք  
կուտպակու համար:

կալուցայ աշխրէթը ունի երեք զլխաւոր ստորաբա-  
ժանութիւններ, որոնք միշտ միարան և զօրավիդ կանգներ  
են իրեն Ասանք են հետեւեալները. — Ա. Մամլեկանցիք կէսը  
հայ և կէսը քիւրտ է) Փէնճինարցիք՝ մեծամասնութեամբ  
քիւրտ, կալուցայիներու անմէն գաշնակից և զինակից են  
աւաջիներուն: Գ) Պամէրացիք կիսով չափ հայ և քիւրտ-  
իբր բնակութեան սահեան ունին Ռախան Սուէն մինչև  
Պօնթիան Սու (կիւտարտիս գետ) Տիգրիսի եզրերով:

կալուցայ աշխրէթին կեդրոնն է Ռախան զիւղը՝ Ռըա-  
վան Սուի (Արղըն գետ) եզրերը: Ռւնի բարձր և քարու-  
կիր բերդ մը (այժմ աւերակ): կալուցայիք սկսան 1870ին  
«Խաւր սն» անուանով սուրբ մը առլ թիւրք լիլխանութեան  
20 տարեկանէն վեր ամեն արուի համար տարեկան 3  
գահեկան և ամէն մէկ ոչխարի համար կէս գահեկան

Յիշենք զիւրերէն մէկ քանին — Խանք, Սիլէխէր, Տուշա, Մրտէսի, Պրմպարըզ, վերի և վարի Սուլաններ, Միլլեքա, Խընսուք, Շըմարիպ, Արէնդ, Զախօրան և ին և ին։ Ամէն զիւր տնի իր պետը, որոնց ամբողջութիւնը կը կազմէ Աշայիրին ծերակայրը՝ նախագահութեամբ տանուաէր Մէլիքի, ուր ամէն խնդիր ու կնճիւղ կ'որոշուի քայարձակ քուէի մեծամասնութեամբ։

Խալզայ աշիրէթէն հաստածներ ու բաժանումներ կան ի շէղիրէ, Սանճար, Ուրֆա և Մարաշ դաւաաներն ու դաւաակները, որոնք ժամանակի փոփոխութեանց ու հոլոլումներու ազդեցութեան տակ հետացած կամ տարագրուած և քրդացած են։ Խալզայ աշիրէթն ալ թէև Հայ՝ բայց միւսներուն պէս կը խօսի միայն քիւրտերէն — Գուրմանճի — լեզուն։ Միայն Ռաւան և Զոր, ուր նախ Ամերիկացի միսիօնարք Ռաւանու մէջ, և յետոյ Միացեալ Ընկերութիւնը գաղտնիք բացին, նոր տրուողը 30 տարեկանէն վար ամենքն ալ հայերէն կը խօսին։

15. — Կան ուրիշ աշիրէթներ ալ, որոնց մէկ մասը հայ և մէկ մասը քիւրտ են։ օրինակ՝ Մուֆարզլին\* Ալի-

\* Մուֆարզլին (Հայերը Նփրկիրա և Մարաիրտայ քաղաք կը կոչէին ի նուազ) Հայկական հին քաղաք մըն է պարսպապատ, որ կը կարծուի շինուած ըլլալ Մեծն Տիգրանի քրոջ Տիգրանուհիի ձեռքով։ Հին աւանդութիւն մը կ'ըսէ թէ Տիգրանուհին իր եղբոր առջև կը պարծենայ շինած ըլլալ պարսպապատ քաղաք մը շատ խոշոր քարերով և կիրով այնքան ամուր որ «ո՛չ մարդ և ո՛չ խոյ Աստուած կարող է փլցնել»։ Բայց Աստուածախախտ Տիգրան կ'ըսէ թէ իր շինած քաղաքը (այժմու Տիգրանակերտ) շինած է պարիսպը կիրով և կրանիթիայ քարերով շատ ամուր և զօրաւոր, «Աստուծո՛վ է զատ մարդ չի կրնար փլցնել»։ Ասոր համար Տիգրանակերտի պարիսպները դեռ կանգուն կը մնան, մինչդեռ Մուֆարզլինի պարիսպը փլած, տակնուվրայ եղած է։

վանի գաւառակին մէջ Ալէյի և Զըսըքա երկու գլխաւոր աշխրէթներ կան, որոնց մէջ 64 գլուզեր կան ամենէն շէն և մեծ, որոնք զուտ Հայ են և որուն հողն ու ջուրը իրենց սեփականութիւնն է: Պըշէրի գաւառակին մէջ ալ կան Սինըքա և Ռէճէպան աշխրէթները, որոնց 25 ամենամեծ ու ու շէն գլուզերու բնակչութիւնը Հայ են և հողն ու ջուրն ալ իրենց հայրենական սեփականութիւնն է: Ասանց մէջն ալ նախ Միացեալ Ընկերութիւնը և ապա Բարեգործական Միութիւնը գաղտցնեն բային, որոնց շնորհիւ նոր սերունդը սկսաւ մայրենի լիզուոն սորվիլ:

Կ'արժէ ըսել որ Յաւելուածիս մէջ յիշուած աշխրէթներէն զատ գրեթէ միւս բոլոր քիւրտ աշխրէթներուն մէջ ալ մեծ թիւով Հայեր կան, որոնց ձեռքն է ամբողջ վաճառականութիւնն ու արհեստները:

Հարկ չկայ ըսել թէ բոլոր հայ քրդախօս աշխրէթներուն մէջ ամէն տեղ կրօնական պաշտամունքը եկեղեցւոյ մէջ և այլուր գրաբար լիզուով կը կատարուի:

Ամիրտիկով՝ ըսենք թէ կրօնքնին և հաւատքնին փոխած հայ աշխրէթները, զորս թուեցինք վերեւ, ունին այնպիսի սովորութիւններ և սուսնաշութիւներ, որոնք պարզ և որոշ կը ցուցնեն և կը յատկանշեն թէ անոնք ծագումով և տոհմային սովորութեամբ Հայ են: օրինակ՝

1. — Ի Տէրտի, Պատըքա, Պէքիրա, Ռէշքօթա, Մամըկա, Ալըքա և ըն աշխրէթներուն մէջ կան մինչև հիմա հետեւեալ անունները. — «Մալա Մըթրան» տուն Եպիտակոպոսի, «Մալա Բէշէ» տուն տէրտիերի կամ երէցի, «մալա Մըջօ» տուն Մկրտիչի, «մալա Գալօ» տուն Գալուստի, «մալա Սըհօ» տուն Սահակի, «մալա Մըքօ» տուն Մեկքանի, «Մալա Միխօ» տուն Միքայէլի, «մալա Սըգօ» տուն Սարգիսի, «Մալա Օնօ» տուն Օնանու, «մալա Թըխօ» տուն Թուխմանի, «մալա Ֆըլլա» տուն քրիստոնէի, «մալա Սըմօ» տուն Սիմօնի և ըն և ըն:

2. — Կիները իրենց խմորը կը խաչանշեն որ շուտ

Թթուի կամ երբ օրհնութի՝ (թթուի) դիտոյութի բան մը որ միայն Հայերու սովորութիւնն է ի Հայաստան կիներէն շատեր և նոյնիսկ էրիկ մարդիկիներէն ամանք, արեւածաղին երեսնին կը խաչակնքեն «Սօս Քրիստոս» ըսելով, նշան՝ փսփ քիզ Յիսուս Քրիստոս ըսելու:

3.— Լուսնի լրեան առ հասարակ, և երբեմն ալ լուսինը նորելու ատեն, երախաները, որ անհասարակ կ'ազդուին, կը տկարանան և թարթիչները կը դուգնան, քիւրս մայրը՝ ինչպէս տեսած և վարժուած է ժամանակին՝ երախային ճակատը, կուրծքը և կոնակը սև մուրով կը խաչանչէ: Բան մը որ դուռ ալզային նախապաշարու մըն է ի Հայս մինչև հիմա կը հաւատան թէ այսպէսով երախան չար աչքէ «նազար» է կ'ազատի և չար դուր կը փախի:

4.— Նոր տարիին, զոր «լօլէ» կը կոչեն, կէս գիշերի այն վայրկեանին՝ երբ նոր տարին պիտի յաջորդէ հինին, սովորութիւն է երթալ ալբիւրը կամ գետը լողնալ հետեւալ երկու նախապաշարալ զգացումներով: Նախ կը հաւատան որ բարին Աստուած մէկ վայրկեանի մէջ օսկի կը վազցնէ ջուրին սեղ, ուստի զայն հաւաքել կ'ուզեն. երկրորդ՝ ամբողջ տարին մաքուր մնալու նախապաշարու մըն ու աւանդութիւնը, բան մը որ դարձեալ ալզային սովորութիւն է ի Հայս՝ մինչև հիմա:

5) Յարութեան Ս. Չատկին կարմիր հաւկիթ կը ներկեն ու հաւկիթ կը խաչան. բան մը որ դուռ քրիստոնէական սովորութիւն է և գործադրելի իրենց յարեան Հայերուն մէջ:

6.— Ո՛չ միայն Յուելուածիս մէջ նշանակուած աշիբէթները, այլ նաև Թերբու և Ներիպ մեծ ու բազմամարդ Չազա աշայիրները մինչև հիմա իսկ ջրաբլի ցոբենին կ'ըսեն «ջրօս», ալբանոցին «աղբին», զինիի հընձանին՝ «հեծան», ինչ որ դուռ հայկական բառեր են:

7.— Այս քիւրս աշիբէթները մեծ յարգ կուտան:

հայ ուխտատեղիներուն, մասնաւանդ Մշոյ Սուրբ Կարապետին, զոր կը կոչեն «Տէրա-Չէնկէլլի» (եկեղեցի գանդակաւոր) և «Խանա-փութըքէ», ուր ուխտի կ'երթան երկրորդ հաւատքով և ընծաներով՝ Հայերու հետ միասին Սուրբ Կարապետի լարախաղացները, որ Բիւրսեթէն կը կոչուին «Փալ աուանէ խանս փութըքէ», տարին մէկ անգամ ման կուզան թէ՛ ի Հայս և թէ՛ ի քիւրտ աշխրէթները՝ վերջինները հաւատարապէս հիացող են «Մուրատա աուր» Սուրբ Կարապետի հրաշագործ կարողութեան վրայ, որ կ'օժտէ և կարողութիւն կուտայ այս փալ աուաններու այդպէս ճարտարօրէն խալալ պարանին վրայ Բիւրտ կինը և լաճը շատ անգամ կ'երգէ «Սըբ Կարապետ» ի հրաշագործ ու մուրատաուր բարիքները ներդրող երգերը՝ Բիւրտ աղջիկը հայ գեղուհի մը պէ՛ս կը հաւատայ և կը խնդրէ որ «Մուրատա աուր Սըբ Կարապետ» իրեն կինճ ու քաջ նշանած մը տայ Եւստիս ալ երգում կ'ընեն «Սըբ Կարապետ» ի անունով։ Երբէք պարապ ետ չեն գրկեր սեւ նուիրակ՝ որոնք պտղի ժողկելու կ'ելլեն սեւ վանքի, ուխտատեղւոյ, այլ մասնաւանդ «Սըբ Կարապետ» ի համար։

Հարկ չկայ թախախիլ և պրոպանէ թանգարաններն և հաւաքել գարաւոր աւանդութիւններն, զի պատմութիւնը կը կրկնէ ինքզինքը շարունակ Ծակտին թարմ են ամենուս յիշողութեան մէջ. 1895 ի հայկական վեց վիլայէթներու ջարդերը, յորում միայն Հալէպի վիլայէթին մէջ շատ մը զեւզեր ու դաւառակներ՝ ի մասնաւորի Պիլէճիկի ամբողջ Հայութիւնը անարկուելով թիւրք գազանութենէն և ջարդի քամենելի սարսուռէն, կրօնախոսեղան Անոնք ասկայն ամենքն ալ (հակառակ որ շատեր թլիսատուած իսկ էին) 1896 ին վերստին մայր եկեղեցւոյ գիրկը դարձան՝ պաշտպանութիւն գանկով յանձին Մրֆիամօրխի, խորհրդական Պուլոյ Անզլ. գեապանատան, որ փութապած էր պէտք եղած Զեւմաներով Տիգրասակերս վիլայէթին մէջ ալ շուրջ 30,000 Հայեր նայն

անաւոր պատճառներով կրօնափոխ եղած էին թէև, բայց ամենքն ալ նոյն ժամանակ, 1896ին, վերադարձան իրենց լոյս հաւատին, շնորհիւ Տիգրանակերտի Անգլ. հիւպատոսարանի կողմէն վերայէլը չբջշղ միտիօնին՝ որուն նախագահն էր գրքիս հեղինակը։ Հիւպատոսարանը Պոլսէն ստացած էր Ֆերմաններ՝ անոնք ապահովութիւն կուտային սարսափահար ժողովուրդին։ Այլ միևնոյն բանը կրկնուեցաւ այն տուն, գրեթէ ամբողջ վեց վիլայէթներուն մէջ ալ։

Հա՛րկ է յիշել 1914—18 աշխարհաստան մեծ պատերազմի թո՛հ ու բո՛հին մէջ թուրքիա ըստեւ զժողովքին անաւոր վիճակը, որ զժրագղաբար տակաւին սպասուած խաղաղութիւնն ու ապահովութիւնը չստացաւ, ու տառապիւլ Հայութեան բեկորները գեւ ա՛ն ու սարսափի տակ կ'ապրին, մէկ մասը տակաւին հաւատափոխ և իր դահիճին ձիւքը... Ու եթէ փոքր և տկար աշգերու պաշտպան Գաշնակիցներու վախն ալ չըլլար, այդ մնացած Հայութիւնը եւս շատոնց փճացած պիտի ըլլար անխիչ թիւրքերու մարդակիր ծրագրին ի հետևութիւնս...

8.— Տէրփոյններէն զատ վերը յիշուած ուրիշ քիւրտ աշիրէթներէն մէկուն պետերէն պէյի մը քով եւս գրքիս հեղինակը տեսած և համբուրած է Բագրատունեաց արքունիքի թագն ու մետաքսեայ գրօշակը, զորս ունենալու համար առաջարկեց հարխրաւոր ոսկիներ, սակայն մերժուեցաւ զժրագղաբար այդ քիւրտ կիսալայրենի, բայց խմատուն և հեռատես պետէն լսելով հետևեալ մարդարէական խօսքը գեւ քսանեակի մը տարիներ առաջ, «Օր պիտի գայ որ բռնակալութիւնը պիտի կործանի, հարսմարութիւնք պիտի բարձուին եւ կրօնք ազատ պիտի ըլլայ ա՛ն ասեմ այս սուրբ նշանա՛ւ միւսն պիտի կարենամ ապացուցանել քե ես Հայոց Իշխանական սերունդէն եմ, այն ասե՛նն է որ պիտի կարենամ վերստ-

ճանալ իմ հին պապենական իրաւունքս եւ սերը ըլլալ  
անոր ժառանգութեանը»...

Արդ՝ Հայերս որչա՛փ փախուկ եւ ծանր պարտակա-  
նութիւններ ունինք կատարելիք, մանաւանդ ասիէ վերջը  
երբ աւելի՛ խոհեմ, իմաստուն, հեռատես ու չքահայեաց  
ըլլալով՝ օրինակ հանդիսանալու ենք մեր բոլոր հարեւան  
ազգերուն եւ ժողովուրդներուն, որոնցմէ ոմանք արդէն  
զրկաբաց կ'սպասեն զուլումի մէջէն պատեհութեան մը  
զիրենք նկատու համար Մայր Եկեղեցւոյ ու Մայր Հա-  
յաստանին ցանկալի զերկը՝



## ՆԻԹԵՐՈՒ ՑԱՆԿԸ

---

	Էջ
Նախաբան	7
Պատմական	13
Զօրաշարժ, զօրահաւաք և առաքում	18
Պատերազմական նպատակ	18
Վալի ձեւալ պէյ կ'արգիլէ ցոյց մը	20
Վերածնութեան ընկերութիւն մը	20
Շուկային հրկիզումը	21
Երեսփոխան Ֆէյզի պէյ կը խօսի	22
Տնտեսիցութիւն մը պատերազմական նպատակ յանձնախումբի նախաւմբի նախապահին հետ	27
Հազարապետ Մուշթաք պէյի անձնատպանութեան գաղտնիքը	28
Վալի Համիտ պէյ	28
Փախուստ	29
«Ճէլլատ» վալի մը	36
Երեսփոխան Ֆէյզի պէյ և 15,000,000 զահեկանի կաշառքը	36
Միլիտ բշտակը	37
Տիգրանակերտի նահանգին կոտորածին պատասխանատուները	40
Հայերը զինուոր մանիկին տակ	42
«Ամէլէ թապուրը» զործաւորական բանակը	44
Խորհրդաւոր ճամբորդութիւն մը	46
Չերքախալութիւնք և բանտարկութիւնք	48
Հայոց կարեւոր մէկ ծաղօլը	49
Բանտին մէջ տանջանքէ և ծեծէ մեռնողներ	53
«Բարի Սամարացի» մը	56



	Էջ
Քիւրտ աւագա՛լապետ մը	57 ✓
Պէգուանի ժարտիրոսները	59
Տիգրանակերտի խաւաներուն արտակարգ ժողովն ու սրոշումները	61 ✓
Որոշման գործադրութիւնը.—	
Ա) Մարտինի մէջ, միւթէսարքի Պէտրէտտին, գօմիսէր Մէմաուն և Մարտինի Հայոց Չարդը	65 ✓
Բ) Տիգրանակերտի նահանգին միւս գաւառներուն, գաւառակներուն և զիւղախումբերուն մէջ	68
Վ) Տիգրանակերտի քաղաքին մէջ	70
ողջապահական քննիչ Տօքթ. Իսմայիլ պէյի աքսորուիլը	78
չրանակերտի ինքնապաշտպանները,	80 ✓
իւլի Ա. քիւղիակապուս մը և սրտաւին մամը՝ Տիրամօր	82
երման հրէշ հրամանատար մը	86 ✓
չրանակերտի նահանգին Հայոց կորուստը	87 ✓
սկացութիւն	88
նահատակներու և վերադրողներու	95 ✓
սլուած	111 ✓

Վ Ր Ի Պ Ա Կ

Էջ		Տող	Սլոալ	Ուղիղ
1			Նահանգի	Նահանգին
5			Նահանգի	Նահանգին
19	վերէն	16	Մւ	Ու
24	»	8	ու ե երկիրը	ու երկիրը
24	»	16	կորսնցուցած	կորսնցուցած
30	»	4	անգլխական	անգլխական
30	վարէն	1	հետազիր	հետազիր
31	»	1	Մուսթաղ	Մուսթաղ
32	վերէն	4	խնիրը	խնիրը
32	վարէն	9	խնացուցին	խնացուցին
34	»	14	փրկութեան	փրկութեան
47	»	6	մարտիրոսացած	մարտիրոսացած
86	վերէն	11	նամակ մը զրէ	նամակ մը կը զրէ
87	»	2	խաւմերը	խաւմերը
87	վարէն	4	9,000	91,000
92	վերէն	3	մարդակերպ	մարդակերպ
98	վարէն	9	Հասայէ	Հասայէ
99	վերէն	15	Գարակուլէ	Գարակուլէ



